ՆԵՐԱՌՈՂ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ
2

ՄԵԹՈԴԱԿԱՆ
ՁԵՌՆԱՐԿ



ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՆԵՐԱՌՈՂ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ 2

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Երևան - 2024

ՀՏԴ
ԳՄԴ
Ներառող դասավանդում 2: Մեթոդական ձեռնարկ մանկավարժների համար, Մնացականյան Լ. և ուրիշ.: Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, - Եր.: Էդիթ Պրինտ, 2024 - 107 էջ:

Ձեռնարկը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի N08-Ն հրամանով՝ որպես ուսումնական նյութ:

Ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից:

Մասնագիտական խմբագիր՝ Մնացականյան Լ.Ա.

Գրախոսներ՝
մ.գ.թ., դոցենտ Հ.Վ. Թադևոսյան
մ.գ.թ., դոցենտ Ս.Վ. Մուրադյան

Հեղինակներ՝
Լ. Մնացականյան
Թ. Սարգսյան
Ն. Հակոբյան
Գ. Մսրիկյան
Ա. Առուստամյան
Ի. Աբրահամյան
Մ. Աբրահամյան
Ն. Մեսրոպյան
Մ. Մկրտչյան
Ս. Խաչատրյան
Ա. Մարտիրոսյան

Խմբագիրներ՝ Թ. Սարգսյան, Գ. Մսրիկյան, Հ. Սարգսյան

Համակարգչային ձևավորում՝ Ա. Ստեփանյան, Հ. Դավթյան

Սույն ձեռնարկի նպատակը հանրակրթական դպրոցների ուսուցիչներին և ուսուցչի օգնականներին համընդհանուր ներառական կրթության համատեքստում դասավանդման արդյունավետ ռազմավարությունների ներդրման և կիրառման գործընթացում տեսամեթոդական աջակցության տրամադրումն է: Այն 2023թ-ին հրատարակված համանուն ձեռնարկի տրամաբանական շարունակությունն է:

ISBN

Տպաքանակը՝ 1500 օրինակ

© Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 4

1. ՉԱՓՈՐՈՇՉԱՀԵՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 7

2. ԽԱՉՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ 23

3. ԴՐԱԿԱՆ ԾՆՈՂԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ 30

4. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՈՎՈՐՈՂ - ԾՆՈՂ-ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ, ԿԼՈՐ ՍԵՂԱՆՆԵՐ 51

5. ԹՎԱՅԻՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԻՔՆԵՐ 67

6. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ (ԿԵՆՑԱՂԱՅԻՆ, ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՄԱՆ, ՇՓՄԱՆ, ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ) 84

7. ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 87

8. ՌՈՒԲՐԻԿՆԵՐ 94

9. ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐ 97

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 103

ՆԱԽԱԲԱՆ

2019 թվականից Հայաստանի Հանրապետության հանրակրթական համակարգում համընդհանուր ներառական կրթության անցման համատեքստում, ի թիվս այլ միջոցառումների, մեկնարկեց «Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների ներառական դասավանդման կարողությունների զարգացում» վերապատրաստման և մենթորական աջակցության ծրագիրը: Այդ ծրագրի իրագործման ընթացքում Երևանից և հանրապետության բոլոր մարզերից փուլ առ փուլ ընտրվել են գործող առաջադեմ ուսուցիչներ և հանրակրթության ոլորտում ներգրավված այլ մասնագետներ, որոնք խորքային տեսագործնական վերապատրաստում անցնելուց հետո գործուղվել են հանրակրթական դպրոցներ՝ վերապատրաստելու տեղի ուսուցիչներին և ուսուցչի օգնականներին, ցուցաբերելու շարունակական մենթորական աջակցություն:

2023 թվականին արդեն իսկ հրատարակվել է «Ներառող դասավանդում» մեթոդական ձեռնարկը, որտեղ մանրամասնորեն ներկայացվել են «Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների ներառական դասավանդման կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակներում իրականացված վերապատրաստումների թեմաները, նպատակները և խնդիրները: Խորքային անդրադարձ է կատարվել մոդուլային ծրագրի բաղադրիչների բովանդակությանը՝ սկսած ներառական կրթության փաստահեն ընկալումից և նյութի ներկայացման ձևերի բազմազանությունից մինչև դասի պլանավորում, ուսումնառության համընդհանուր ձևավորում, դասարանի և վարքագծի կառավարում և այլն:

«Ներառող դասավանդում 2» մեթոդական ձեռնարկը բաղկացած է 9 բաժիններից, որոնցից յուրաքանչյուրը վերաբերում է հանրակրթության առանձին բնագավառների: «Չափորոշչահեն կրթական կարողունակություններ» բաժնում ներկայացված են Հանրակրթության պետական չափորոշչի (ՀՊՉ) առանձնահատկությունները, մասնավորապես շեշտադրվում է չափորոշչի հիմքում ընկած 8 առանցքային կարողունակությունների կարևորությունը: «Խաչվող հասկացություններ կամ ընդհանրական գաղափարներ» խորագիրը կրող բաժինը ևս վերաբերում է ՀՊՉ-ին: Խաչվող հասկացություններն առանցքային գաղափարներ են, որոնք, ընդհանրական լինելով տարբեր

գիտությունների համար, սովորողներին օգնում են միավորել տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքները և աշխարհի մասին ձևավորել ամբողջական պատկերացում: Դրանք պետք է կարևորվեն և ուշադրության արժանանան կրթական բոլոր աստիճաններում, բոլոր առարկաների ուսումնառության ժամանակ: «Դրական ծնողավարություն» բաժինը վերաբերում է ծնողավարման ժամանակակից հմտություններին: Արդի աշխարհին առավել բնութագրական են արագ փոփոխությունները, ինչի արդյունքում փոխվում են նաև երեխաների առաջնահերթությունները և ակնկալիքները: Այս բաժինը գերազանցապես վերաբերում է ծնողների ներգրավվածությունը խրախուսող, մասնակցայնության կարևորությունն ընդգծող ծնողավարական մեթոդների ներկայացմանը: «Կրթական գործընթացի մասնակիցների արդյունավետ համագործակցություն, սովորող-ծնող-դասավանդող քննարկումներ, կլոր սեղաններ» խորագրի բովանդակությունն անդրադառնում է երեխաների կրթության մեջ ներգրավվածություն ունեցող բոլոր կողմերի համագործակցությանը: Հենց այդ փոխգործակցության շնորհիվ է, որ հնարավոր է դառնում սովորողին առնչվող տարատեսակ խնդիրներին օպերատիվ կերպով արձագանքելը, կառուցողական քննարկումների շնորհիվ լավագույն լուծումներ գտնելը: «Թվային գրագիտություն, ուսումնական ծրագրերի հարմարեցումներ» բաժնում ներկայացված է թվային գործիքակազմը ուսումնական գործընթացում ներառելու կարևորությանը: Առաջարկվում են բազմաթիվ մեթոդներ, հնարներ և գործիքներ, որոնք օգնում են յուրացնել ուսումնական նյութը և ունեն ուսումնաօժանդակ նշանակություն: Դասապրոցեսը հետաքրքիր և արդյունավետ դարձնելու առումով այդ գործիքները երբեմն անհրաժեշտ, նույնիսկ անփոխարինելի կարելի է համարել՝ մանավանդ հաշվի առնելով թվային տեխնոլոգիաների զարգացման տեմպերն ու միտումները: «Սոցիալական հմտությունների զարգացումը (կենցաղային, ինքնասպասարկման, շփման, հաղորդակցման հմտություններ)» բաժնում ընդգծվում է երեխաների սոցիալական հմտությունները զարգացնելու կարևորությունը: Այս առումով առավել զգայուն է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող

սովորողների, հատկապես 3-րդ և 4-րդ աստիճանի աջակցության կարիք ունեցող երեխաների հետ իրականացվող աշխատանքը: Նման դեպքերում հաճախ առաջանային է դառնում պարզագույն կենցաղային կամ ինքասպասարկման հմտություններ ուսուցանելը, և հաջողություն կամ մեծ առաջընթաց կարող է համարվել անգամ առաջին հայացքից փոքր և աննշան թվացող ձեռքբերումը: «Ուսուցչի մասնագիտական զարգացման պլանավորում և ինքնավերլուծություն» խորագրով բաժինը նվիրված է մանկավարժների մասնագիտամեթոդական զարգացման և քննադատական մտածողության կարևորությունն ընդգծելուն: Ժամանակակից ուսուցչի շարունակական զարգացման համար առանցքային դեր և նշանակություն ունեն տարատեսակ մեթոդներին և հնարներին տիրապետելը, ինչպես մասնագիտական, այնպես էլ ընդհանուր մանկավարժության թեմաներով վերապատրաստումներին, կլոր սեղան-քննարկումներին պարբերաբար մասնակցելը:

Ձեռնարկը եզրափակում են ռուբրիկներին և դասալսումներին վերաբերող բաժինները: Տարատեսակ ռուբրիկները կարող են մեծապես նպաստել ինչպես նոր նյութի մատուցման արդյունավետության բարձրացմանը, այնպես էլ գնահատման գործընթացն առավել անաչառ և օբյեկտիվ դարձնելուն: Ինչ վերաբերում է դասալսումներին, ապա կան բազմաթիվ սկզբունքներ և նորմեր, որոնք անհրաժեշտ է պահպանել դասալսումներ կատարելիս: Խոսքը մասնավորապես վերաբերում է օբյեկտիվությանը և արդյունավետ հետադարձ կապի ապահովմանը:

1 ՉԱՓՈՐՈՇՉԱՀԵՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես գիտեք, 2023-2024 ուստարվանից Հանրակրթության պետական նոր չափորոշիչը ներդրվեց ՀՀ բոլոր դպրոցներում (2-րդ, 5-րդ, 7-րդ դասարաններում)՝ Տավուշի մարզում 2021-2022 ուստարում իրականացված փորձարկումից հետո: Հետևաբար այսօր ուսուցիչների համար առաջնահերթ անհրաժեշտություն է ի մի բերել նոր չափորոշչի էական պահանջներն ու առանձնահատկությունները, որոնք դասակարգվում են 3 ուղղություններով.

- կարողունակություններ, որոնք պետք է ապահովել յուրաքանչյուր աստիճանում,
- հասկացությունների վրա հիմնված ուսումնառություն, ինչն արտահայտվում է բոլոր առարկաների դասաժամերին «խաչվող հասկացություններ» կատեգորիայի ապահովմամբ,
- գնահատում, ինչը նոր չափորոշչում ներկայացված է հայտորոշիչ, ձևավորող, ամփոփիչ տեսակներով (այս թեման նախորդ ձեռնարկում արծարծվել է, այս բաժնում դրան չենք անդրադառնա):

Նոր չափորոշչի մասին խոսելիս բազմիցս շեշտվում է, որ կրթական նոր քաղաքականության բովանդակության հիմքում կարողունակահեն մոտեցումն է: Ի՞նչ է դա նշանակում. ուսուցիչը դասավանդման ընթացքում պետք է ուսումնական գործընթացը կազմակերպի այնպես, որ սովորողի ուսումնառության ընթացքում ձեռք բերված գիտելիքները, ձևավորված կարողությունները, հմտությունները, արժեքներն ու դիրքորոշումները հնարավորինս կիրառվեն առօրյա կյանքում: Կարողունակությունները, որոնք պետք է ձևավորվեն և կատարելագործվեն այդ գործընթացում, ըստ նոր չափորոշչի 8-ն են.

1) լեզվական գրագիտություն և կարողունակություն,

2) սովորել սովորելու կարողունակություն,

3) ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն,

4) ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն,

5) թվային և մեդիա կարողունակություն,

6) մշակութային կարողունակություն,

7) մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն,

8) տնտեսական կարողունակություն:

Կարողունակությունը ընդհանրապես, և այս 8 կարողունակությունների ձևավորումը մասնավորապես, չնայած հանրակրթությամբ ապահովելու տեսլականում են, չի կարելի համարել վերջնականորեն ձևավորված արդյունք: Կարողունակության ձևավորումը շարունակական գործընթաց է, որը սկիզբ է առնում վաղ մանկությունից և շարունակվում ամբողջ կյանքի ընթացքում: Անդրադառնանք այդ կարողունակություններին գործնական մակարդակում:

1) Լեզվական գրագիտություն և կարողունակություն

Բացի այն, որ մայրենի լեզուն ինքնաճանաչման հիմքն է, բանավոր և գրավոր գրագետ խոսքով հաղորդակցվելու նախապայմանը, դրա վրա են հիմնվում նաև ուսումնառության բոլոր բնագավառները, ընդհանուր գրագիտության հիմքերը, հասարակական և անձնային շփումներն ու հարաբերությունները: Հետևաբար «Հայոց լեզու» առարկան իր բոլոր բաժիններով նպաստում է գրագետ խոսքի կառուցմանը: Այս առումով օրինակներ թվարկելն ավելորդ է, քանի որ հայերենի բոլոր բաժիններն ուսուցանվում են հենց այս առարկայի ընթացքում: Բայց որոշակի իրավիճակներում սովորողը դժվարանում է բանավոր արտահայտել իր մտքերը, համոզիչ ներկայացնել իր տեսակետը, գրավոր հմտությունները, նրա գիտելիքը մնում է ակադեմիական մակարդակում. սովորողը ոչ միայն չի կարողանում ինքնուրույն դիմում գրել, կապակցված խոսք շարադրել, այլև դժվարանում է նույնիսկ գրավոր աշխատանքի տիտղոսաթերթի վրա իր անուն-ազգանունը, դպրոցի անունը ճիշտ նշել: Նշանակում է՝ այս և մյուս առարկաների շրջանակներում ուսուցիչը պետք է ապահովի սովորողի գրագիտության այնպիսի մակարդակ, որը իրատեսական է կյանքում կիրառելիության տեսանկյունից, ոչ թե բավարարվի ակադեմիական սերտման վերջնարդյունքով: Օրինակ՝ մաթեմատիկայի դասաժամին ուսուցիչը պետք է ոչ թե սահմանափակվի առարկայական վերջնարդյունքներն ապահովելով, այլև՝ ուշադրություն դարձնի սովորողի կարդալու, գրելու կարողություններին. եթե սովորողը չկարողանա կարդալ և ընկալել կարդացածը, նա չի կարողանա կարդալ և լուծել մաթեմատիկական խնդիրները և վարժությունները, հետևաբար կարդալու հմտությունները զարգացնելը բոլոր առարկաների դասաժամերի առաջնային նպատակներից մեկը պետք է լինի:

2) Սովորել սովորելու կարողունակություն

Ինչպես նշեցինք, մայրենի լեզուն բոլոր մյուս բնագավառների, աշխարհայացքի, մտածողության ձևավորման հիմքն է: Սովորողները նախ հայերենով են փնտրում, գտնում, սովորում թե՛ բնագիտական, թե՛ հասարակագիտական գիտելիքներն ու տեղեկատվությունը, մայրենի լեզվի իմացության միջոցով նրանք կարողանում են շատ արագ սովորել մյուս օտար լեզուները:

Բանավոր խոսքի զարգացման ընթացքում օտար լեզուները հիմնվում են հայերենի հիմնական բառաֆոնդի վրա: Քերականական նյութի յուրացման դեպքում՝ նույնպես: Ռուսերենի հոլովները ուսուցանվում են հայերենի հոլովի քերականական կարգի հիման վրա, գոյականի, ածականի, բայի և մյուս խոսքի մասերի վերաբերյալ գիտելիքները նույնպես կառուցվում են հայերենի հիմքով:

Բացի լեզվի՝ վերը նշված հիմնարար ազդեցությունից, այս կարողունակության կարևորությունն այն է, որ սովորողի մոտ պետք է վարժեցման աստիճանի հասցնել որևէ բնագավառի կամ թեմայի մասին դասագրքից դուրս տեղեկություններ գտնելը, սովորելը, համադրելը, վերլուծություններ կատարելը: Սովորողը պետք է դառնա իր չիմացածը ճիշտ գնահատող, դրա ուսումնառությունը ինքնակամ կազմակերպող և իրականացնող անհատ: Նա չպետք է լինի միայն հանձնարարություններ կատարող:

Օրինակ՝ 9-րդ դասարանի գրականության դասընթացին «Մեսրոպ Մաշտոցը և հայ գրերի գյուտը» թեման ուսումնասիրելիս սովորողներին պետք է հանգեցնել այն ինքնավերլուծության, թե արդյո՞ք իրենք տեղեկություններ ունեն Ամիդ և Եդեսիա քաղաքների աշխարհագրական դիրքի, ժամանակակից քարտեզի վրա հարևան երկրների տեղադրության մասին, ըստ այդմ՝ հանձնարարել փնտրել և ուսումնասիրել հին Հայաստանից դրանց հեռավորությունը, ծանոթանալ երկու երկրների աշխարհաքաղաքական հարաբերություններին, մշակութային փոխազդեցություններին:

Իսկ ինչպե՞ս սովորողը պետք է իմանա, որ իր պատկերացումները այս թեմայի մասին թերի են: Նա պետք է սովորի ճիշտ գնահատել իր իմացությունները և լինի նախաձեռնող, ցանկացած թեմայի յուրացումը սկսի այսպիսի հարցադրումից. «Ի՞նչ չգիտեմ և ի՞նչ կարող եմ իմանալ ես, որպեսզի ավելի ընդգրկուն դարձնեմ իմ գիտելիքները այս հարցի շուրջ»:

Նույն դասարանում ուսուցանվող «Արշակ և Շապուհ» հատվածը մղում է աշակերտներին քննել երկու պետությունների միջև հարաբերությունները, պարզել արքունական տոհմի պատմությունը, հասկանալ, թե ինչու էր Արշակն ասում, որ իրենց տերերի գլխին արքա են դարձել, պատմական ինչ իրադարձություններ են ընկած դրա հիմքում: Այդ հատվածը հուշում է նաև թեմայից դուրս ուսումնասիրել և իմանալ այդ դարաշրջանի արքունական վարքուբարքի, կենցաղի, սովորույթների մասին: Սովորողները, այս տարաբնույթ տեղեկություններն ուսումնասիրելով, ձեռք կբերեն նյութը բազմակողմանիորեն դիտարկելու, քննելու, վերլուծելու, նոր մոտեցումներ դրսևորելու կարողունակություն:

Առհասարակ, բոլոր թեմաներն էլ ներառում են բոլոր կարողունակությունների զարգացմանը նպաստելու հնարավորություն:

3) Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն

Կրթական համակարգի, հատկապես ուսուցչի առաջնային դերն է սովորողների մեջ արթնացնել անձնային ինքնագիտակցությունը, մղել նրանց պարզելու, գտնելու «Ո՞վ եմ ես, ի՞նչ առաքելություն ունեմ, ո՞րն է իմ դերն ու ներդրումը համայնքի, հասարակության, երկրի, մարդկային հարաբերությունների մեջ» հարցերի պատասխանները: Եթե ուսուցիչը կարողանում է ուսուցման ընթացքում ձևավորել այս գիտակցության սաղմերը, ուրեմն նա կատարել է իր առաքելությունը և ապահովել մյուս կարողունակությունների զարգացումը ևս, քանի որ ինքնաճանաչողության հակված սովորողն ամբողջ կյանքում փորձելու է բացահայտել իր հնարավորությունները, կատարելագործել իր ներքին ունակությունները, ճանաչել մարդկության նվաճումներն ու ձախողումները, վերլուծական-մետաճանաչողական մտածողության շնորհիվ գնահատելու է իր առավելություններն ու բացթողումները, մշակելու է դրանց բարելավման ուղղությունները, հարգելու և ընդունելու է ուրիշների համոզմունքներն ու առանձնահատկությունները և անընդհատ «նորոգելու է» իր ինքնազարգացման, կատարելագործման ուղիները: Այս կարողունակությունը լավագույնս կարելի է ապահովել ձևավորող գնահատման տեսակներն ու տրամաբանությունը ճիշտ կիրառելու միջոցով: Այդ նպատակով ուսուցիչը դասարանում սկսում է ձևավորել ինքնագնահատում իրականացնելու առողջ միջավայր և աստիճանաբար հասնում

իրական արդյունքի, զուգահեռաբար վերլուծական քայլաշարի միջոցով իրականացվում է փոխադարձ գնահատման աշխատանք: Բերենք մի պարզ օրինակ. սովորողը առաջին անգամ գնահատում է իր ընթերցանությունը գաղտնի, ոչ բացահայտ եղանակով, մի թղթի վրա, ուսուցչի կողմից նախապես տրված բնութագրիչներով, այնուհետև դասընկերներն են գնահատում նույն եղանակով: Եթե ինքնագնահատումը չի համապատասխանում դասընկերների գնահատմանը, ուսուցիչը բարձաձայն վերլուծում է՝ հիմնվելով գնահատման բնութագրիչների վրա, ինչպես օրինակ՝

- Ընթերցում է արտահայտիչ:
- Ընթերցում է առանց ուղղախոսական սխալների:
- Ընթերցում է սահուն:

Բնականաբար, եթե նշված բնութագրիչների առումով եղել են վրիպումներ, ուսուցիչը հիշեցնում է այդ մասին և հորդորում գնահատման ժամանակ դա նկատի ունենալ: Կամ հակառակը. եթե արդյունքում ստացվել է ինքնագնահատման ցածր ցուցանիշ, ուսուցիչը նշում է առավելությունները: Աստիճանաբար թղթի վրա գնահատման եղանակը փոխվում է բանավոր ինքնավերլուծության: Նման աշխատանքից հետո, երբ սովորողի մոտ և նրա շուրջը ձևավորվում է վստահելի և առողջ մթնոլորտ, նա սկսում է վերլուծել իր պատմելու, ընթերցելու կամ խնդիր լուծելու քայլաշարը՝ նշելով իր ուժեղ և թույլ կողմերը: Այս և տարբեր հնարներով ուղեկցվող աշխատանքները սովորողների մոտ զարգացնում են ինքնաճանաչողության և սոցիալական մի շարք կարողունակություններ:

Հետևաբար առարկայի շրջանակում սովորողներին պետք է մղել ինքնավերլուծության և ինքնաճանաչման, սովորեցնել «նայել իրենց ներսը», գտնել իրենց թույլ կողմերը (որպես կանոն՝ սկզբում նրանք նշում են, որ թույլ կողմ չունեն կամ դժվարանում են թվարկել դրանք): Այնուհետև սովորողների հետ աշխատանք է իրականացվում բացթողումները շտկելու արդյունավետ միջոցներ ընտրելու ուղղությամբ: Բացահայտելով իրենց ուժեղ կողմերը՝ սովորողները աշխատում են դրանց զարգացման ուղղությամբ: Այս հմտությունը պետք է ձեռք բերել ոչ միայն ինքնաճանաչման նպատակով, այլև դիմացինի հնարավորություններն իրատեսորեն գնահատելու համար:

4) ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն

Սովորողները նպաստում են ժողովրդավարության, ազատության, բարեվարքության, սոցիալական արդարության և իրավական պետության գաղափարի վրա հենվող հասարակության զարգացմանը: Նրանք ճանաչողության միջոցով ձևավորում են սեր հայրենիքի նկատմամբ, գիտակցում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից բխող ազգային, պետական, հասարակական շահերն ու առաջնահերթությունները տարածաշրջանային և համաշխարհային մակարդակներում: Սովորողներն արժևորում են մարդու կյանքն ու արժանապատվությունը, կարևորում սեփական քաղաքացիական պարտքը, քաղաքացիական մասնակցության մշակույթը՝ որպես ժողովրդավարության կենսունակության հիմք: Նրանք ճանաչում են հասարակական կյանքի մշակութային, պետաիրավական և տնտեսական ոլորտներն ու համակողմանի վերլուծում դրանք, ցուցաբերում նախաձեռնողականություն, ինքնուրույն որոշումներ կայացնելու, դրանք իրագործելու ունակություն և հետևանքների համար պատասխանատու լինելու պատրաստակամություն: Այս կարողունակության շրջանակներում նշված որակական հատկանիշներն ամենակարևորն են մարդ-հասարակություն շղթայի ձևավորման և հասարակության մեջ դրա համամիասնության գիտակցության բարձրացման համար: Այս կարողունակության պակասը կամ գրեթե բացակայությունը թույլ չի տալիս ձևավորել բարձր իրավագիտակից հանրություն և պետություն: Միասին դիտարկենք այս որակները սովորողների շրջանում, ովքեր վաղվա քաղաքացիներն են: Սկսենք ամենահեշտից. բարեվարքությունը հատկանիշ է, որի համար գիտակցական, քննադատական շատ բարձր մակարդակ հարկավոր չէ, ընդամենը՝ երեխան պետք է կարողանա փողոցում, տրանսպորտում, դպրոցում և այլուր իրեն դրսևորել քաղաքավարության սահմաններում: Եթե մտովի անցնենք վերը շարադրված միջավայրերով, կարող ենք հիշել անցանկալի և անքաղաքավարի վարքի դրսևորումների բազմաթիվ դեպքեր: Հետևաբար ուսուցիչը պետք է սկսի նվազագույնից: Քանի որ ուսուցիչը շփվում և ականատես է լինում սովորողների տարատեսակ վարքային դրսևորումների դասարանում, սրճարանում, թանգարանում, ծննդյան տոներին և այլ իրավիճակներում, նա պետք է վեր հանի և կազմի այն վարքականոնների շարքը, որոնց տվյալ դասարանի սովորողները պետք է հետևեն: Հաճախ կարելի է հանդիպել դասարանի մի անկյունում փակցված վարքականոնների, որոնց

գրեթե ոչ ոք չի հետևում, քանի որ ուսուցիչն էլ չի հետևում դրանց կամ հետևողական չէ այդ հարցում: Տարրական դպրոցի ուսուցիչների ուշադրությունը պետք է սևեռված լինի հենց այս որակական հատկանիշի ապահովմանը: Բարեվարքության ձևավորման վրա միայն կարելի է աստիճանաբար կառուցել սովորողի՝ հասարակական շահերն ու առաջնահերթությունները ճանաչելու, դրանք գնահատելու իրավագիտակից մտածողություն: Այս հմտությունների վրա էլ կձևավորվի հասարակական կյանքի մշակութային, պետահիրավական և տնտեսական ոլորտները ճանաչելու և համակողմանի վերլուծելու կարողությունը:

Վերջերս իրականացված մի հետազոտությամբ արձանագրվել էր, որ երիտասարդության շրջանում ամենաքիչ պահանջված որակական հատկանիշը այլասիրությունն է՝ այլ անձանց նկատմամբ հոգատար վերաբերմունքը: Սա արդեն կարմիր գիծ պետք է լինի մեզ համար, որպեսզի սովորողների մեջ ձևավորենք և զարգացնենք մարդ-հասարակություն զարգացման այն օրինաչափությունը, որ ուրիշի զարգացումը հանգեցնելու է նաև սեփական անձի զարգացմանը, և այդ կապը փոխադարձ է: Ասվածից հետևում է, որ նման հմտությունների զարգացումը պետք է իրականացնել և դրան նպաստել բոլոր առարկաների դասաժամերին՝ քայլ առ քայլ պլանավորելով և կառուցելով այս շղթան:

5) Թվային և մեդիա կարողունակություն

Դասական ձևակերպմամբ՝ մեդիագրագիտությունը տեղեկությունները գտնելու, դրանք քննադատորեն վերլուծելու և գնահատելու, մեդիաբովանդակություն ստեղծելու և տարածելու հմտությունների ամբողջություն է: Սակայն սա մեդիայի դրական կողմի մասին է միայն: Այն ունի նաև այլ նպատակներ, որոնցից մեկն էլ ուղղորդումն է. «Մեդիան ուզում է ուղղորդել մեզ»: Մենք կարող ենք կա՛մ հնազանդորեն ուղղորդվել, կա՛մ գիտակցաբար առաջնորդվել: Գաղտնիք չէ, որ մանիպուլյացիաները բավականին արդյունավետորեն գործածվում են թե՛ միջազգային, թե՛ տեղական մեդիադաշտում: Հետևաբար սովորողը պետք է տեղեկացված լինի մեդիայի և՛ դրական, և՛ հնարավոր բացասական ազդեցությունների մասին: Նա պետք է կրթվի որպես մեդիագրագետ:

Այս և բոլոր մյուս կարողունակությունները ձևավորվում են կրթության բովանդակային բաղադրիչներով, որոնք սահմանվում են հանրակրթության պետական չափորոշչով: Դրանք են՝

1) գիտելիք.

2) հմտություն.

3) դիրքորոշում.

4) արժեքային բաղադրիչ:

Հետևաբար՝ մեդիագրագետ սովորողը պետք է տիրապետի այդ կարողունակություններին.

Գիտելիք

- Ստեղծագործաբար և պատասխանատու կերպով կիրառել տեղեկատվական և թվային սարքերը՝ որպես ժամանակակից աշխատանքային գործիքներ, իսկ համացանցը՝ որպես ուսումնական, համագործակցային և աշխատանքային հարթակ:

Հմտություն

- Ընդլայնել սեփական ուսումնառության և փորձառության հնարավորությունները՝ դրսևորելով շարունակական ինքնազարգացման ձգտում,
- քննադատաբար վերլուծել տեղեկատվությունը, հասկանալ մեդիա ուղերձների ստեղծման գործընթացը, տարբերակել կիրառվող մանիպուլյացիաները և քննարկել դրանց նպատակները,
- գնահատել սեփական և ուրիշների կարծիքն ու փաստարկները, վերլուծել պատճառահետևանքային կապերը և կայացնել որոշումներ:

Դիրքորոշում

- Ընկերակցել, դրսևորել բաց և դրական վերաբերմունք այլոց հանդեպ, համագործակցել և հաղորդակցվել տարբեր ձևաչափերով, ակտիվորեն լսել և հարգանքով վերաբերվել այլ մարդկանց տեսակետներին և գաղափարներին,
- կարողանալ հավասարակշռել և ներդաշնակել սեփական զգացմունքները, ցանկությունները, կարիքները, նպատակները, հակումները,

- անկողմնակալ և առանց նախապաշարմունքների վերաբերվել ենթադրություններին, կարծիքներին և արժեքներին, վերլուծել հասանելի տեղեկույթը, ճանաչել, կառուցել և գնահատել փաստարկները:

Արժեք

- Տիրապետել թվային տիրույթում ապահով գործելու կանոններին, պահպանել օնլայն հաղորդակցության էթիկան, տեղյակ լինել անձնական տվյալների գաղտնիության կանոններին և կիրառել դրանք, մեկնաբանել յուրաքանչյուր անձի՝ անձնական տարածք ունենալու իրավունքն ու անհրաժեշտությունը,
- քննարկել գիտատեխնիկական զարգացմանն առնչվող էթիկական հարցեր և ունենալ փաստարկված դիրքորոշում դրանց վերաբերյալ,
- ճանաչել և պահպանել «ակադեմիական ազնվություն» տեղեկատվության աղբյուրներն օգտագործելիս:

6) Մշակութային կարողունակություն

Այս կարողունակության զարգացումը նույնպես իրականացվում է բոլոր առարկաների դասավանդման միջոցով: Օրինակ՝ եթե «Մաթեմատիկա» առարկայի շրջանակում ուսուցիչը ներկայացնում է թվի առաջացման պատմությունը, մշակութային կարողունակությունը զարգացնելու նպատակով նա կարող է անդրադառնալ մաշտոցյան գրերի թվային արժեքին, արաբական, հռոմեական թվերի կիրառման ժամանակաշրջանների պատմությանը, ինչը ներառում է արվեստների, արհեստների, հասարակական-քաղաքական կյանքի հոգևոր և նյութական ժառանգության պատմությունը:

Ուսուցչի խնդիրն է խորացնել աշակերտների հետաքրքրասիրությունն ու մղել նրանց ինքնուրույն ուսումնասիրելու ծրագրային թեմայից դուրս այլ աղբյուրներ, արժևորել հայ և համաշխարհային մշակութային հարստությունները, ձևավորել անձի գեղագիտական ճաշակն ու գրագիտությունը: Ինչպես նկատեցիք, մի կարողունակության ձևավորումը հիմք է դառնում մյուս կարողունակությունների զարգացման համար, այս դեպքում՝ սովորելու կարողությունը հիմք է հանդիսանում մշակութային և մյուս կարողունակությունների համար:

7) Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն
8) Տնտեսական կարողունակություն

Շատ հաճախ վերապատրաստումների ընթացքում այս երկու կարողունակություններն ուսուցիչների կողմից վերագրվել են միայն «Մաթեմատիկա» առարկային: Բայց դա բնավ այդպես չէ: Հասկանալով նոր չափորոշչի տրամաբանությունը՝ պետք է բոլոր առարկաների դասաժամերին զարգացնել վերը նշված 8 կարողունակությունները: «Մաթեմատիկական» բառը լսելիս ակամա այն ասոցացնում ենք միայն վարժություններ և խնդիրներ լուծելու հետ, այնինչ չափորոշիչը պահանջում է ձևավորել և զարգացնել սովորողի քննադատական մտածողությունը, որպեսզի նա կարողանա ընկալել և արդյունավետ կիրառել վերացարկված և ընդհանրացված հասկացությունները, ճանաչել իրականության մեջ դրանց արտացոլումները, բնագիտական մտածողության և աշխատանքի, ինչպես նաև տեխնիկական առաջընթացի միջև եղած փոխադարձ կապը: Գաղտնիք չէ, որ նախորդ սերունդը հայտնվեց տնտեսական նոր գործընթացների մեջ և չկարողացավ բավականաչափ ճկուն լինել տեղի ունեցող փոփոխությունների վայրիվերումներում: Նոր չափորոշիչը միտված է նաև այդ խնդրի լուծմանը. վերջնարդյունքում աշակերտը պետք է կարողանա վերլուծել և գնահատել տնտեսական և հասարակական կարգերը, ճանաչել բնության և հասարակության փոխազդեցությունները, ինչպես նաև կայուն զարգացման ու շրջակա միջավայրի պահպանության գործում գիտակցել սեփական դերն ու պատասխանատվությունը:

Ինչպես արդեն նշվեց, հանրակրթության նոր չափորոշչով սահմանվում են հանրակրթության հիմնական ծրագրերի բովանդակության հետևյալ

բաղադրիչները՝

1) գիտելիք.

2) հմտություն.

3) դիրքորոշում.

4) արժեքային բաղադրիչ:

Այս բաղադրիչները ներառում են այն ամենը, ինչ պետք է ապահովի յուրաքանչյուր առարկայի ուսուցիչ սովորողի ուսումնառության ընթացքում ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի, սովորողի կողմից ուսումնական առարկաների ծրագրերի բովանդակության յուրացման, ինչպես նաև ուսուցման գործընթացում դաստիարակության միջոցով:

1. **Գիտելիքներ**: Սովորողի համար ուսուցիչը պետք է ապահովի գիտելիք և դրա վերլուծական ընկալում, ինչպես օրինակ՝
   - ինքնաճանաչողություն և ինքնաքննադատական ընկալում,
   - լեզվի և հաղորդակցման միջոցների իմացություն և քննադատական ընկալում,
   - գիտելիքներ և աշխարհի քննադատական ընկալում և այլն:
2. **Հմտություններ**: Սովորողը գիտելիքին զուգահեռ պետք է հմտություններ ձեռք բերի ուսումնառության տարբեր աստիճաններում.
   - ինքնուրույն ուսումնառության հմտություններ,
   - վերլուծական և քննադատական մտածողության հմտություններ,
   - լսելու և դիտարկելու հմտություններ,
   - կարեկցանք,
   - ճկունություն և հարմարվողականություն,
   - լեզվական, հաղորդակցական և բազմալեզու հմտություններ,
   - համագործակցելու հմտություններ,
   - հակամարտությունների կարգավորման հմտություններ և այլն:
3. **Դիրքորոշում:** Գիտելիքից և հմտություններից զատ խիստ կարևոր է սովորողի մոտ ձևավորել անաչառ վերաբերմունք ունենալու և արտահայտելու կարողություն.
   - անկանխակալ մոտեցում այլ մշակույթների, համոզմունքների, աշխարհայացքների և սովորույթների նկատմամբ,

- հարգանք,
- քաղաքացիական մտածողություն,
- պատասխանատվություն,
- ինքնակառավարման արդյունավետություն,
- հանդուրժողականություն անորոշ իրավիճակների նկատմամբ և այլն:

4. **Արժեքներ:** Արժեքային համանման մոտեցում ձևավորել բոլոր առարկաների դասաժամերին.
   - արժևորել մարդկային արժանապատվությունը և մարդու իրավունքները,
   - արժևորել մշակութային բազմազանությունը,
   - արժևորել ժողովրդավարությունը, արդարադատությունը, արդարությունը, հավասարությունը և օրենքի գերակայությունը և այլն:

Դիտարկենք այս 4 բաղադրիչները որոշակի առարկաների շրջանակում:

Գիտելիք

«Հայոց լեզու և գրականություն» առարկան՝ որպես կրթության բովանդակության տիրույթ, ապահովում է պատմականորեն մեզ ավանդված լեզվական, գրական գիտելիքի շերտերը տարածության, ժամանակի, պատմության մասին ընդհանուր գիտելիքների համատեքստում: Հետևաբար, որպես գիտելիք՝ այն 1-12-րդ դասարաններում դասավանդվող թեմատիկ բովանդակությունն է:

Օրինակ՝ Սայաթ-Նովայի սիրային տաղերը ուսուցանելիս փորձենք մի հնար, որը կօգնի ավելի մոտեցնել Սայաթ-Նովային ժամանակակից սովորողի առօրյային: Հանձնարարենք, որ սովորողները դուրս գրեն այն տողերը, պատկերները, արտահայտությունները, որոնք հնարավոր է, որ նաև այսօր իրենց տարեկիցները գործածեն սիրո խոստովանություններում, իրենց նախընտրած ֆիլմի հերոսի մենախոսության մեջ կամ մեկ այլ իրավիճակում: Այս փոքրիկ հնարը Սայաթ-Նովային ավելի է մոտեցնում սովորողին, բերում է նրա անձնական դաշտ. սովորողը համեմատելու, համադրելու միջոցով դրսևորում է քննադատական հմտություններ, քանի որ նա պետք է ժամանակակից ըմբռնումները, բառապաշարը, վարքուբարքը համեմատի 18-րդ դարի հետ, այնուհետև եզրահանգում անի և ներկայացնի այսօրվա սովորույթներին, շփման ձևերին

համապատասխան բառերն ու արտահայտությունները: Եթե անգամ Սայաթ-Նովայի տաղերից նա իր միջավայրին ու ճաշակին համապատասխան ոչ մի բառ դուրս չբերի (ինչը քիչ հավանական է), միևնույն է, նա արդեն ուսումնասիրություն է իրականացրել, ձեռք է բերել միջնադարյան տաղերի մասին որոշակի գիտելիքներ՝ միաժամանակ կոփելով մի քանի հմտություններ, արժևորել է սիրո արտահայտման նախկին և ներկա ձևերն ու մոտեցումները:

Հմտություն

Եթե խոսում ենք սովորողի հմտությունները ձևավորելու և զարգացնելու չափորոշչային պահանջի մասին, պետք չէ կարծել, թե ուսուցիչը տասը րոպեի ընթացքում սովորողին փոխանցում է որոշակի գիտելիք, ապա մեկ այլ 10-15 րոպեում զարգացնում որոշակի հմտություն: Իրականում կրթության բովանդակության չորս բաղադրիչն էլ միաժամանակ, համատեղ, դասի նույն համատեքստում իրականացվող և զարգացվող բաղադրիչներ են, և ուսուցիչները այդ մոտեցմամբ պետք է պլանավորեն և իրականացնեն դասը:

Օրինակ՝ հայոց լեզվի դասաժամին այդ բաղադրիչների համախումբն ապահովում է առօրյա կյանքում կիրառվող հիմնարար գրագիտության, մշակութային-քաղաքացիական, գիտական, ինչու ոչ՝ թվային և ֆինանսական գրագիտության հմտություններ: Այն ձևավորում է հաղորդակցական, համագործակցային, ստեղծարար, քննադատական կարողություններ, կերտում համառության, հետաքրքրասիրության, նախաձեռնության, առաջնորդության, սոցիալական և մշակութային իրազեկում, բնավորության առանձնահատկություններ, որոնք օգնում են աշակերտին արագ կողմնորոշվել փոփոխվող միջավայրում: Որքան էլ խրախուսվում է դասի սկզբում ներկայացնել դասի ընթացքը և նպատակը, երբեմն նպատակահարմար է որևէ առաջադրանքի հանպատրաստից հանձնարարումը: Նման հնարի միջոցով սովորողը հայտնվում է իրեն անծանոթ և անսպասելի իրավիճակում և ձևավորում է ինքնակազմակերպման, կողմնորոշման, ժամանակի կառավարման հմտություն:

Դիրքորոշում

Ուսուցչի նպատակն է, ի թիվս վերը նշված բաղադրիչների, ձևավորել անկանխակալ մոտեցում այլ մշակույթների, համոզմունքների, աշխարհայացքների և սովորույթների նկատմամբ, ապահովել անհատական, քաղաքացիական դիրքորոշում:

Օրինակ՝ Դ.Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքն ուսուցանելով՝ հնարավորություն է ընձեռվում դիրքորոշում արտահայտել բոլոր հերոսների գործողությունների նկատմամբ՝ անկախ նրանց սոցիալական դիրքից, ֆիզիկական հնարավորություններից:

Այդ աշխատանքի համար ուսուցիչը շատ քայլեր պետք է ձեռնարկի, ինչպես, օրինակ՝

ա. Թվարկել բայեր, որոնք արտահայտում են մեր դիրքորոշումը որևէ հարցի վերաբերյալ (սովորողները կարող են նշել՝ մոռանալ, կարևորել, ներել, ատել, սիրել և այլն):

բ. Ուսուցիչը գրատախտակին գրում է այն բայերը, որոնցով հնարավոր է պատմվածքում դիրքորոշում արտահայտել:

գ. Գտնել պատմվածքի այն հատվածը, որի մասին հնարավոր է դիրքորոշում հայտնել:

դ. Սահմանված ժամանակահատվածում (5-10 րոպե) «-» կամ «+» նշանով արտահայտել ձեր վերաբերմունքը տվյալ էջում նկարագրված դեպքերի վերաբերյալ:

ե. Հրահանգել սովորողներին «-» կամ «+» նշանները վերածել նախադասությունների. նշել՝ ինչին է համամիտ, ինչին՝ ոչ:

զ. Բերել փաստարկներ. սովորողներին սովորեցնել արտահայտած դիրքորոշման համար բերել փաստարկներ:

Նմանատիպ աշխատանքը սկզբում պետք է իրականացնել տեքստի փոքր հատվածի, անգամ նախադասության հիման վրա, որից հետո քայլ առ քայլ ինքնագնահատման միջոցով անդրադառնալ բոլոր կետերին: Որոշ ժամանակ հետո սովորողները կկարողանան ինքնուրույն կատարել այս աշխատանքը, որը ապահովում է նաև քննադատական մտածողության զարգացման շատ տարրեր:

Ուսուցչի նպատակը պետք է լինի յուրաքանչյուր դասի ընթացքում սովորողի մոտ ձևավորել տեսակետ, դիրքորոշում հայտնելու կարողություն, քանի որ հաճախ սովորողները շարժվում են հասակակիցներից կամ մեդիայից եկող ուղղորդումներով և կորցնում են իրենց անհատականությունը, վերլուծելու առանձնահատկությունը:

Եվս մեկ օրինակ. «Սասնա ծռեր» թեման ուսուցանելիս տրված նախադասությունը մանրամասն քննության առնելու միջոցով հնարավոր է դիրքորոշմանը զուգընթաց ապահովել մի քանի կարողություն ու հմտություն.

«Սանասարը որոշեց առաջինը հիդա խալխի (հասարակ ժողովրդի) տները սարքի, նոր իրենցը»: Այս նախադասությունը կարելի է խմբային քննարկման արժանացնել: Դասարանը կարելի է բաժանել խմբերի և յուրաքանչյուր խմբին առաջադրել որոշակի խնդիր.

Խումբ 1 - Նախադասությունը քննարկել կերպարի բացահայտման տեսանկյունից:

Խումբ 2 - Նկարագրել դեռևս հնագույն ժամանակներում հանրային պարտականության մասին պատկերացումները:

Խումբ 3 - Ներկայացնել ժամանակակից կյանքում նման դիրքորոշում դրսևորելու շահեկան կողմերը:

Բնականաբար այս հարցադրումները կօգնեն աշակերտների մեջ ձևավորել խնդիրը քննարկելու, իր և մյուսների իրավունքները հարգելու, պատասխանատվություն կրելու, անորոշ իրավիճակներում ինքնակառավարման հմտություններ ձևավորելու, սեփական բարեկեցությունը հանրայինի մեջ փոխադարձաբար տեսնելու դիրքորոշում:

Ինչպես նկատեցիք, հանրակրթության նոր փոփոխությունների հիմքում կարողունակություններ ձևավորելու պահանջն է: Ուսումնառության և դաստիարակության գործընթացում ձեռք բերված գիտելիքի, արժեքների, հմտությունների և դիրքորոշումների հիման վրա պետք է ապահովել հանրակրթական տարրական, հիմնական և միջնակարգ ծրագրերով սովորողների ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները:

Արժեքային բաղադրիչ

Արժեքային համակարգը շատ ընդգրկուն հասկացություն է: Փորձենք մեկ օրինակով տեղայնացնել: Մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների, խաղաղության հանդեպ արժեքային ընկալում ձևավորելու համար սովորողը նախ պետք է իմանա դրա կարևորությունը իր և մյուսների համար, որպեսզի պատկերացնի դրա ազդեցությունը իր կյանքի և ուրիշների վրա: Բնականաբար, տարբեր մակարդակներում այս մասին պետք է ներկայացվի ըստ սովորողի տարիքային առանձնահատկության: Ներկայացնենք մի եղանակ, որը հնարավոր է իրականացնել հասարակագիտական առարկաների գրեթե բոլոր

դասաժամերին. սովորողներին բաժանել 5 խմբի, յուրաքանչյուր խմբին տալ մեկ A3 չափի թուղթ, որի վրա խմբի անդամները գրառում են կոնֆլիկտը լուծելու 1 եղանակ՝ խուսափում, փոխզիջում, համագործակցություն և այլն: Նշվածներից ընտրվում է որևէ 5 հասկացություն պարունակող գրառում և ներկայացվում խմբերին: Այնուհետև խմբերի անդամները հերթով մոտենում են թղթերին, գրում կոնֆլիկտի լուծման իրենց եղանակի նկարագրությունը: Այնուհետև խմբերը հերթով ներկայացնում են իրենց տարբերակները: Այս եղանակով հնարավոր է հենց սովորողների միջոցով լուծելի դարձնել ժամանակակից ամենախնդրահարույց երևույթներից մեկը՝ կոնֆլիկտը, ինչի արդյունքում նրանք կտեսնեն, որ յուրաքանչյուր խնդրի լուծում հենց իրենց ձեռքում է: Մարդկային և պետական շատ հարաբերություններ վատանում կամ խզվում են, երբ տեղի չի ունենում նմանատիպ պարզ գործընթաց: Իսկ այս գործընթացի արդյունքում չեն խախտվի մարդու շատ իրավունքներ, այդ թվում՝ այսօր կենսական դարձած՝ խաղաղ ապրելու իրավունքը:

Ինչպես տեսանք՝ Հանրակրթության պետական չափորոշիչը ելնում է կարողունակությունների վրա հիմնված մոտեցումից և սահմանում է շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները՝ ըստ կրթական աստիճանների, որոնց համար առանձնացված են չափորոշչային վերջնարդյունքներ: Ուսուցիչը որպես պետական պատվեր պետք է ապահովի այն վերջնարդյունքները, որոնք ներկայացված են հանրակրթության և առարկայական չափորոշչում:

2 ԽԱՉՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՄ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ

Հանրակրթության պետական նոր չափորոշչով սահմանվող բարեփոխումներից մեկն էլ հասկացությունների վրա հիմնված ուսումնառությունն է, ավելի պարզ ասած՝ սովորողին սովորեցնել աշխարհը դիտարկել մեկ ամբողջականության մեջ բոլոր առարկաների դասաժամերին: Հենց այդ ընդհանրացմանն են ուղղված խաչվող հասկացությունները:

Խաչվող հասկացությունները դեռևս հին աշխարհի փիլիսոփայությունից մարդկությանը ժառանգված ճանաչողական, ընկալողականության առանցքային գաղափարներ են, որոնք ընդհանրական են տարբեր գիտությունների համար և օգնում են սովորողներին միավորել տարբեր առարկաներից ձեռք բերած գիտելիքները աշխարհի մասին մեկ ամբողջական պատկերացման շրջանակներում:

Որպեսզի բոլոր առարկաների դասաժամերին սովորողի մոտ ձևավորվի տարբեր իրերն ու երևույթները մեկ հայացքով դիտարկելու հմտություն, հարկ է, որ բոլոր առարկաներում խաչվող հասկացություններն ընտրվեն ու կիրառվեն իրական կյանքի հետ համադրման համատեքստում:

Այդ նպատակով առաջարկվում է տասներկու առանցքային գաղափար.

1. **օրինաչափություն,**
2. **պատճառ և հետևանք,**
3. **մասշտաբ, համամասնություն, քանակ,**
4. **կառուցվածք և գործառույթ,**
5. **համակարգ և մոդել,**
6. **էներգիա, նյութ,**
7. **կայունություն և փոփոխություն,**
8. **զարգացում,**
9. **անհատ և հարաբերություններ,**
10. **ժամանակ և տարածություն,**
11. **անհատական և մշակութային արժեհամակարգ,**
12. **համաշխարհայնացում:**

Հասկացություն	Նկարագրություն	Օգնող հարցեր
Օրինաչափություն	• Երևույթների միջև օբյեկտիվորեն գոյություն ունեցող պատճառահետևանքային անհրաժեշտ կապեր, փոխադարձ պայմանավորվածություններ: • Որոշակի սկզբունքով կրկնվող երևույթներ հասարակության մեջ: • Մարդու գիտակցությունից դուրս և նրանից անկախ բնության ու հասարակության մեջ տեղի ունեցող օբյեկտիվ գործընթացների արտացոլում ճանաչողության մեջ և գիտելիքների որևէ բնագավառում: Որևէ երևույթի պատմական զարգացման մեջ դրսևորվող (դրսևորված) օրենք և դրա հետևանքը՝ արդյունքը:	Ի՞նչ եք նկատում: Ի՞նչն է օրինաչափ:
Պատճառ և հետևանք	• Յուրաքանչյուր երևույթի՝ անհրաժեշտաբար մեկ այլ երևույթին նախորդելը: • Պատճառահետևանքային փոխազդեցություններ: Պատճառահետևանքային կապերի ուսումնասիրում՝ նոր իրադարձությունները կանխատեսելու և բացատրելու համար:	Ինչպե՞ս տեղի ունեցավ: Ինչո՞ւ տեղի ունեցավ: Ի՞նչը ստիպեց, որ տեղի ունենա: Ի՞նչ պայմաններ էին անհրաժեշտ դրա համար:
Մասշտաբ, համամասնություն, քանակ	• Մասշտաբը որոշակի թվային հարաբերություն է, հարաբերական մեծություն, չափանիշ, չափի աստիճանը: • Համամասնության ու քանակի պատկերացումները սովորողին	Ի՞նչ է, ի՞նչ չափով է, ինչպե՞ս է փոփոխվել ժամանակի ընթացքում:

	կօգնեն հասկանալ իր կատարած աշխատանքի ծավալը, հարկ եղած դեպքերում՝ համեմատություններ, վերլուծություններ կատարել:	
Կառուցվածք և գործառույթ	• «Կառուցվածք» հասկացությունը ներառում է տարրերի միջև եղած համակարգաստեղծ, օրինաչափ կապերի ու հարաբերությունների ամբողջությունը: • Կառուցվածքայնությունը բնութագրվում է նաև կազմակերպվածությամբ և ինքնակազմակերպվածությամբ: • Կառուցվածքը միևնույն խմբին կամ դասին պատկանող օբյեկտների բազմությունն է՝ գոյության ու գործառնության՝ միայն իրենց հատուկ համընդհանուր սկզբունքներով: • Գործառույթը կառուցվածքից բխող գործունեություն է: Փոխվում է կառուցվածքը, փոխվում են նաև դրանից բխող գործառույթները: Կառուցվածքով են պայմանավորված շատ գործառույթներ:	Ի՞նչ է, ինչի՞ համար է, ինչպե՞ս են փոխկապակցված:
Համակարգ և մոդել	• Համակարգը միմյանց հետ հարաբերություններ կամ որոշակի կապեր ունեցող տարրերի բազմություն է, որոնք միասին կազմում են որոշակի ամբողջություն: • Համակարգի միջոցով սովորողը ձևավորում է ընդհանրական	Ինչպիսի՞ն է համակարգը. միասնակա՞ն, թե՞ տրոհվող: Որո՞նք են համակարգի բնորոշ հատկանիշները: Ինչպե՞ս են փոխկապակցված

	պատկերացում նմանություններ ունեցող երևույթների մասին: • Մոդելները համակարգի պարզեցված տարբերակներն են: Համակարգը՝ որպես օբյեկտ, հանդես է գալիս միայն իր տարրերով և դրանց անկրկնելի ու եզակի փոխազդեցությամբ: • Յուրաքանչյուր համակարգ օժտված է կառուցվածքայնությամբ և բաղկացած է կոնկրետ քանակությամբ տարրերից: Համակարգին հատուկ է որոշակի կայունություն և հարաբերական ինքնուրույնություն, որով հանդես է գալիս ավելի մեծ համակարգի շրջանակում՝ որպես ենթահամակարգ:	համակարգն ու մոդելը:
Էներգիա, նյութ	• Այն ամենը, ինչ տեսնում ենք մեր շրջապատում, **նյութ է՝** կենդանի կամ անկենդան: • Կենդանի նյութերը մշտապես ինքնանորոգվում են, իսկ անկենդանները՝ միայն փոփոխվում արտաքին ուժի ազդեցությամբ: • Այն ամենը, ինչ մեզ շրջապատում է, նյութ է կամ էներգիա: • Էներգիան նյութի հիմնական հատկություններից մեկն է, նրա շարժման չափը, շարժման հզորությունը՝ ուժը (ջերմության, լույսի, էլեկտրականության, մեխանիկական շարժման ձևով):	Ի՞նչ է նյութը և քանի՞ տեսակի է լինում: Ի՞նչ է էներգիան և ի՞նչ կապի մեջ է նյութի հետ:

Կայունություն և փոփոխություն	• Կայունությունն ու փոփոխությունը բոլոր համակարգերի բնութագրիչներն են: Համակարգերը կայուն են, երբ բոլոր մուտքերն ու ելքերը հավասարակշռված են, որպեսզի ներքին գործընթացները կարողանան շարունակվել կայուն վիճակում: • Փոփոխություն տեղի է ունենում, երբ մուտքերն ու ելքերը հավասարակշռված չեն. այդ դեպքում առաջանում է կայունության փոփոխություն: • Փոփոխությունը կարող է գրանցել առաջընթաց կամ հետընթաց:	
Զարգացում	• Զարգացումը շարժման բարձրագույն տեսակ է, բնորոշվում է պարզից բարդ օրինաչափ անցումով: • Զարգացումը այնպիսի փոփոխություն է, որի հետևանքով առաջանում է որակական առաջադիմության նոր վիճակ:	Ի՞նչ է զարգացումը: Արդյո՞ք ամեն փոփոխություն զարգացում է:
Անհատ և հարաբերությունները	• Անհատի կյանքը, համոզմունքները, արժեհամակարգը, անձնական, ֆիզիկական, մտավոր, սոցիալական, հոգևոր առողջությունը, մարդկային փոխհարաբերությունները ընտանիքում, ընկերական շրջապատում, համայնքում: • Անհատն այն մարդն է, որը բնութագրվում է տարբերակիչ, միայն իրեն հատուկ	Ո՞վ եմ ես, ո՞վ ենք մենք:

	հատկանիշների համալիրով, որի մեջ զարգացած է անհատականությունը, ինքնուրույնությունը, որը ակտիվորեն ճանաչում և վերափոխում է իրականությունը, իր ուրույն ներդրումն ունի հասարակության զարգացման առաջընթացում, հաջողությամբ դրսևորվում է գործունեության տարբեր ոլորտներում:	Ո՞վ է պատմական անհատը, ո՞րն է նրա բնութագիրը:
Ժամանակ և տարածություն	• Տարածությունն ու ժամանակը՝ որպես գոյության հիմնական բնութագրիչներ: • Գոյությունը լիարժեք ընկալելու համար անհրաժեշտ է «մոտենալ» տարածությանը և ժամանակին: Տարբեր մարդկանց կենցաղը, նրանց պատմությունները, ճանապարհորդությունները, մարդկության պատմության շրջադարձային կետերը, հայտնագործությունները, գյուտերը, ինչպես նաև անհատների և քաղաքակրթությունների միջև հարաբերությունները, դրանց փոխկապակցվածությունը տվյալ անձի, ազգի և մարդկության տեսանկյունից:	Որտե՞ղ և ե՞րբ:
Անհատական և մշակութային արժեհամակարգ	• Գաղափարների, համոզմունքների, արժեքների, զգացողությունների, մշակութային դրսևորումների արժևորում: • Միջմշակութային արժեքների առնչությունների բացահայտում:	Ի՞նչ է ստեղծարարությունը: Ինչպե՞ս է մարդը դառնում ստեղծարար: Որո՞նք են մշակույթն արժևորելու ուղիները:

	• Ստեղծարարություն:	Որքանո՞վ է մշակույթը կարևոր անհատի կյանքում:
Համաշխարհայնացում	• Համաշխարհային քաղաքակրթության տնտեսական, քաղաքական, մշակութային զարգացման ժամանակակից փուլ, միասնական աշխարհի կայացման օբյեկտիվ գործընթաց: • Մարդու ստեղծած համակարգերի և համայնքների փոխկապակցվածություն, համաշխարհային և տեղական գործընթացների փոխհարաբերություններ, հնարավորություններ, որոշումների ազդեցությունը մարդկության և շրջակա միջավայրի վրա:	Ինչպե՞ս է աշխարհում ամեն ինչ կապակցված: Որո՞նք են համաշխարհայնացման առավելություններն ու մարտահրավերները:

3 ԴՐԱԿԱՆ ԾՆՈՂԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Կրթական նպատակների արդյունավետ իրականացման համար ընտանիքի և դպրոցի միջև համագործակցությունը կարևորագույն պայման է: Կրթական արդյունավետ գործընթացի ներդրման համար կարևորվում է սոցիալական փոխգործուն համակարգը դպրոցի, սովորողների և նրանց ծնողների միջև: Հետևաբար շատ կարևոր է ընտանիքի և ծնողների դերը կրթական գործընթացում:

Ընտանիքը գործում է առաջին հերթին որպես ուսումնական գործընթացի սուբյեկտ՝ ազդելով երեխայի անձի ձևավորման, նրա կրթական կարիքների վրա, և երկրորդ՝ որպես կրթական ծառայությունների պատշաճ իրականացման պահանջատեր:

Կրթության և դաստիարակության գործընթացի հաջողությունը էականորեն կախված է ուսուցչի և ծնողների համատեղ ջանքերից: Միայն այդ դեպքում կարելի է ակնկալել ցանկալի արդյունք: Արդյունավետ համագործակցության համար շատ կարևոր է տվյալ իրավիճի համար լավագույն ուղիներ փնտրելը և գտնելը:

Կրթական նոր չափորոշիչների ներդրման համատեքստում ուսուցիչ-սովորող-ծնող փոխգործակցության ապահովման նախապայմաններից մեկը ծնողներին տրամադրվող տեղեկատվական աջակցությունն ու կրթությունն է: Ուսուցչի աշխատանքն այս ուղղությամբ պետք է լինի համակարգված:

Ուսուցիչները դաստիարակության և ուսուցման գործընթացում կհաջողեն, երբ երեխաները համոզված լինեն, որ ուսուցիչը սիրում է իրենց, երբ ծնողները վստահեն ուսուցչին, անկախ նրանից՝ իրենց երեխաները տաղանդավո՞ր են, թե՞ ոչ, կարգապա՞հ են, թե՞ ոչ: Սովորողը պետք է վստահ և համոզված լինի, որ սիրված է որպես անհատ:

Այս հաջողության հիմքը ուսուցիչ-սովորող-ծնող համագործակցությունն է:



Ուսուցիչները հաճախ են նշում, որ ծնողների հետ համագործակցությունն ամենադժվար խնդիրներից է:

Հաճախ երեխային դպրոց ուղարկելով՝ ծնողները հրաժարվում են մասնակցել կրթության և դաստիարակության գործընթացին:

Կարելի է առանձնացնել մի քանի հիմնական պատճառ.

- ժամանակի պակաս,
- կարծրատիպեր ուսումնական գործընթացի վերաբերյալ,
- ընտանեկան կրթության ցածր մակարդակ,
- անհամապատասխանություն ծնողների պահանջների և երեխաների հնարավորությունների միջև:

Աշակերտների կրթությունը դպրոցում և ընտանիքում անբաժան գործընթացներ են: Դրա ղեկավարն ու կազմակերպիչը դպրոցի ուսուցչական կազմն է:

Ծնողների հետ աշխատելիս ուսուցիչը պետք է առաջնորդվի համագործակցության հիմնական կանոններից մեկով՝ փոխադարձ հարգանքով: Ծնողները պետք է ուսուցչի մեջ տեսնեն հեղինակավոր, բանիմաց և ցանկացած իրավիճակում լուծում գտնելու ունակ անձի:

Ժամանակակից դպրոցները հաճախ փորձում են ծնողներին ներգրավել ուսումնական գործընթացում, սակայն ծնողների ակտիվությունն ընդհանուր առմամբ այնքան էլ մեծ չէ: Շատերը դեռևս իրենց մասնակցությունը երեխայի դպրոցական կյանքում սահմանափակում են միայն ծնողական ժողովներին մասնակցելով, երբեմն հանդես են գալիս միայն որպես պահանջատեր:

Ընտանիք-դպրոց հարաբերությունների նման ձևաչափը մտահոգիչ է: Ծնողները պետք է հնարավորինս ներգրավված լինեն դպրոցական կյանքում:

Կարելի է առանձնացնել ծնողների ներգրավման 3 ուղղություն.

1. Դպրոցը տեղեկատվություն է ուղարկում ծնողներին:
   Սա միակողմանի հաղորդակցություն է, որտեղ դպրոցն է որոշում տեղեկատվության ժամանակը, ձևաչափը և բովանդակությունը:
2. Դպրոցը տեղեկատվություն է ուղարկում ծնողներին և նրանց հետադարձ կապի հնարավորություն տալիս: Այս դեպքում ուղղակի կապ չկա: Տեղեկատվությունը պարզապես միակողմանի հաղորդագրությունների հավաքածու է, որտեղ պարտադիր չէ համագործակցությունը:
3. Դպրոցը և ծնողները միասին են փնտրում նոր միջոցներ՝ ունենալով ընդհանուր նպատակ՝ երեխայի զարգացումը և արդյունավետ կրթությունը:

Միակողմանի տեղեկատվությունը, որը տալիս է դպրոցը, հազվադեպ է հանգեցնում ծնողների ներգրավվածության աճի: Սոցիալական ցանցերի օգտագործման ծավալների ավելացումը նպաստում է հաղորդակցության ինտերակտիվությանը, արագությանը: Չնայած շատ տեղեկություններ ծնողներին հասնում են ավելի արագ, բայց դա չի հանգեցնում հաղորդակցության գործընթացում ծնողների արդյունավետ ներգրավվածության, քանի որ չկա իրական շփում: Հետևաբար, ծնողների արձագանքները երբեմն կարող են լինել կտրուկ և հուզական: Ուստի ծնողների արդյունավետ ներգրավման համար անհրաժեշտ է գործարկել վերը նշված հաղորդակցության տարբերակներից վերջին՝ երրորդ ուղղությունը:

Որպես կանոն, «դժվար ծնողներ» գոյություն չունեն, չնայած ուսուցիչները միշտ չէ, որ այդպես են կարծում: Որոշ ծնողներ կարող են չափազանց ինքնավստահ լինել, նույնիսկ ագրեսիվ, մինչդեռ ոմանք կարող են լինել պասիվ, կամ գուցե՝ թվացյալ անտարբեր: Ծնողների պահվածքը, սովորաբար, պայմանավորված է անհանգստությամբ կամ անորոշությամբ: Ակնհայտ «դժվար վարքագծի» պատճառը շատ դեպքերում հաղորդակցության բացակայությունն է: Շատ ծնողներ պարզապես չգիտեն, թե ինչպես լավագույնս աջակցեն իրենց երեխայի ուսուցմանը:

Կարևոր է, որ դպրոց-ծնող-աշակերտ եռանկյան յուրաքանչյուր կողմն իմանա իր պարտականությունները: Կարևոր է իմանալ՝ ինչ հնարավոր ձևերով և միջոցներով կարող է դպրոցը համագործակցել ծնողների հետ, ինչպես են ծնողներն ու դպրոցը միմյանց աջակցելու երեխաների սովորելու լավագույն ուղիները գտնելու հարցում: Այս բազմակողմանի հարցերի պատասխանները ստանալու դեպքում մենք կարող ենք գալ ընդհանուր հայտարարի և ձևավորել պատկերացում, որը հնարավորություն կտա սովորողների կրթությունն ավելի հաջողված դարձնել:

Ըստ մի շարք հետազոտությունների՝ դպրոցները ծնողների հետ արդյունավետ համագործակցելը հաճախ պատկերացնում են նրանց հետ ավելի շատ շփվելով: Սակայն շատ դեպքերում ծնողներին ավելի շատ տեղեկատվություն տրամադրելը չի հանգեցնում նրանց հետ իրական կապի:

Դեռևս 2012 թվականի աշնանը հոլանդական հետազոտող կազմակերպություններ Ecorys-ը և Oberon-ը կրթության նախարարության նախաձեռնությամբ անցկացրել են ծնողների ներգրավվածության գնահատում: Միջնակարգ կրթության վերաբերյալ «Van 12 tot 18» ամսագրին տված հարցազրույցում հետազոտողները ներկայացրին, որ համագործակցությունը դպրոցի և ծնողների միջև վերջին տարիներին հարաբերականորեն բարելավվել է: «Համագործակցության կարևորության մասին գիտակցությունը տարածվել է վերջին մի քանի տարիների ընթացքում: Բայց եթե առաջընթացը չափենք ըստ ծնողների ներգրավվածության վերը նշված երեք ուղղությունների՝ կարելի է

եզրակացնել, որ առաջընթացը հիմնականում եղել է ծնողների ներգրավվածության 1-ին ուղղությամբ»:

Դպրոցների ղեկավարներն ավելի ու ավելի են գիտակցում ծնողների դերի կարևորությունը, բայց մինչև այժմ սա ավելի հաճախ հանգեցնում է միայն ծնողներին ուղարկվող միակողմանի տեղեկատվության ավելացմանը:

Ա. Ծնողների ներգրավվածության առաջին ուղղության մի քանի օրինակներ և դրանց արդյունավետությունը

Օրինակ 1. Որոշ ուսուցիչներ գտնում են, որ եթե տեղեկատվություն հաղորդելու անհրաժեշտություն չկա, ապա ծնողների հետ ժողով-հանդիպման կարիք նույնպես չկա: Միևնույն ժամանակ, ուսուցիչները կարծում են, որ ավելի բարձր դասարաններում ծնողների պասիվությունը պայմանավորված է երեխաների՝ մեծ լինելու հանգամանքով:

Օրինակ 2. Բաց դռների օր կամ ծնողների հետ հանդիպում

Շատ դպրոցներ կազմակերպում են ծնողների հետ հանդիպում ուսումնական տարվա սկզբին: Ուսուցիչները տեղեկացնում են ծնողներին այն ամենի մասին, ինչ սովորելու են աշակերտները տարվա ընթացքում, ինչպես նաև իրազեկում նրանց իրենց անելիքների և պարտականությունների վերաբերյալ: Ծնողների հաճախումները տարբեր են. հաճախելիությունը ավելի բարձր է տարրական դասարաններում և ավագ դպրոցի առաջին և վերջին տարում: Ավելի մեծ ակտիվություն են ցուցաբերում դպրոցահասակ ավագ երեխաների ծնողները, իսկ դպրոցում արդեն երկրորդ, երրորդ երեխա ունեցող ծնողների ակտիվությունը ցածր է, քանի որ այս տեղեկատվությանը նրանք արդեն ծանոթ են լինում: Այս հանդիպումները տեղեկատվության առումով արդյունավետ են, բայց ծնողի հետ շփումը շատ սահմանափակ է: Ծնողները չեն զգում, որ այդ գործընթացի մասն են կազմում, քանի որ հանդիպումների թեմաներն հիմնականում կենտրոնացած են աշակերտների և ուսուցիչների անելիքների վրա:

Ծնողներից ոչ ոք չի հարցնում ուսուցման վերաբերյալ նրանց տեսակետը, պատկերացումները իրենց պարտականությունների վերաբերյալ: Մեծ հաշվով, ոչ ոք չի աջակցում ծնողներին այն հարցում, թե ինչպես օգնեն իրենց երեխային սովորել:

Օրինակ 3. Ուսուցումը տանը

Աշակերտներին կանոնավոր հանձնարարվում է տնային աշխատանք, բայց ծնողներին հազվադեպ են ուղղորդում, թե նրանք ինչպես կարող են լավագույնս աջակցել իրենց երեխաներին կատարել այդ աշխատանքը: Երեխաների մեծանալուն զուգընթաց նվազում է ուսուցիչների խորհրդատվությունը ծնողներին այդ ուղղությամբ:

Օրինակ 4.

Դպրոցները հաճախ ծնողներին հավաստում են. «Դուք մեր գործընկերներն եք կրթության ոլորտում»: Սակայն սահմանված չէ, թե ինչ է նշանակում արդյունավետ գործընկերություն: Առանց հստակ տեղեկատվության ծնողները, բնականաբար, չեն կարող աջակցել իրենց երեխային, իրական գործընկերության և ներգրավվածության մոտիվացիան բացակայում է: Որքան էլ ընդգրկուն լինի «գործընկեր» հասկացության բնորոշումը, այն ենթադրում է երկուստեք աշխատանք և փոխգործակցություն:

Օրինակ 5.

«Դպրոցների համար շատ գործողություններ անհնար են առանց ծնողների աջակցության»: Այս ուղերձով դպրոցը միակողմանի մատնանշում է, թե ինչ է ծնողը պարտավոր՝ փաստացի թույլ չտալով նրան մասնակցել որոշումների կայացման գործընթացին:

Օրինակ 6.

Մեր օրերում տեղեկատվական հոսքը բազմակողմանի է, և մենք ստիպված ենք հաճախ չափազանց շատ տեղեկատվություն մշակել: Դպրոցի տեղեկություններն այս հոսքի մեջ երբեմն չեն հասնում ծնողներին: Ի վերջո, դպրոցից ստացված լուրերը միակ կարևոր տեղեկությունը չեն, որը ծնողը ստանում է օրվա ընթացքում:

Դպրոցները, ուղարկելով չափազանց շատ տեղեկատվություն, հաճախ չեն կարողանում կիսվել ամենակարևորով, որը «կորչում է» անկարևորի ֆոնին:

Եզրակացություն

Ծնողների ներգրավվածությունն ըստ առաջին ուղղության ենթադրում է, որ դպրոցը հիմնականում հաղորդում է, թե ինչն է իր համար կարևոր, կամ ինչպես է նա տեսնում աշակերտի կամ նրա հետ կապված խնդիրների լուծումը:

Դպրոցն ակնկալում է, որ ծնողները կարդարացնեն իրենց ակնկալիքները, ինչը հաճախ հանգեցնում է երկկողմանի հիասթափության:

Ներգրավվածություն երկրորդ ուղղությամբ առաջնորդվող դպրոցը տեղեկատվություն է ուղարկում ծնողներին և հետադարձ կապի հնարավորություն տալիս:

Այնուամենայնիվ չկա փաստացի շփում, առկա է միայն տեղեկատվության փոխանակում:

Տեղեկատվության բովանդակությունը ծնող-ուսուցիչ համագործակցության արդյունք չէ: Նման դեպքերում շատ հաճախ ծնողներն ու ուսուցիչները գործում են «տարբեր աշխարհներում»: Այս իրավիճակում դժվար է բաշխել դերերը և անելիքները: Ծնողների ներգրավվածության երկրորդ ուղղությանը առավել մանրամասնորեն կանդրադառնանք ստորև:

Բ. Ծնողների ներգրավվածության երկրորդ ուղղության մի քանի օրինակներ և դրանց արդյունավետությունը

Օրինակ 1. Հուզական կապ

Ըստ համագործակցության այս ուղղության՝ ուսուցիչները բազմաթիվ նամակներ են ուղարկում ծնողներին և հնարավորություն տալիս նրանց նույն եղանակով պատասխանել նամակներին: Ծնողները օգտվում են այս միջոցից՝

տալով հետադարձ կապ: Քանի որ ծնողի և երեխայի միջև առկա է հուզական կապ, ծնողները հաճախ են հուզառատ նամակներ ուղարկում, ինչը դպրոցի կողմից, հնարավոր է՝ ճիշտ չընկալվի. ընտրված միջոցը թույլ չի տալիս ընկալել դիմացինի մտահոգությունները, քանի դեռ չկա անմիջական շփում: Երբ բացակայում է կանոնավոր երկխոսությունը ծնողների և դպրոցի միջև, ծնողները հաճախ զսպում են իրենց մտահոգությունները, որոնք հետո արտահայտում են շատ ավելի կտրուկ: Բացի այդ, հանդիպում են ծնողներ, որոնք կուտակված հույզերը բուռն արտահայտում են դպրոց այցելելով, ինչն անակնկալի է բերում ուսուցիչներին:

Օրինակ 2. Ծնողների բավարարվածության հետազոտություն

Ծնողներից շատերի կարծիքով՝ համագործակցության առաջին և երկրորդ ուղղությունների պարագայում իրենք կրթության մեջ դպրոցի գործընկերները չեն:

Այնուամենայնիվ, շատ տնօրեններ շեշտում են, որ ծնողները դպրոցի «հաճախորդներն են», և ուսուցիչները պետք է ընդունեն այդ փաստը: Սովորաբար դրան հաջորդում են այնպիսի բովանդակությամբ նախադասություններ, ինչպես, օրինակ՝ «Հաճախորդը միշտ ճիշտ է»: Ծնողների բավարարվածության ուսումնասիրությունը կարևոր է, սակայն այն չի երաշխավորվում, քանի դեռ ծնողը չգիտի, թե ինչպես համագործակցի դպրոցի հետ: Դա կարող է հանգեցնել ծնողների՝ քննադատների դերում հանդես գալուն:

Օրինակ 3. Չափազանց ներգրավված ծնողներ

Որոշ ուսուցիչներ կարծում են, որ ծնողները «չափազանց ներգրավված են» դպրոցական կյանքում, և գտնում են, որ կարևոր է սահմանափակել այդ ներգրավվածությունը: Իհարկե, հեշտ է հասկանալ, թե ինչու է դպրոցը սահմանափակումներ կիրառում:

Միևնույն ժամանակ պետք է գիտակցել, որ արդեն իսկ մտահոգված ծնողը ավելի շատ է անհանգստանալու, եթե ուսուցչի հետ շփումը սահմանափակ է: Եթե ուսումնական տարվա մեկնարկին ծնողներն ու ուսուցիչները պայմանավորվում են, թե ինչպես և ինչ հաճախականությամբ են լինելու իրենց հանդիպումները (Ծնողների ներգրավվածություն 3), ուսուցիչը պետք է հնարավորությունն օգտագործի՝ նշելու, որ ծնողի չափազանց մեծ ուշադրությունը կարող է բացասական ազդեցություն ունենալ սովորողների վրա: Այս դեպքում ուսուցիչները ծնողների հետ միասին կարող են փնտրել արդյունավետ լուծումներ:

Օրինակ 4. Պանելային քննարկումներ

Պանելային քննարկումները կամ ծնողական խմբերում քննարկումները թույլ են տալիս ծնողներին դպրոցի հետ կիսվել իրենց դիտարկումներով: Հիմնականում դպրոցները սահմանափակվում են ծնողական խորհրդին նման հնարավորություն տալով: Որոշ դպրոցներ նախընտրում են հարցումները կազմակերպել տարբեր խմբերի շրջանում՝ ավելի շատ արձագանքներ ստանալու համար: Երբեմն այս հանդիպումները կարող են հիասթափություն առաջացնել դպրոցներում: «Ծնողների մեծ մասը միայն դժգոհություն է արտահայտում, նրանց դիտարկումները բացառապես բխում են իրենց երեխայի շահից»:

Հաճախ ծնողները կիսվում են իրենց կամ իրենց երեխաների ունեցած փորձառությամբ, բայց չեն մտածում լուծումների և ընդհանուր պատասխանատվության մասին:

Հազվադեպ է պատահում, որ ծնողները տեսնեն կամ լսեն նաև տարբերվող տեսակետներ և քննարկեն դրանց հնարավոր արդյունավետությունը:

Որպես հետևանք՝ ծնողները հաճախ դադարում են համագործակցել և հաճախել նման քննարկումների: Այս ամենով հանդերձ, չի կարելի պնդել, որ պանելային քննարկումները արդյունավետ չեն: Եթե դրանք կազմակերպվեն հստակ պլանավորված, թեմաները ընտրվեն թիրախային, իսկ ընթացքն էլ իրականացվի կառուցողական երկխոսության ձևաչափով, դրական արդյունք ապահովելու հավանականությունը էականորեն կմեծանա:

Եզրակացություն

Ծնողների ներգրավվածության 2-րդ տարբերակում հաղորդակցությունը փոխադարձ է, բայց ծնողներն ու ուսուցիչները դեռևս աշխատում են «առանձին աշխարհներում»: Այս աշխարհների միջև եղած բացը դժվար է կամրջել: Դպրոցները ծնողներին միայն որպես դժգոհող կողմ են դիտարկում: Ծնողներն էլ հաճախ ուսուցիչներին ընկալում են որպես անտեսող կողմ և դպրոցում իրենց ներգրավված չեն զգում, քանի որ նրանք գործընկերներ չեն իրենց երեխայի ուսումնառությանն աջակցելու պրոցեսում կամ առնվազն շատ ծնողներ իրենց այդպիսին չեն համարում:

Գ. Դպրոցը և ծնողները միասին են փնտրում նոր միջոցներ՝ ունենալով ընդհանուր նպատակ՝ երեխայի զարգացումը և արդյունավետ կրթությունը

Ըստ ծնողների զգալի մասի՝ ներգրավման 3-րդ ուղղության շրջանակներում դպրոցը և ծնողները հավասար գործընկերներ են և համագործակցում են ընդհանուր նպատակի շուրջ: Այն ենթադրում է միասնական և անընդմեջ պատասխանատվություն աշակերտի հաջողությունների և ուսման բարելավման համար ինչպես տանը, այնպես էլ դպրոցում: Այն միավորում է ծնողներին և ուսուցիչներին, որպեսզի նրանք միահամուռ ուժերով նպաստեն աշակերտի ակադեմիական առաջադիմության բարելավմանը:

Իհարկե, այստեղ հարց է առաջանում. «Ինչպե՞ս կարող ենք իրականություն դարձնել ծնողների ներգրավվածությունը գործնականում»: Իրականացման ընթացքը բաղկացած է չորս հիմնական փուլերից.

- ***ծնողի, աշակերտի և ուսուցչի Startup հանդիպում յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին,***
- ***անհատական հանդիպումների կազմակերպում. դպրոցը, ծնողները և աշակերտները պայմանավորվում են հաղորդակցության տեսակի և հաճախականության վերաբերյալ՝ ելնելով աշակերտի զարգացման կարիքներից,***
- ***ուսումնական տարվա սկզբին հանդիպում ծնողների և երեխաների համար,***
- ***գործընկեր/մենթոր ծնողներ***:

Վերոնշյալ չորս փուլերը հետևողականորեն իրականություն դարձնելով՝ հնարավոր է ծնողների արդյունավետ ներգրավվածություն ապահովել: Սա ոչ այնքան մոտեցման խնդիր է, որքան դպրոցի և ծնողների միջև համագործակցության որակի բարձրացման միջոց: Բոլոր կողմերն, ի վերջո, կտեսնեն, թե որքան են նրանք պետք միմյանց և ինչպես են աջակցում իրար՝ երեխաներին սովորելու հարցում օգնելու համար: Եվ այդ համագործակցության արդյունքում ծագած արժեքավոր ամեն նոր գաղափար դառնում է շարունակական ներգրավվածության դրդապատճառներից մեկը:

1. Ամենամյա հանդիպում

Նպատակն է ստեղծել կապ, վստահություն դպրոցի և ծնողների միջև հենց սկզբից:

Ծնողները պետք է իրենց երեխաներին վստահեն ուսուցչին, որին գրեթե չեն ճանաչում:

Ստարտափ անհատական հանդիպումը և ծանոթությունը ուսուցչի(ների) հետ տարվա սկզբին պետք է համարել բնականոն պարտադիր գործընթաց:

Ծնողների, սովորողի և ուսուցչի(ների) ստարտափ հանդիպումը ամբողջ դասարանի համար ապահովում է դրականորեն հագեցած ուսումնական տարեսկիզբ, ինչն իր հերթին թույլ է տալիս աշակերտին տեսնել, որ իր ծնողներն ու ուսուցիչները կարող են համագործակցել:

Եթե այլ մարդիկ (օրինակ՝ ազգականը կամ ընտանիքի ընկերը) կարևոր դեր են խաղում աշակերտի կյանքում, նրանք նույնպես կարող են ներկա գտնվել սկզբնական հանդիպմանը: Զրույցը պետք է լինի այն մասին, թե երեխան ինչ է ցանկանում սովորել գալիք տարվա ընթացքում, պետք է քննարկվեն մարտահրավերները և հնարավորությունները, ինչպես նաև այն, թե ինչ է ուսուցիչն ակնկալում աշակերտից տարվա ընթացքում. այսպիսի հանդիպման ինտերակտիվ սկիզբը արդյունավետության նախապայման է ողջ տարվա համար: Այս՝ առաջին շփումը ծնողներին թույլ է տալիս ավելի հեշտությամբ կապ հաստատել իրենց երեխայի ուսուցչի հետ՝ անձնական հարաբերություններ ստեղծելով:

2. Անհատական հանդիպումների կազմակերպում

Նպատակն է անհատականացնել շփումը ընտանիքների հետ՝ ելնելով երեխայի կարիքներից:

Այս բաղադրիչը պահանջում է հրաժարվել ընտանիքներին ներգրավելու ավանդական եղանակներից: Դա նշանակում է, որ ծնողն իրավունք ունի ասել, թե հաղորդակցումը դպրոցի և ծնողների միջև ինչպես և ինչ հաճախականությամբ պետք է լինի:

Ստարտափ հանդիպման ժամանակ դպրոցի, աշակերտի և ծնողների միջև քննարկումը պետք է հիմնված լինի երեխայի կարիքների վրա:

Ավանդույթի համաձայն՝ դպրոցները հանդիպում են կազմակերպում ծնողների հետ ըստ դպրոցի առաջադրած ժամանակացույցի, որի ժամանակ

քննարկվում են ընդհանուր հարցեր երեխաների առաջադիմության, վարքի վերաբերյալ: Կամ տեղի են ունենում հանդիպումներ ծնողական խորհրդի հետ, որը հաճախ գործում է ծնողական համայնքից անկախ:

Անհատական հանդիպումները ծնողների հետ գործնականում նշանակում են, որ յուրաքանչյուր սովորողի համար հանդիպումների հաճախականությունը և տևողությունը կարող են տարբեր լինել: Որոշ դեպքերում ծնողները և դպրոցը տարեկան երկու անգամ հանդիպում են կես ժամ տևողությամբ՝ կիսվելու երեխայի առաջընթացի մասին տեղեկատվությամբ:

Դպրոցները հաղորդակցության այնպիսի ռազմավարություններ պետք է կիրառեն, որոնցում կարևոր է ծնողների համար հասկանալի հաղորդակցումը և նրանց արդյունավետ, ակտիվ ներգրավման խրախուսումը:

Անհատական հանդիպում նախատեսվում է՝ ելնելով սովորողի կարիքներից: Ծնողների համար կարող է կարևոր լինել նաև տարվա ընթացքում կոնկրետ առարկայի ուսուցիչների հետ հանդիպումների ժամանակացույցը:

Ծնողների ներգրավվածության 3-րդ ուղղության շրջանակներում սովորողը, նրա ծնողները և ուսուցիչ(ներ)ը գիտեն, թե ինչպես կարելի է կարճ ժամանակում հանդիպում կազմակերպել՝ աջակցելու սովորողի ուսմանը:

Սովորողի մասին յուրաքանչյուր խոսակցություն կամ զրույց «3-ի կոնֆերանս» է՝ քննարկելու երեխայի առաջընթացի ճանապարհին առկա մտահոգության ոլորտները և նվաճումների խոչընդոտները: Երեխայի հաջողությունը կախված է ուսուցչի և ծնողի հաջող համագործակցությունից:

Այս հանդիպումների ընթացքում ծնողներն ու ուսուցիչները միասին կվերանայեն տվյալները, մտքեր կփոխանակեն, համաձայնության կգան և համատեղ լուծումներ կգտնեն կուտակված հարցերին:

3. Ուսումնական տարեսկզբի ընդունելություն

Նպատակն է միմյանց ճանաչելու հնարավորություն ստեղծել ծնողների և երեխաների համար:

Ընտանիքների միջև սոցիալական կապերի և շփումների հաստատումը դրականորեն է անդրադառնում սովորողների ուսումնառության վրա: Նրանց համար կարևոր է կապը ոչ միայն իրենց ծնողների և ուսուցչի միջև, այլ նաև այլ ծնողների և երեխաների հետ:

Այս պատճառով ավելի արդյունավետ է յուրաքանչյուր ուսումնական տարին սկսել դասարանի կամ դասարանի ծնողների միջև կամավոր մտերմիկ հանդիպումով՝ միմյանց ճանաչելու համար: Արդյունքում նրանք հաճախ ավելի լավ են հասկանում և ճանաչում նաև իրար երեխաներին: Ծնողներն այնուհետև ավելի մեծ պատասխանատվություն են զգում ամբողջ դասարանի համար: Վերջապես, ծնողների համար կարևոր է ճանաչել այն երեխաների ընտանիքները, որոնց հետ իրենց երեխաները կանոնավոր կերպով խաղում, շփվում են:

4. Գործընկեր/մենթոր ծնողներ

Նպատակն է հնարավորություն տալ բոլոր ծնողներին սովորողի ուսուցման գործում ներգրավվել՝ որպես աջակցող գործընկերներ:

Որոշ ծնողներ ավելի դժվարությամբ են կապի դուրս գալիս դպրոցի հետ, քան մյուսները: Սա կարող է պայմանավորված լինել անցյալի փորձով, լեզվական,մշակութային խոչընդոտներով, ծանրաբեռնված աշխատանքային գրաֆիկով և երեխաների խնամքի հետ կապված խնդիրներով: Դպրոցի կողմից իրազեկմանն ընդդիմացող որոշ ծնողներ կարող են ներգրավվել այդ գործընթացում այլ ծնողների կողմից: Բոլոր ծնողներին ներգրավելու համար անհրաժեշտ է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ նրանք կապված են միմյանց հետ: Այս դեպքում շատ արդյունավետ լուծում է «ընկերների համակարգը», որը դպրոցից մեծ աշխատանք չի պահանջում, բայց հետևանքները հսկայական են:

Այս չորս հիմնական բաղադրիչների կիրառումն ապահովում է հետևյալ դրական արդյունքները.

1. Պատասխանատվության բարձրացում բոլոր ծնողների կողմից և, հետևաբար, օպտիմալ ներգրավվածություն իրենց երեխայի արդյունավետ կրթության գործում:
2. Տարվա սկզբին ժամանակի ներդրումը ապահովում է սովորողի կարիքների ճշգրիտ գնահատում, ինչը ժամանակ և էներգիա է տնտեսում ուսումնական տարվա համար: Սա մեծապես բարձրացնում է համագործակցության արդյունավետությունը:
3. Նոր մտածելակերպ դպրոցի և ծնողների համագործակցության մասին՝ սովորողների լավագույն շահերից ելնելով:
4. Ստեղծարարություն և ինքնարտահայտման հնարավորություն դպրոցի և

ծնողների համագործակցության մեջ:

5. Դպրոցական համայնքի ձևավորում, որտեղ բոլոր ծնողներն իրենց ներգրավված են զգում և գիտեն իրենց հստակ անելիքները:
6. Թվում է, թե նման պարագայում ժամանակի ավելի մեծ ներդրում է անհրաժեշտ, մինչդեռ իրականում խնայում ենք ժամանակը, քանի որ հետո հավելյալ ժամանակի կարիք չի լինում ինչ-որ բան շտկելու համար:

Վերջնարդյունք՝ ուսուցիչները ավելի շատ ժամանակ կտրամադրեն ուսուցման համար, ծնողները կլինեն ներգրավված, և կբարձրանա աշակերտների ուսուցման որակը:

Ուսուցչի խնդիրն է մշտապես պահպանել ծնողների հետաքրքրությունը երեխաների դպրոցական կյանքի նկատմամբ:

Ի՞նչ ձևեր կարող են օգտագործվել ծնողների հետ աշխատելու համար

- **Հաղորդակցում**
  - **Հաղորդակցվելիս ստեղծել ողջունելի մթնոլորտ**

Դպրոցում առկա ողջույնի և հանդիպման մշակույթով ծնողի մոտ ձևավորվում է սկզբնական տպավորությունը դպրոցի մասին. եթե այդ տպավորությունը դրական է, եթե նրանք անկաշկանդ են զգում իրենց դպրոցական միջավայրում, ուրեմն ապագայում դպրոցի նկատմամբ բարյացակամ վերաբերմունք կունենան: Շատ կարևոր է նաև այն, թե ինչպես է հյուրընկալում ծնողին դպրոցական կոլեկտիվը:

Ծնողներին ճիշտ դիմավորելը և ջերմ ողջույնը կարևոր են: Զրույցի ընթացքում դպրոցի ներկայացուցիչները պետք է լինեն բաց և դրականորեն տրամադրված՝ անկախ ծնողի նախատրամադրվածությունից:

  - **Որոշել հաղորդակցման միջոցը**

Ինչպես արդեն նշվել է, ցանկալի է, որ ծնողն ինքը նշի իրեն հարմար հաղորդակցման միջոցը (տեսազանգ, էլեկտրոնային փոստ, նամակ և այլն), հաճախականությունը: Ցանկալի է, որ հարցումն իրականացվի հարցաշարով, որի սկզբում պետք է հստակ արտացոլվեն ծնողի ներգրավման կարևորությունը, նրա դրական կողմերը և այն, թե ինչ ազդեցություն ունի ծնողի ներգրավումը երեխայի կրթության վրա:

Հավելված 1

- **Հայտարարությունների ցուցատախտակ**

Ցանկալի է, որ դպրոցը ունենա հայտարարությունների ցուցատախտակ, որը կախված կլինի դպրոցի մուտքի մոտ, համեմատաբար տեսանելի վայրում, և որտեղ կփակցվեն ծնողներին հետաքրքրող նյութերը: Հայտարարությունների ցուցատախտակն ավելի տպավորիչ է, եթե ուշադրություն է գրավում, լավ կազմակերպված է և պարբերաբար թարմացվում է: Հաճախ պատրաստակամ ծնողներն ապահովում են հայտարարությունների գրատախտակին տեղադրված տեղեկատվության պարբերաբար թարմացումը: Հայտարարությունները կարող են պարունակել տեղեկություն մոտակա հանդիպումների և միջոցառումների մասին, խորհուրդներ աշակերտներին ուսման գործընթացում աջակցելու համար:

- **Գնահատման ձև**

Խրախուսելի է կազմել պարզ գնահատման ձև յուրաքանչյուր հանդիպման, ակտիվության և միջոցառման վերաբերյալ:

Հավելված 2

- **«Դրական տեղեկությունները» ծնողների համար**

Ուսուցիչները պետք է սովորություն դարձնեն կապ հաստատել ծնողի հետ ոչ միայն երեխայի վատ առաջադիմությունից կամ վարքից դժգոհելու, այլ նաև դրական տեղեկություններ հաղորդելու համար, ինչը ոչ միայն ոգևորում է ծնողին, այլ նաև բարձրացնում երեխայի կրթական կամ դրական վարք ցուցաբերելու մոտիվացիան:

- **Միկրոխմբերով հանդիպումների արդյունավետությունը**

Պակաս կարևոր չէ ծնողների հետ միկրոխմբերով աշխատանքը: Այս դեպքում հանդիպման հրավիրում ենք միայն նրանց, ում երեխաներն ունեն նմանատիպ անձնական կամ կրթական խնդիրներ: Խելամիտ է հրավիրել նաև ոլորտի մասնագետների՝ ըստ կարիքի:

Առաջին անգամ բարձրաձայնել խնդիրը հաճախ դժվար է: Բայց եթե ծնողները բարձրաձայնեն իրենց խնդիրները և լսեն, որ մյուս ընտանիքներն էլ գրեթե նույնպիսի խնդիրներ ունեն, նրանք միայնակ չեն զգա իրենց այս հարցում:

Միկրոխմբի հանդիպման ժամանակ զրույցին միանում են նաև այն ծնողները, ովքեր արդեն հաղթահարել են խնդիրը: Նրանք կիսվում են իրենց փորձով (նույնիսկ բացասական), ինչը մյուսների մոտ ձևավորում է այն

համոզմունքը, որ դժվարությունները հաղթահարելի են, և ամեն ինչ հնարավոր է շտկել: Սա թույլ է տալիս նրանց խնդրահարույց իրավիճակից դուրս գալու համար կոնկրետ քայլեր որոնել:

Քանի որ մենք չենք հրավիրում բոլոր ծնողներին, այլ միայն մի մասին, խոսակցությունը կուլիսային, մասնավոր բնույթ է կրում: Դա ծնողներին վստահություն է հաղորդում, որ մյուսները չեն իմանա իրենց երեխաների խնդիրների մասին: Ի դեպ, նման միկրոխմբային հանդիպումներ կարելի է կիրառել նաև դասարանների միջև, այսինքն՝ հրավիրել ծնողների զուգահեռ դասարաններից:

- **Սեմինարներ, ուսուցանող հանդիպումներ ծնողների համար**

Ինչպես արդեն նշվել է, ծնողները հաճախ չեն ներգրավվում դպրոցական կյանքում, քանի որ չգիտեն ինչպես դա անել, ուստի դպրոցն ինքը պետք է ակտիվորեն օգնի ծնողին ընդգրկման մեթոդները սովորելու գործում:

Օրինակ՝ դպրոցը կարող է կազմակերպել ընտանեկան ընթերցանության երեկոներ: Տարրական դասարանի ծնողները գնում են դպրոց, երեխաների հետ կարդում, ուսուցիչների հետ զրուցում ընթերցանության և նրա ռազմավարությունների մասին: Ռազմավարություններից մեկն էլ ուսուցչի կողմից ծնողների համար սպառիչ տեղեկության հաղորդումն է երեխաների դպրոցական առաջադիմության ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմերի մասին: Կոնկրետ տեղեկության հաղորդումը, թե ինչին պետք է ուշադրություն դարձնել աշակերտի աշխատանքի մեջ, հաղորդակցման տեսակետից առաջընթաց քայլ է: Դպրոցները պետք է ոգևորեն ծնողներին և երեխաներին, որ նրանք պարբերաբար զրուցեն դպրոցում իրենց գործունեության մասին, միմյանց հաղորդեն գաղափարներ:

Կարևոր է կազմակերպել նաև սեմինարներ տարբեր թեմաներով, օրինակ՝ ծնողավարման հմտություններ, երեխաների զարգացման տարիքային առանձնահատկություններ, սեռական դաստիարակություն և այլն, որոնք կբարձրացնեն ծնողների իրազեկման մակարդակը: Այսպիսով, երկկողմանի (ընտանիք, դպրոց) դաստիարակությունը կարող է կերտել ապագա առողջ սերունդ:

- **Ծնողական օրագրեր**

Ծնողների՝ օրագրեր պահելը օգնում է ավելի արդյունավետ համագործակցել նրանց հետ: Այս աշխատանքը թուլացնում է լարվածությունը ծնողի և ուսուցչի

միջև: Միշտ չէ, որ ծնողը կարող է ուղիղ հարցեր տալ ուսուցիչներին: Եվ, բացի այդ, դա վերջինիս հնարավորություն է տալիս ոչ թե զարմանալու, այլ պատրաստվելու ծնողին հետաքրքրող հարցի պատասխանին: Այն նաև օգնում է անհրաժեշտ ճշգրտումներ կատարել իրենց կրթական գործունեության և ծնողների հետ աշխատանքի պլանում: Ծնողների օրագիրը ավելի օգտակար և բովանդակալից է դարձնում հանդիպումները հենց ծնողների համար: Բացի այդ, ուսուցիչը պարտավոր չէ յուրաքանչյուր կոնկրետ երեխայի համար բարձրաձայն մեկնաբանություններ հնչեցնել բոլոր ծնողների ներկայությամբ, այսինքն՝ օգնում է խնդիր ունեցող երեխաների ծնողներին խուսափել անհարմար իրավիճակից: Օրագրերի առկայությունը օգնում է ուսուցչին անհրաժեշտության դեպքում հղում կատարել դրանցում առկա տեղեկատվությանը:

- **Ծնողական ակումբների ստեղծում**

Ծնողական ակումբները նվազեցնում են ընտանիքի պասիվությունը և մեկուսացվածությունը՝ կապեր ստեղծելով ավելի փորձառու ընտանիքների հետ: Բարձրացնում են ընտանիքների գիտելիքների մակարդակը, վստահությունը և ակտիվությունը նրանց հոգեբանորեն աջակցելով, ինչպես նաև կրթվելու և տեղեկատվություն ստանալու մշտական հնարավորությամբ ապահովելու միջոցով կապ են ստեղծում ընտանիքների և դպրոցի միջև:

Կարևոր է ծնողական խմբի համար կազմակերպել սեմինար-պարապմունքներ նրանց հուզող, խնդրահարույց թեմաների շուրջ՝ ըստ անհրաժեշտության: Նշանակալից է հատուկ կարիքներ ունեցող երեխաների ծնողների ներգրավումը և նրանց կարծիքը հաշվի առնելը: Ծնողի մասնակցությունը ծառայում է երեխայի համար ունեցած տեսլականին և երեխայի կարողությունների ու հմտությունների ճշգրիտ գնահատմանը, նրանց երազանքների քարտեզագրմանը և դրանց՝ դպրոցի աջակցությամբ քայլ առ քայլ իրագործմանը:

- **Աշխատանքների ցուցահանդեսներ**

Դպրոցը ցուցադրում է աշակերտների կողմից պատրաստված նմուշները (նկար, ձեռքի աշխատանք, ձեռագործ, և այլն): Աշխատանքի այս ձևը կարող է կիրառվել հիմնականում որպես այլ ձևերին ուղեկցող մեթոդ:

Օրինակ՝ բաց դռների օրերի ընթացքում կազմակերպվում են ցուցահանդեսներ, համերգներ, ծնողական ժողովներ և այլն: Ցուցահանդեսները

յուրատեսակ խթան են երեխաների համար, ովքեր ցանկանում են, որ ծնողները գովեն ու գնահատեն իրենց աշխատանքը:

- **Բաց դասերի կազմակերպում ծնողների համար**

Բաց դասերը սովորաբար կազմակերպվում են ծնողներին համար՝ առարկայի նոր ծրագրերին, ուսուցման մեթոդներին և ուսուցիչների պահանջներին ծանոթացնելու նպատակով: Ավելի հաճախ բաց դասեր կազմակերպվում են տարրական դպրոցում: Անհրաժեշտ է հնարավորություն տալ ծնողներին առնվազն վեց ամիսը մեկ կամ երկու անգամ ներկա գտնվել բաց դասի: Սա կօգնի խուսափել բազմաթիվ կոնֆլիկտներից, որոնք առաջանում են ծնողների կողմից այսօրվա դպրոցում կրթական գործունեության բարդությունների և առանձնահատկությունների անտեղյակության և թյուրիմացության հետևանքով:

- **Տեսադասեր ծնողների համար**

Հետաքրքիր դասերը կարելի է տեսաձայնագրել ծնողների համար: Այն աշակերտին օգնում է կողքից տեսնել իրեն, իսկ ծնողին ցույց է տալիս, թե ինչպիսին է իր երեխան դասի ժամանակ:

- **Համատեղ դասերի կազմակերպում**

Համատեղ դասերը շատ հետաքրքիր և արդյունավետ կարող են լինել: Ծնողը ուսուցչի հետ պլանավորում և անցկացնում է համատեղ դաս: Այստեղ հաճախ կարող է օգտագործվել ծնողի մասնագիտական ռեսուրսը:

- **Մանկավարժական քննարկում (բանավեճ)**

Մանկավարժական քննարկումը (բանավեճը) մանկավարժական մշակույթի կատարելագործման ամենահետաքրքիր ձևերից է: Վեճի տարբերակիչ առանձնահատկությունն այն է, որ թույլ է տալիս բոլոր ներկաներին ներգրավել առաջադրված խնդիրների քննարկմանը, նպաստում է ձեռք բերված հմտությունների և փորձի հիման վրա փաստերն ու երևույթները համակողմանի վերլուծելու ունակության զարգացմանը: Բանավեճի հաջողությունը մեծապես կախված է դրա պատրաստությունից: Մոտ մեկ ամիս առաջ մասնակիցները պետք է ծանոթանան ապագա բանավեճի թեմային, հիմնական խնդիրներին, գրականությանը: Բանավեճի ամենակարևոր մասը այն վարելն է: Այստեղ շատ բան որոշում է առաջնորդի պահվածքը (դա կարող է լինել ուսուցիչը կամ ծնողներից մեկը): Պետք է նախապես սահմանել կանոնները, լսել բոլորի

ելույթները, առաջարկել, փաստարկել ձեր դիրքորոշումը, վերջում ամփոփել, եզրակացություններ անել: Բանավեճի հիմնական սկզբունքը հարգանքն է ցանկացած մասնակցի դիրքորոշման և կարծիքի նկատմամբ: Ընտանեկան և դպրոցական կրթության ցանկացած վիճահարույց հարց կարող է դառնալ քննարկման թեմա: Օրինակ՝ «Մասնավոր դպրոց՝ կողմ և դեմ», «Մասնագիտության ընտրություն. ո՞ւմ գործն է» և այլն:

- **Դերային խաղերը ծնողների մասնակցությամբ**

Դերային խաղերը ստեղծագործական գործունեության ձև են: Ծնողների հետ դերային խաղերի մոտավոր թեմաները կարող են լինել՝ «Առավոտը ձեր տանը», «Երեխան վերադարձել է դպրոցից», «Ընտանեկան խորհուրդ» և այլն: Դերային խաղի մեթոդաբանությունը նախատեսում է թեմայի սահմանումը, մասնակիցների կազմը, նրանց միջև դերերի բաշխումը, մասնակիցների հնարավոր դիրքերի և վարքագծային օրինաչափությունների նախնական քննարկումը: Միևնույն ժամանակ, կարևոր է խաղալ մասնակիցների վարքագծի մի քանի տարբերակներ (դրական և բացասական) և համատեղ քննարկման միջոցով ընտրել գործողության լավագույն տարբերակը տվյալ իրավիճակի համար:

- **Համատեղ միջոցառումներ (համերգներ, տոնական համարներ, ներկայացումներ) ծնողների մասնակցությամբ**

Դպրոցը կազմակերպում է միջոցառումներ, որոնց ներգրավվում են ծնողները: Այն թույլ է տալիս նրանց ավելի լավ ճանաչել իրենց երեխաներին, բացահայտել նրանց հետաքրքրությունները, հոբբիները, տաղանդավոր կամ դեռևս անհայտ կողմերը: Նախապես պետք է գնահատել ծնողների կարողությունները և հետաքրքրությունները՝ իմանալու, թե ինչ գործունեության մեջ կարող են նրանք ներգրավվել, ելույթ ունենալ իրենց երեխաների հետ: Երբեմն ծնողներն են կազմակերպում ելույթներ, ներկայացումներ, անակնկալ համարներ իրենց երեխաների համար:

Կազմակերպվում են նաև ֆիլմերի և ներկայացումների քննարկումներ:

- **Մրցույթներ ծնողների մասնակցությամբ**

Կազմակերպվում են սպորտային, խաղային, ինտելեկտուալ, հումորային և տարատեսակ այլ մրցույթներ երեխաների և իրենց ծնողների մասնակցությամբ:

- **Տարատեսակ նախագծերի կազմակերպում**

Նախագծերի կազմակերպումը ծնողների մասնակցությամբ ծնողի ներգրավվածությունից բացի, կարող է նաև կրթական, դաստիարակչական և այլ նպատակներ հետապնդել: Ուսուցիչն իր մասնագիտական ստեղծագործ ճկունությունը գործի դնելով՝ իր առջև դրված նպատակների հիման վրա կարող է կազմակերպել նախագծեր և ներգրավել նաև ծնողներին:

Կարելի է, օրինակ, անցկացնել երեկույթ-հանդիպում «Մեր ընտանիքի հոբբիների աշխարհը» թեմայով, որտեղ ցուցադրվում են արհեստագործական նմուշներ, հուշանվերներ՝ այն ամենը, ինչ ընտանիքը պատրաստում կամ կազմակերպում է ազատ ժամանակ:

- **Հետաքրքրաշարժ մաթեմատիկա**

Զգացեք մաթեմատիկայի զվարճանքը միջնակարգ դպրոցի ինտերակտիվ միջոցառման ժամանակ, որտեղ ծնողներն ու աշակերտները կարող են աշխատել և խաղալ միասին՝ լուծելու պետական չափորոշիչներին համապատասխան մաթեմատիկայի վրա հիմնված խնդիրներ, վարժություններ: Այս միջոցառումը նախատեսված է բոլորի համար գրավիչ և համատեղ փորձառություն ունենալու համար, որտեղ սովորողները կարող են ակտիվ դեր ունենալ այնպիսի ինտերակտիվ կայաններ ստեղծելու գործում, ինչպիսիք են՝ մաթեմատիկական բինգո, փազլներ, դոմինո և շատ այլ խաղեր ու վարժություններ:

- **Ընթերցանություն**

Ընտրեք մի շաբաթ, որի ընթացքում ընթերցանությանը առանձնահատուկ ուշադրություն կդարձվի: Տեղեկացրեք ծնողներին, որ այս շաբաթվա ընթացքում ամեն օր նրա երեխան գիրք է կարդում: Խնդրեք ծնողին՝ այդ ընթացքում ինքն էլ

կարդա: Օրվա վերջին նրանք երեխայի հետ միասին կարող են քննարկել, թե ինչ են կարդացել այդ օրը:

- **Ծնողական ակտիվության լուսաբանում**

Տարվա ընթացքում լուսանկարեք կամ տեսագրեք ծնողի ներգրավման ծրագրի շրջանակներում անցկացված միջոցառումների ու գործունեությունների ընթացքը: Պատրաստեք սլայդ-շոու առանձին կամ միասնական ձևաչափով և կազմակերպեք շնորհանդես ոչ ձևական, անկաշկանդ, հարմարավետ միջավայրում: Այս միջոցառումն ստեղծում է զվարճալի մթնոլորտ ծնողների, ծրագրի ակտիվ մասնակիցների համար, ինչպես նաև մոտիվացնում մյուս ծնողներին մասնակցելու դպրոցական կյանքին:

4 ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՍՈՎՈՐՈՂ - ԾՆՈՂ-ԴԱՍԱՎԱՆԴՈՂ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ, ԿԼՈՐ ՍԵՂԱՆՆԵՐ

Հանրակրթության մասին օրենք, Հոդված 19.1

Ուսումնական հաստատությունում կրթական գործընթացի մասնակիցներն են՝

1) սովորողը.

2) սովորողի ծնողը.

3) ուսուցիչը և մանկավարժական այլ աշխատողներ.

4) վարչական աշխատողները.

5) խորհրդում և խորհրդակցական մարմիններում ընդգրկված՝ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները և այլ անձինք: **(Հանրակրթության մասին օրենք, 2009)**

Որպես ծնողներ և մանկավարժական աշխատողներ՝ մենք ցանկանում ենք բազում դռներ բացել մեր երեխաների համար՝ նրբանկատորեն մղել նրանց ճիշտ ուղղությամբ: Կրթական առաջին աստիճանում (1-4-րդ դասարան) և կրթական երկրորդ աստիճանի 5-6-րդ դասարաններում ամեն ինչ քիչ թե շատ ընթանում է ըստ սպասվածի: Մեր երեխաները սովորում են, թե որն է ճիշտն ու սխալը, երբ պառկել քնելու և երբ արթնանալ առավոտյան, ինչին ձեռք չտալ, ինչ չանել և այլն: Նրանք ընդունում են դպրոցի կարևորության, քաղաքավարի լինելու անհրաժեշտությունը և երբ ֆիզիկական կամ էմոցիոնալ ցավ են զգում, դիմում են մեզ օգնության համար: Ի՞նչ է պատահում, երբ նրանք դառնում են տասնչորս, տասնհինգ, տասնվեց տարեկան: Ինչպե՞ս է կիրթ, լավ դաստիարակված, երջանիկ, հնազանդ երեխան, որին ճանաչում ենք ավելի քան մեկ տասնամյակ, հանկարծ դառնում մեզ համար բոլորովին անծանոթ մեկը: Երեխաները փոխվում են և փորձում գտնել իրենց տեղն աշխարհում, նրանց ուղեղն ու մարմինը ենթարկվում են լուրջ վերակազմավորման, և նրանց ակնհայտ անխոհեմությունը, կոպտությունն ու համառությունը նրանց մեղքը չէ: Այս ամենը բացատրելի է նյարդաբանական, հոգեբանական և ֆիզիոլոգիական տեսանկյունից: Որպես ծնող կամ դասավանդող՝ մենք պետք է հիշենք այս ամենի մասին ամեն ժամ (Фрэнсис Э. Дженсен, 2021):

Դեռահասության տարիքում երեխաները հայտնվում են տարբեր դժվարին իրավիճակներում, և այն, թե ինչպես են ծնողները վերաբերվում այլ երեխաների հետ տեղի ունեցած պատմություններին և պատմում դրանք իրենց երեխաներին, չափազանց կարևոր է: Վերաբերմունքը կամ արտահայտման ձևը չպետք է լինի այս կամ նման կերպ. «Օ՜, վա՜յ, ես այնքան ուրախ եմ, որ դա իմ երեխան չէր»: Կամ՝ «Իմ երեխան երբեք դա չէր անի»: Որովհետև դուք չգիտեք: Ցանկալի է, որ ծնողները երեխաների միտքը բեռնեն իրական պատմություններով, իրական հետևանքներով, և դա անեն նորից ու նորից՝ ընթրիքի ժամանակ, ֆուտբոլի մարզումից հետո, երաժշտության դասից առաջ և նույնիսկ՝ երբ երեխաները բողոքում են, որ այդ ամենը նախկինում լսել են: Պետք է անընդհատ հիշեցնել նրանց՝ նման բաներ կարող են պատահել ցանկացած պահի: Եվ կան բազմաթիվ իրավիճակներ, որոնք կարող են նրանց դժբախտության մեջ գցել և վատ ավարտ ունենալ:

Այս ամենը գիտենալով՝ դասավանդողները և ծնողները, միավորելով ուժերը և համագործակցելով, պետք է կարողանան ճիշտ արժևորել խոսքերի ուժը, որոնք հիասթափեցնում կամ վստահություն են ստեղծում, հանգեցնում առճակատման կամ նպաստում փոխգործակցության, երեխային զրկում մտածելու և կենտրոնանալու ունակությունից կամ նրա մեջ արթնացնում սովորելու բնական ցանկությունը: Մեզ համար պարզ է, որ մենք հսկայական պատասխանատվություն ունենք ժամանակակից սերնդի հանդեպ:

Մեր ժամանակներում երեխաները հաճախ ականատես են լինում դաժան պատկերների, տեսնում են, որ շատ խնդիրներ կարելի է լուծել ուժի, դանակների, կրակոցների կամ զենքի միջոցով: Երբեք նախկինում մենք այդքան հրատապ կարիք չենք ունեցել ցույց տալու մեր երեխաներին ազնիվ և հարգալից հաղորդակցության միջոցով խնդիրների լուծման իրատեսական մոդել: Սա միակ ճանապարհն է, որով մենք կարող ենք պաշտպանել երիտասարդ սերնդին բռնի ազդակներից: Երբեմն դեպրեսիայի և սաստիկ զայրույթի պահերին երեխաները կարող են դիմել բռնության կամ ընտրել այն խոսքերը, որոնք լսել են իրենց կյանքում կարևոր դեր ունեցող մարդկանցից:

Երեխաների զգացմունքների և վարքի միջև ուղիղ կապ կա: Եթե երեխաները ճիշտ զգացմունքներ են ունենում, նրանք իրենց ճիշտ են պահում:

Ինչպե՞ս կարող ենք օգնել նրանց ճիշտ զգացմունքներ ունենալ: Պարզապես պետք է հասկանալ և ընդունել նրանց զգացմունքները: Դիտարկենք օրինակ, երբ երեխան չի ընդգրկվել որևէ խմբում.

Զգացմունքների ժխտում՝

– Անհիմն նեղանում ես:

– Աշխարհը գլխիվայր չի շուռ գա, քանի որ քեզ թիմ չընդունեցին: Մոռացիր դա:

Փիլիսոփայական արձագանք՝

– Կյանքը միշտ չէ, որ արդար է, բայց պետք է սովորել ընդունել հարվածը:

Խորհուրդ՝

– Մի կանգ առ այս անհաջողության վրա: Փորձիր միանալ մեկ այլ թիմի:

Հարցեր՝

– Ի՞նչ ես կարծում, ինչո՞ւ քեզ չընդունեցին: Մյուս խաղացողներն ավելի լա՞վն էին, քան դու: Ի՞նչ ես պատրաստվում անել հաջորդիվ:

Պաշտպանելով մյուս կողմին՝

– Փորձիր քեզ դնել մարզչի տեղը: Նա ցանկանում է հաղթող թիմ ստեղծել: Նա դժվարանում է որոշել, թե ով մնա, ով գնա:

Ափսոսանք՝

– Օ՜, խեղճ: Ես շատ եմ ցավում քեզ համար: Դու այնքա՜ն փորձեցիր թիմում ընդգրկվել, բայց չկարողացար: Այժմ բոլորը կիմանան այդ մասին: Դու հավանաբար ամոթից կմեռնես...

Սիրողական հոգեվերլուծություն՝

– Երբևէ մտածե՞լ ես, որ իրականում հեռացվել ես թիմից, քանի որ տրամադրված չէիր այս խաղին: Կարծում եմ, որ ենթագիտակցորեն դու ինքդ ցանկանում էիր հեռանալ թիմից, ուստի ամեն ինչ ճիշտ եղավ:

Այսպիսի իրավիճակներ շատ հաճախ են հանդիպում, և հետադարձ կապի ճիշտ տրամադրումը կարող է լիցքաթափել կամ թեժացնել իրավիճակը:

Զգացմունքները հերքելու փոխարեն...

Երբ սովորողի զգացմունքները հերքվում են, նա արագ կորցնում է հետաքրքրությունը սովորելու նկատմամբ: Ահա մի կարճ կոմիքս, որը ցույց է տալիս, թե ինչ հետևանքներ կարող է ունենալ զգացմունքները հերքելը:

Բառերով արտահայտեք ձեր զգացմունքները



Երբ բացասական զգացմունքները հասկացվում են, սովորողը պատրաստակամորեն շարունակում է ուսումը:

Ճանաչեք սովորողի զգալու իրավունքը, նույնիսկ եթե նրա վարքն անընդունելի է:

Սովորողները ավելի հեշտ են փոխում վարքագիծը, երբ դասավանդողները և ծնողները հասկանում են իրենց զգացմունքները:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՃԱՆԱՉԵԼ

Հաճախ հանդիպող մի քանի իրավիճակներ.

Երեխա. Ես 6 ստացա միայն մի քանի հիմար սխալների պատճառով:

Ծնող. Մի անհանգստացիր: Հաջորդ անգամ հաջողության կհասնես:

Երեխայի զգացմունքները նսեմացնելու փոխարեն կարելի է.

- Վավերացնել դրանք: «Դու շատ վրդովված ես թվում: Շատ հիասթափեցնող է իմանալ պատասխանը և ցածր գնահատական ստանալ պարզ սխալի պատճառով»:
- Համերաշխություն ցուցաբերել և ապրումակցել երեխային իր զգացմունքներն արտահայտելիս՝ օգտագործելով այսպիսի ձայնարկություններ կամ բառեր. «Օ՜», «Մմմ-մմ», «Այո, այո», «Ես տեսնում եմ»:

- Առաջարկեք ձեր երեխային ֆանտաստիկ մի բան, որը իրականում չեք կարող տալ: «Հիանալի կլինի, չէ՞, ունենալ կախարդական մատիտ, որը կդադարի գրել, երբ սխալվում ես»:

Կլոր սեղաններն ու քննարկումները օգնում են դասավանդողներին և ծնողներին ավելի լավ հասկանալ սովորողներին հուզող խնդիրները:

Ներկայացնենք դասավանդողների և ծնողների կողմից հաճախ տրվող հարցեր և առաջարկվող լուծումներ:

Ծնողների կողմից հաճախ հնչեցվող հարցեր

- **Իմ յոթնամյա որդին հաճախ է զայրանում, երբ տնային աշխատանք է կատարում: Եթե նա չի կարողանում խնդիրը լուծել, նոթատետրից հանում է մի թուղթ, նետում հատակին կամ կոտրում մատիտը: Ինչպե՞ս վարվել բացասական էներգիայի պոռթկումների դեպքում:**

Նրան պետք է ասել. «Երբ չես կարողանում գտնել պատասխանը, դա միշտ շատ տհաճ է: Ես հասկանում եմ, որ դու ուզում ես պատռել ու դեն նետել: Երբ դու այդպես ես զգում, միշտ կարող ես ասել. «Հայրիկ, ես այնքան զայրացած եմ: Չե՞ս կարող օգնել ինձ: Միգուցե այդ ժամանակ մենք կարողանանք տնային աշխատանքը միասին կատարել»:

- **Անցյալ շաբաթ 13-ամյա դուստրս այնքան վրդովված էր, որ չկարողացավ կատարել իր տնային աշխատանքը կամ պատրաստվել գրավոր աշխատանքին: Նա իր լավագույն ընկերուհուն ասել է, որ սիրահարվել է մի տղայի: Իսկ ընկերուհին անմիջապես այդ մասին պատմել է այդ տղային: Երբ իմացա, որ աղջիկս իրեն դավաճանված է զգում, չգիտեի՝ ինչ ասել նրան կամ ինչ խորհուրդ տալ: Ի՞նչ պետք է անեի:**

Խորհուրդ տալիս, նույնիսկ այն ժամանակ, երբ քեզնից խնդրել են («Մայրիկ, ի՞նչ անեմ»), դու միշտ բախվում ես որոշակի վտանգի: Երեխան ծանր հուզական վիճակում է և կարող է պարզապես չլսել ձեր խոսքերը: Նա չափազանց մեծ ցավ է ապրում: Ձեր ամենաբարի խորհուրդը կարող է անտեղի թվալ («Ի՞նչ կապ ունի այս ամենը ինձ հետ») կամ նվաստացուցիչ («Դուք կարծում եք, որ ես այնքան հիմար եմ, որ չե՞մ կարող ինքնուրույն պարզել իմ խնդիրները»): Երեխան կարող է խորհուրդը համարել ներխուժում իր գաղտնիության ոլորտ («Ինձ մի ասա, թե

ինչ պետք է անեմ») կամ նույնիսկ՝ սպառնալիք («Այս ամենը շատ լավ է, բայց ես երբեք չեմ կարողանա դա անել»): Մինչ ձեր դուստրը կսկսի մտածել իր խնդրի լուծումների մասին, նա կարող է կիսվել ձեզ հետ մի շարք մտքերով. «Պե՞տք է վիճեմ ընկերուհուս հետ: Բայց ինչպե՞ս: Հնարավո՞ր է նրան վստահել ապագայում: Արդյո՞ք ես պետք է հարաբերություններ պահպանեմ նրա հետ: Ինչ-որ բան ասե՞մ այդ տղային: Իսկ եթե պետք է, ապա ի՞նչ»: Սրանք բոլորը շատ լուրջ հարցեր են, և դրանց պատասխանելով՝ ձեր դուստրը կկարողանա ավելի լավ հասկանալ մարդկային հարաբերությունների բնույթը: Կոնկրետ խորհուրդներ տալով՝ աղջկան կզրկեք կյանքի փորձ ձեռք բերելու հնարավորությունից:

Կարծում եք, որ ձեր երեխային ընդհանրապես խորհուրդ տալ պետք չէ՞:

Երբ երեխան սկսի լսել ձեզ, դուք կարող եք նրան ուղղել այսպիսի հարցեր. «Ինչպե՞ս ես վերաբերվում ...», «Ի՞նչ ես կարծում, չէ՞ որ ...», «Չպետք է անեիր...», «Ի՞նչ ես կարծում, ի՞նչ կլինի, եթե դու...»: Ձեր երեխային հնարավորություն տալով ընդունել, մերժել կամ վերլուծել ձեր առաջարկները՝ դուք նրան ավելի ընկալունակ եք դարձնում ձեր մտքերի ու խորհուրդների հանդեպ:

- **Ի՞նչ անել, եթե երեխան հրաժարվում է խոսել այն մասին, թե ինչն է իրեն անհանգստացնում:**

Մեծահասակները միշտ ունենում են զգացմունքներ, որոնց մասին չեն ցանկանում պատմել ուրիշներին: Մեզանից ոմանք նախընտրում են ամեն ինչ ինքնուրույն պարզել: Երեխաները ևս նույն կերպ են վարվում, երբ ցանկանում են ինքնուրույն կարգավորել սեփական զգացմունքները: Դա միանգամայն հասկանալի է: Նույնիսկ կարեկցելու պատրաստակամությունը կարող է բախվել երեխայի հոգեբանական ներփակվածությանը, օրինակ՝ երբ ասում եք. «Թվում է, թե այսօր ինչ-որ տհաճ բան է պատահել», երեխան շրջվում է, գնում իր սենյակ կամ անկեղծորեն խոստովանում. «Չեմ ուզում խոսել այդ մասին»: Այս դեպքում դուք պետք է պարզապես տեղեկացնեք նրան, որ դուք միշտ պատրաստ եք օգնել, եթե նա փոխի իր միտքը:

- **Վերջերս տղաս քայլում էր տանը ու կշտամբում իր պատմության ուսուցչին. «Նա ստիպում է մեզ ամեն օր հոդվածներ կարդալ: Ամեն շաբաթ մենք ունենում ենք բանավեճեր և թեստեր: Ոչ ոք մեզ չի ստիպում այդքան**

աշխատել, որքան ընկեր Մ-ն»: Չգիտեմ՝ ինչպես արձագանքել: Ես արդեն խղճում եմ որդուս:

Տղան խղճահարության կարիք չունի: Նրան պետք է, որ ծնողները հասկանան իրեն և աջակցեն իր բողոքն արտահայտելիս: Փորձեք առաջարկել հետևյալը. «Ընկեր Մ-ն կարծես շատ լուրջ է վերաբերվում իր աշխատանքին»: «Կարծես թե դու իսկապես լուրջ ճնշման տակ ես»: «Բայց եթե դու ուսուցիչ լինեիր, ամեն շաբաթ արձակուրդներ կկազմակերպեի՞ր քո աշակերտների համար...»: «Ընկեր Մ-ն կարծես խիստ և պահանջկոտ ուսուցիչ է: Նրա բոլոր պահանջները բավարարելը պետք է որ դժվար լինի»:

Քննարկենք մի քանի հարցեր, որոնք հաճախ են հնչեցվում ուսուցիչների կողմից:

- **Պե՞տք է հաշվի առնել սովորողների զգացմունքները: Սա հոգեբանի գործը չէ՞: Ես բավականաչափ ժամանակ չունեմ դրանով զբաղվելու համար...**

Երբեմն այն, ինչ մեզ համար դժվար է թվում, ամենապարզ ու հասարակ լուծումն ունի: Ավելի լավ է մի քանի րոպե հատկացնել՝ հասկանալու աշակերտի զգացմունքները, քան հետագայում բախվել մի խնդրի, որը կխլի շատ ժամանակ և էներգիա: Բացի այդ, նման կերպ վարվելով՝ մենք կօգնենք երեխային, ով հայտնվել է դժվարին իրավիճակում:

- **Երբ սովորողներին հարցնում եմ իրենց զգացմունքների մասին, նրանք ինձ ոչինչ չեն ասում, այլ խոսակցությունը շեղում են: Ինչո՞ւ է դա տեղի ունենում:**

Հաճախ դասավանդողները սկսում են երեխաներին հարցեր տալ իրենց զգացմունքների մասին, որի հետևանքով նրանք զգացմունքային անհարմարություն են զգում: «Ի՞նչ զգացիր... Իսկ ի՞նչ ես զգում հիմա... Զայրու՞յթ... Վա՞խ... Ինչո՞ւ ես զգում այս առանձնահատուկ զգացմունքները»: Նման հարցերը ստիպում են երեխաներին փակվել իրենց մեջ: Նրանց համար տհաճ են հատկապես այն հարցերը, որոնք կապված են իրենց ապրած որոշակի զգացմունքների պատճառների հետ: Հենց միայն «ինչո՞ւ» բառը ստիպում է երեխային գնահատել իր զգացմունքները և փնտրել դրանց առաջացման տրամաբանական պատճառներ, որոնք ընդունելի են մեծահասակների համար: Շատ հաճախ երեխան պարզապես չգիտի պատճառը: Նա չունի հոգեբանական գիտելիքներ՝ պատասխանելու համար. «Երբ կանգառի երեխաները սկսեցին ծաղրել ինձ, դա մեծ հարված հասցրեց իմ ինքնագնահատականին»: Երբ երեխան

դժգոհ է, նա այնպիսի ծնողի կամ ուսուցչի կարիքն ունի, ով հասկանում է, թե ինչ է կատարվում նրա հոգում. «Երբ քեզ ծաղրում են, դա իսկապես տհաճ է: Ինչ էլ որ լինի պատճառը, դա միշտ էլ տհաճ է»: Դրանով դուք ձեր երեխային ցույց կտաք, որ եթե նա ցանկանում է խոսել այս թեմայի շուրջ, ապա նրա կողքին կա հասկացող ու օգնելու պատրաստ մեծահասակ:

- **Ես ավագ դպրոցի աշակերտ ունեմ անապահով ընտանիքից: Ինձ համար շատ դժվար է հասկանալի լինելը, երբ նա ասում է. «Ես ատում եմ քեզ», «Դու ստում ես», կամ օգտագործում է այնպիսի բառեր, որոնք ես նույնիսկ չեմ կարող կրկնել: Ես չգիտեմ, թե ինչպես արձագանքել նման պահվածքին: Կարո՞ղ եք ինձ որևէ խորհուրդ տալ:**

Երբեմն դժվար երեխաները միտումնավոր փորձում են իրենց ուսուցիչներին: Երեխաները սիրում են «շղթան քաշել» և ուսուցչին ներգրավել երկար ու անօգուտ վեճի մեջ՝ զվարճության առիթ տալով ամբողջ դասարանին: Թշնամաբար տրամադրվելու փոխարեն կարող եք հանգիստ ասել. «Ինձ դուր չի գալիս այն, ինչ հենց նոր լսեցի: Եթե բարկանում ես, զայրույթդ այլ կերպ արտահայտիր, հետո ես քեզ կլսեմ»:

ԻՆՉՊԵՍ ՀԱՍՆԵԼ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՏԱՆԸ ԵՎ ԴՊՐՈՑՈՒՄ

Դիտարկենք օրնակ.

Դասավանդող - Ո՞վ է թափել ներկը հատակին:

Հարցաքննելու և քննադատելու փոխարեն՝

1. Նկարագրեք խնդիրը. «Ես հատակին թափված ներկ եմ տեսնում»:
2. Տվեք տեղեկատվություն. «Անհրաժեշտ է ներկը չորանալուց առաջ մաքրել»:
3. Առաջարկեք ընտրություն. «Դուք կարող եք հատակը սրբել խոնավ շորով կամ սպունգով»:
4. Ցույց տվեք ձեր վերաբերմունքը բառով կամ ժեստով. մաքրեք:
5. Նկարագրեք ձեր զգացմունքները. «Ես չեմ սիրում, երբ ամբողջ հատակը կեղտոտ է»:
6. Գրեք գրատախտակին ուղերձ. «Ուշադրություն բոլոր նկարիչներին. Խնդրում ենք հատակը վերադարձնել իր սկզբնական վիճակին տուն գնալուց առաջ: Շնորհակալություն: Տնօրինություն»:

Կարող եք իրավիճակը հանգուցալուծել խաղով (օգտագործեք այլ ձայն կամ առոգանություն), օրինակ՝ ռեպ ոճով երգեք՝ դիմելով երեխաներին.

Հատակին ներկ եմ տեսնում,
Եվ այն հեռու անկյունում:
Շտապ վերցրու դու մի կտոր,
Մաքրիր շտապ և հավեսով:

- **Երեկ ես մի առաջին դասարանցու ասացի. «Ջ., դու ոտքդ դուրս հանեցիր շարքից»: Նա նայեց ներքև և ասաց, որ ոչինչ չի արել: Ես չգիտեի, թե ինչ անել հետո:**

Դուք միշտ կարող եք կրկնել ձեր խոսքը: Եթե երեխան դեռ չի արձագանքում, տվեք նրան լրացուցիչ տեղեկություններ. «Ինչ-որ մեկը կարող է սայթաքել»: Որոշ երեխաներ պետք է մի քանի անգամ լսեն նկատողությունը:

- **Հետաքրքիր է, արժե՞ դեռահասներին պարզաբանում տալ: Նկարչության դասին պատրաստեցինք կոլաժներ: Ես մի աղջկա ասացի. «Մածուկը չորանում է, եթե սրվակը փակված չէ»: Աղջիկը կկոցեց աչքերը և ասաց. «Այո, ես գիտեմ»: Ինչո՞ւ նա այսպես արձագանքեց իմ խոսքերին:**

Տեղեկատվությունը պետք է համապատասխանի տարիքին: Եթե դեռահասին ասեք մի բան, որ նա արդեն գիտի, նա ձեր խոսքերը կընդունի որպես վիրավորանք: Պարզապես պետք էր նրբորեն հիշեցնել նրան. «Ներկը»:

- **Ո՞րն է տարբերությունը մեկ բառով հիշեցման և հրամանի միջև: Եթե ասեմ՝ «Նստե՛ք», դա հրաման չէ՞:**

Եթե դուք օգտագործում եք բայը՝ որպես միավանկ հիշեցում («Կանգնեք, վեր կաց, գնացեք, նստեք»), ապա դուք իսկապես հրամայում եք: Մեկ բառով հիշեցումն առավել արդյունավետ է, երբ այն գոյական է: «Անի… քո տեղը». Լսելով այս արտահայտությունը՝ Անին կմտածի. «Իմ տեղը… Իսկ ի՞նչ է դա… Օ՛, ես պետք է այնտեղ նստեմ… Ավելի լավ է նստեմ»: Դուք աղջկան չեք թելադրել, թե ինչ պետք է անի: Դուք այդ հարցով նրա ուշադրությունը հրավիրում եք այն հանգամանքին, որ նա կարող է ինքնուրույն որոշել իր գործողությունները:

- **Ես կարծում էի, որ ընտրությունը միշտ «սովորողին դրդում է համագործակցության»: Իմ դասարանում երկու աղջիկներ կան, որոնք անընդհատ խոսում են: Ես նրանց ասացի. «Դուք ունեք ընտրելու հնարավորություն՝ կամ դադարեցնում եք զրուցել, կամ ես ձեզ կնստեցնեմ**

տարբեր գրասեղանների մոտ»: Նրանք չդադարեցին զրուցել, և երբ ես նրանց նստեցրի, նրանք սկսեցին բողոքել իմ «անարդարությունից»: Ի՞նչն եմ սխալ արել:

Առաջարկվող «ընտրությունը» ավելի շատ հնչում է որպես սպառնալիք. «Կամ դուք դա արեք ինձ համար, կամ ես դա կանեմ ձեզ հետ»: Սովորողը իրեն այլընտրանքից զրկված է համարում և թշնամաբար է տրամադրվում: Սովորողների համար տհաճ ընտրություն առաջարկելուց առաջ խորհուրդ ենք տալիս ընդունել նրանց զգացմունքները: Դուք կարող եք նման բան ասել. «Ես գիտեմ, որ դժվար է նստել քո լավագույն ընկերոջ կողքին և չխոսել նրա հետ: Ի վերջո, դուք այնքան շատ բան ունեք միմյանց ասելու»: Եվ հետո, երբ ընտրություն առաջարկեք, փորձեք այնպես անել, որ սովորողները զգան, որ դուք իրենց կողքին եք: «Դե, աղջիկներ, ո՞րն է ձեզ ամենաշատը դուր գալիս՝ նստեք իրար կողքի և կառավարե՞ք ինքներդ ձեզ... Թե՞ նստեք տարբեր գրասեղանների մոտ և չշփվեք: Դասերից հետո քննարկեք սա և վաղը տեղեկացրեք ինձ ձեր որոշման մասին»:

Սովորողների վարքագիծը կառավարելու համար հանրակրթական դպրոցներում կիրառվում են կարգապահական տույժեր:

Հանրակրթության մասին օրենքի Հոդված 21-ում, որը սահմանում է **սովորողների նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերը, նշված է՝**

1. Ուսումնական հաստատությունում կարգապահությունն ապահովվում է օրենքով, ուսումնական հաստատության կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով սահմանված կարգով:
2. Ուսումնական հաստատության ներքին կարգապահական կանոնները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում սույն օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով միջին և ավագ դպրոցների սովորողների նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը.
   1) նկատողություն
   2) խիստ նկատողություն (Օրենք, 2023):

Ներկայացնենք մի քանի կարծիքներ սովորողներին պատժի ենթարկելու և վարքագիծը կառավարելու մասին.

Դոկտոր Չայմ Ջինոտը գրում է. «Պատիժը չի վերացնում անընդունելի վարքագիծը, այն պարզապես ստիպում է երեխային ավելի ուշադիր լինել իր «զանցանքների» նկատմամբ: Նա ավելի լավ է քողարկում իր հետքերը, և նրան բռնացնելն ավելի դժվար է դառնում: Երբ երեխան պատժվում է, նա որոշում է ավելի զգույշ լինել, ոչ թե ավելի ազնիվ ու պատասխանատու»:

Ըստ դոկտոր Իրվին Ա. Հայմանի՝ «Ֆիզիկական պատիժը երեխաներին սովորեցնում է, որ խնդիրները կարելի է լուծել բռնության միջոցով»:

Դոկտոր Ռուդոլֆ Դրեյկուրսի կարծիքով՝ «Այսօր ծնողներն ու ուսուցիչներն այլևս չեն կարող ստիպել երեխաներին հնազանդվել: Իրականությունը պահանջում է, որ մենք օգտագործենք նոր մեթոդներ՝ ազդելու և երեխաներին փոխվել դրդելու համար: Պատիժները՝ ծեծելը, նվաստացումը, ինչ-որ բանից զրկելը, կարգապահությունը կիրառելու հնացած և անարդյունավետ միջոցներ են»:

Դոկտոր Ալբերտ Բանդուրան էլ գտնում է, որ. «Պատիժը կարող է վերացնել անընդունելի վարքագիծը, բայց այն չի խրախուսում ցանկալի վարքագիծը և չի վերացնում երեխայի ոչ ճիշտ պահվածք դրսևորելու ցանկությունը»:

ՔՆՆԱՐԿԵՆՔ ՊԱՏԺԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ ՏԱՆԸ ԵՎ ԴՊՐՈՑՈՒՄ

Դիտարկենք օրինակ.

Սովորող - Անիծվես դու: Ես չեմ կարող լուծել այս խնդիրը:

Դասավանդող - Ես քեզ բազմիցս ասել եմ, որ վատ բառեր չօգտագործես: Հիմա դու կպատժվես:

Պատժի սպառնալիքի փոխարեն.

- Նշեք ճիշտ վարքագիծը. «Ես հասկանում եմ, որ դու դժվարանում ես: Բայց ավելի լավ կլիներ, եթե քո զգացմունքները փոխանցեիր առանց վատ բառեր օգտագործելու»:
- Արտահայտեք ձեր դժգոհությունը (առանց անձնական հարձակումների). «Ես նման խոսքեր չեմ սիրում»:
- Արտահայտե՛ք ձեր սպասելիքները. «Հուսով եմ, որ դուք կգտնեք մեկ այլ միջոց՝ ցույց տալու ինձ, թե որքան վրդովված եք»:
- Բացատրեք, թե ինչպես սովորողը կարող է շտկել իրավիճակը. «Ես կցանկանայի, որ դու կազմեիր բառերի ցանկ, որոնք կարող են օգտագործվել քո ասածների փոխարեն: Եթե օգնության կարիք ունես, բառարանը վերցրու»:
- Առաջարկեք ընտրություն. «Դու կարող ես մտքում օգտագործել այդպիսի բառեր՝ առանց դրանք բարձրաձայնելու, կամ ընտրել այնպիսի բառեր, որոնք ոչ մեկին չեն վիրավորում»:
- Ցույց տվեք սովորողին իր վարքի հետևանքները. «Երբ ես նման խոսքեր եմ լսում, կորցնում եմ քեզ օգնելու ցանկությունը»:

Այսպիսով, դասավանդողները և ծնողները երեխաներին ավելի հաճախ պետք է խրախուսեն, քանի որ նրանք փորձում են հասկանալ իրենց շրջապատող աշխարհը և գտնել իրենց տեղը դրանում:

Սխալները մատնացույց անելու փոխարեն ցանկալի է սովորողին ցույց տալ ճիշտ վարքագիծը օրինակների միջոցով և ուղղորդել հաջորդ քայլերն անելիս:

Պետք է գիտակցել, որ խրախուսանքը չափավոր և տեղին օգտագործելը կարևոր նախապայման է: Խրախուսանքը կարող է՝

1. առաջացնել կախվածություն այլ մարդու կարծիքից.
   - Հիանալի գնահատականներ են: Ես հպարտանում եմ քեզնով:
   - Տնային աշխատա՞նքն ես անում, հիանալի է:
   - Դու շատ առատաձեռն ես:
2. Երեխային ստիպել հասկանալ սեփական հնարավորություններն ու ձեռքբերումները.
   - Կարծես համառ և առանց հոգնելու աշխատում ես այս կիսամյակում, դու կարող ես հպարտանալ քո արածով:
   - Պահանջվում է մեծ համառություն՝ նստել ու կատարել տնային առաջադրանքը, երբ դու այդքան հոգնած ես:
   - Տեսնելով, որ ընկերդ մոռացել է նախաճաշը, դու քոնը կիսեցիր նրա հետ:

Այսպիսով, 1-ին բաժնի մեկնաբանությունները ցույց են տալիս ծնողական վերահսկողության կերպը: Նրանք կարող են կա՛մ գովել երեխային, կա՛մ զերծ մնալ գովաբանելուց:

2-րդ բաժնի մեկնաբանություններն ընդգծում են երեխայի՝ ինքն իրեն գնահատելու կարողությունը:

Շատ կարևոր է նաև ազատել սովորողներին պարտադրված դերերից.

- Փնտրեք հնարավորություններ՝ ստիպելու սովորողներին տեսնել իրենց նոր լույսի ներքո:
- Սովորողներին դրեք այնպիսի իրավիճակներում, որտեղ նրանք կարող են իրենց տեսնել նոր լույսի ներքո:
- Սովորողները պետք է դասավանդողներից դրական ազդակներ ստանան, դրականը լսեն իրենց մասին:
- Մոդելավորեք ձեզ համար ցանկալի վարքագիծը:
- Հիշեցրեք սովորողներին իրենց ձեռքբերումների մասին:
- Արտահայտեք ձեր զգացմունքները և/կամ սպասումները:

ԻՆՉՊԵՍ ԱՋԱՏԵԼ ՍՈՎՈՐՈՂԻՆ ՁԱՆՁՐԱԼԻ ԴԵՐԻՑ ՏԱՆԸ ԵՎ ԴՊՐՈՑՈՒՄ

Դիտարկենք օրինակ.

Դասավանդող - Ն., դու շատ ես խոսում: Դու ոչ ոքի թույլ չես տալիս որևէ բառ արտասանել:

1. Պիտակներ փակցնելու փոխարեն կարող ենք.
   Սովորողին հնարավորություն տալ դիտել իրեն նոր տեսանկյունից. «Ի՞նչ ինքնատիրապետում: Չնայած ասելիք ունես, բայց հասկանում ես, որ ուրիշներն էլ են ուզում բարձրաձայնել իրենց ասելիքը»:
2. Երեխային դնել մի իրավիճակում, որում նա ստիպված կլինի նայել իրեն այլ տեսանկյունից. «Ն., ես կցանկանայի, որ դու ղեկավարես մեր քննարկումը և բոլորին հնարավորություն տաս խոսելու»:
3. Սովորողին հնարավորություն տալ լսելու, որ դուք դրական եք գնահատում նրան. «Ն.-ն այնքան փայլուն գաղափարներ ունի, որ նրա համար դժվար է չշարունակել: Այնուամենայնիվ, նա փորձում է զսպել իրեն»:
4. Մոդելավորել ցանկալի վարքագիծը. «Օ՛, կներեք, ես չէի ուզում ընդհատել ձեզ: Խնդրում եմ շարունակեք: Ես կսպասեմ»:
5. Սովորողին հիշեցնել նրա ձեռքբերումների մասին. «Հիշում եմ՝ մենք քննարկում էինք ճամփորդության վայրը ընտրելու հարցը: Դու հանգիստ լսում էիր, բայց երբ խոսեցիր, շատերը փոխեցին իրենց տեսակետը»:
6. Արտահայտել ձեր զգացմունքները և/կամ սպասումները. «Ն., շատերը պետք է խոսեն, ես ուզում եմ, որ դու կարճ խոսես» (Адель Фабер, 2016):

Եվ վերջապես, երբ երեխաներն ունենում են անսպասելի զգացմունքային պոռթկումներ, նրանց պատասխանելուց առաջ պարզապես կարելի է հաշվել մինչև տասը, այս ձևը կօգնի ձեզ հանգստություն պահպանել: Խորհուրդ չի տրվում բարկանալ կամ պատանեկան ճգնաժամն ընկալել որպես երեխայի զայրույթ: Դեռահասները կարծում են, որ իրենք մեծ են, և որքան շատ ենք նրանց վերաբերվում ինչպես մեծահասակների, այնքան ավելի մեծ է հավանականությունը, որ նրանք իրենց այդպես կպահեն:

Դասավանդողները այս ամենը փորձելով, քննարկումների, փորձի փոխանակման արդյունքում ձեռք բերած հմտությունների շնորհիվ խրախուսելով և մոտիվացնելով՝ կարող են սովորողներին առավելագույնս ներգրավել կրթական գործընթացում, ինչն էլ կնպաստի առարկայական չափորոշիչներով ու ծրագրերով պահանջվող վերջնարդյունքների ապահովմանը և հանրակրթության պետական չափորոշչով սահմանված ութ կարողունակությունների ձևավորմանը:

5 ԹՎԱՅԻՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Թվային տեխնոլոգիաները հեղափոխել են կրթությունը՝ դարձնելով այն ավելի մատչելի, ճկուն և հասկանալի ներառական տարբեր կարիքներ և կարողություններ ունեցող սովորողների համար: Ներառական կրթության նպատակն է ապահովել հավասար հնարավորություններ բոլոր սովորողների համար, ներգրավել նրանց դասարանում և օժանդակել՝ հասնելու առավելագույնին իրենց ուժերի սահմաններում՝ անկախ իրենց կարողությունների մակարդակից:

Դիտարկենք ներառական կրթության մեջ թվային տեխնոլոգիաների կիրառման մի քանի եղանակներ:

Օժանդակ տեխնոլոգիաներ

Ներառական կրթության ապահովման առումով շատ կարևոր են օժանդակ տեխնոլոգիաները, որոնք ԿԱՊԿ ունեցող սովորողներին հնարավորություն են տալիս մուտք գործել և ներգրավվել ուսումնական գործընթացում:

Դիսլեքսիա, տեսողության, լսողության խանգարումներ կամ ուսուցման այլ խնդիրներ ունեցող սովորողների համար կարող են շատ օգտակար լինել այնպիսի ծրագրաշարերն ու գործիքները, ինչպիսիք են Բրայլի ընթերցիչները, տեքստը խոսքի վերածող ծրագրաշարը, էկրանի ընթերցիչները և խոսքի ճանաչման ծրագրերը: Օրինակ, դիսլեքսիա ունեցող սովորողները կարող են օգտվել տեքստը խոսքի վերածող ծրագրաշարից՝ նյութն ավելի լավ ընկալելու համար, տեսողության տարբեր աստիճանի խնդիրներ ունեցող սովորողները կարող են օգտագործել Բրայլի ընթերցիչները, խոսքը ենթագրերի վերածելու հնարավորությունը և այլն:

Անհատականացված ուսուցում

Ուսուցումը հարմարեցնելով յուրաքանչյուր սովորողի եզակի պահանջներին, հետաքրքրություններին և սովորելու նախասիրություններին՝ ուսուցիչները կարող են օգտագործել թվային տեխնոլոգիաները՝ օգնելու սովորողներին ունենալ ավելի անհատականացված ուսումնառություն: Ադապտիվ ուսուցման ծրագրերը կարող են գնահատել սովորողի կատարողականը և համապատասխան կերպով փոփոխել դասընթացի նյութերը: Այս մեթոդով ուսուցիչները կարող են

հստակեցնել և բավարարել յուրաքանչյուր սովորողի ուսուցման յուրահատուկ կարիքները՝ միաժամանակ թույլ տալով սովորել իրենց սեփական տեմպով:

Համագործակցություն և հաղորդակցություն

Թվային տեխնոլոգիաները կարող են նպաստել սովորողների, ուսուցիչների և ծնողների միջև համագործակցությանը և հաղորդակցությանը՝ ստեղծելով ներառական ուսումնական միջավայր: Առցանց քննարկման ֆորումները, ՈՒԿՀ-երը (ուսումնառության կառավարման համակարգեր), տեսակոնֆերանսների գործիքները և սոցիալական մեդիահարթակները կարող են օգտագործվել հաղորդակցությունն ու համագործակցությունը ապահովելու և հեշտացնելու համար: Այս գործիքները թույլ են տալիս սովորողներին կիսվել իրենց գաղափարներով, ստանալ հետադարձ կապ և հաղորդակցվել իրենց հասակակիցների, ուսուցիչների և ծնողների հետ:

Մատչելիություն

Թվային տեխնոլոգիաները կարող են ուսումնական նյութերն ավելի մատչելի դարձնել ԿԱՊԿ ունեցող սովորողների համար: Էլեկտրոնային տարբերակով գրքերը, նյութերը ավելի մատչելի են տեսողության խնդիրներ ունեցող սովորողների համար, քանի որ հնարավոր է մեծացնել տառաչափը, ներառել ձայնագրություններ, որոնք կարող են բովանդակությունն ավելի հեշտ և հասկանալի դարձնել, առցանց հարթակներում այնպես նախագծել առաջադրանքները, որ հասանելի լինեն հաշմանդամություն ունեցող սովորողներին՝ ապահովելով, որ նրանք կարողանան իրենց հասակակիցների հետ հավասար հիմունքներով օգտվել ուսումնական նյութերից:

Մանրամասնենք վերոնշյալ գործիքներից մի քանիսը իրենց տեղակայման քայլաշարերով:

1. Ընթերցանության պարզեցում (տրաֆարետ) Easy Reader Chrome Extension

Easy Reader Chrome Extension-ը անվճար հավելված է, որը հասանելի է Chrome հարթակում: Easy Reader Chrome Extension-ը ստեղծվել է՝ օգտագործելով վեբ-տեխնոլոգիաները, ինչպիսիք են HTML, CSS և JavaScript: Easy Reader Chrome Extension-ը այդպիսի գործիք ստեղծելու մեծ ցանկության և ոգեշնչման արդյունք է և օգտատերերի համար ընթերցանության ավելի հարմարավետ միջավայր կապահովի (խելամիտ հարմարեցումներ՝ տեքստի չափ, լուսավորվածություն):

Մարտահրավերներ հաղթահարելով՝ հավելվածը հնարավորություն է տալիս հուսալիորեն աշխատել վեբ-կայքերի լայն տիրույթում: Easy Reader Chrome Extension-ի միջոցով սովորողները կարող են խուսափել աչքերի լարվածությունից, որն առաջանում է պայծառ վեբ-էջեր կարդալիս: Այս հավելվածը առաջարկում է ընտրված բովանդակությունն առանձնացնելու և խոշորացնելու հնարավորություն՝ աչքերը լարումից պաշտպանելու համար:

Այն առաջարկում է օգտագործողի համար հարմար ինտերֆեյս և անխափան կերպով ինտեգրվում է Chrome զննարկչին: Հարկ է նշել, որ հավելվածը առաջարկում է կարգավորումներ, որոնք էլ ավելի դյուրին են դարձնում աշխատանքը:

Ինչպե՞ս տեղադրել հավելվածը

Զննարկչի տողում հավաքելով EasyReader գրառումը՝ առաջարկվող տարբերակներից ընտրում ենք GoogleGhrome-ի համար գրառումը, և ակտիվանում է հետևյալ հղումը. https://chrome.google.com/webstore/detail/easyreader/boamfheepdiallipiieadpmnklbhadhc

Ընտրելով *Տեղադրել* (Add to Crome) կոճակը՝ բացվում է պատուհան, որտեղ հաստատում ենք գործողությունը, և հավելվածը տեղակայվում է GoogleGhrome-ի *Հավելվածներ* բաժնում:



Հավելվածը կարելի է ամրակայել արագ հասանելիության տողում:



Ծրագրի կիրառումը շատ պարզ է. ընտրում ենք էջը, և երբ ակտիվացնում ենք հավելվածի պիտակը, նշված հատվածը ընդգծված ձևով առաջ է տեղափոխվում՝ ընթերցողի ուշադրությունը կենտրոնացնելով այդ բովանդակության վրա:

Այսպիսով, Chrome-ի Easy Reader հավելվածը թույլ է տալիս օգտատերերին ակտիվացնել ստվերային ռեժիմը, որը նվազեցնում է աչքերի լարվածությունը և բարձրացնում ընթեռնելիությունը ցածր լույսի պայմաններում: Այն հնարավորություն է տալիս նաև հարմարեցնել տեքստի չափը՝ բովանդակությունը դարձնելով ավելի մատչելի և բարելավելով նրա ընթերցանությունը տարբեր

տեսողական նախապատվություններ ունեցող օգտատերերի համար: Հարկ է նշել նաև, որ Chrome բրաուզերի անխափան ինտեգրումը այն ձեռքբերումն է, որը դրական արձագանքներով և գնահատանքով է արձանագրվում օգտատերերի կողմից, ովքեր հաստատում են են, որ Easy Reader-ը օգտակար է իրենց ամենօրյա գործունեություն ժամանակ:

2. Գուգլ թարգմանիչ Google Translate

Google Translate-ը համարվում է թիվ 1 մեքենայական թարգմանիչն աշխարհում: Ծառայությունը ներառում է 103 լեզու և ամեն օր մշակում է մոտ 500 միլիոն հարցում: 2016 թվականին Google-ը ներկայացրեց Նեյրոնային մեքենայական թարգմանությունը (GNMT), որն օգտագործում է արհեստական նեյրոնային ցանց՝ թարգմանության որակը բարելավելու համար: Արդյոք թարգմանությունը իսկապե՞ս բարելավվել է դրա օգնությամբ: Եկեք պարզենք. ինչպե՞ս է աշխատում թարգմանչի ալգորիթմը: Հասկանալու համար, թե ինչպես է աշխատում Google-ի «նյարդային» թարգմանությունը, մի փոքր ավելի խորությամբ ուսումնասիրենք տեխնիկական մանրամասները: Google Neural Machine Translation-ը հիմնված է կրկնվող երկկողմանի նեյրոնային ցանցերի (երկուստեք ուղղորդված կրկնվող նեյրոնային ցանցերի) աշխատանքի սկզբունքի վրա՝ աշխատելով մատրիցային հավանականության հաշվարկներով: Մանրամասնորեն դիտարկենք, թե ինչ է նշանակում այս ամենը: Համակարգը հաշվարկում է բառի կամ արտահայտության իմաստը հաջորդականության նախորդ արժեքների հիման վրա: Սա այն է, ինչը թույլ է տալիս համակարգին հաշվի առնել համատեքստը և ընտրել թարգմանության տարբերակներից այն, որը լավագույնս համապատասխանում է իմաստին: Երկուղղորդությունը նշանակում է, որ նեյրոնային ցանցը բաժանված է երկու հոսքի՝ վերլուծող և սինթեզող: Պետք է նկատի ունենալ, որ վերլուծող ցանցը «կարդում է» նախադասությունը ոչ միայն ձախից աջ, այլև աջից ձախ: Սա թույլ է տալիս լիովին հասկանալ համատեքստը: Առանձին-առանձին այն կազմում է ուշադրության մոդուլ, որի օգնությամբ երկրորդ հոսքը հասկանում է առանձին իմաստային դրվագների արժեքը: Ինքնուսուցման համակարգը թույլ է տալիս նեյրոնային ցանցին մեծ ճշգրտությամբ թարգմանել նույնիսկ այն հասկացությունները, որոնք մյուս բառարաններում չկան՝ ժարգոն և այլն: Բայց սա դեռ ամենը չէ: Նեյրոնային ցանցը կարող է նաև տառ առ տառ աշխատել: Օրինակ՝ հատուկ անունները մի

այբուբենից մյուսը տառադարձելիս: Ամենահայտնի լեզուների զույգերը, ինչպիսիք են իսպաներեն-անգլերենը կամ ֆրանս-անգլերենը, ցույց են տվել ամենաբարձր արդյունքները՝ 85-87% ճշգրտությամբ:

Ինչպե՞ս ներբեռնել հավելվածը

Զննարկչի տողում հավաքելով Google Translate գրառումը՝ առաջարկվող տարբերակներից ընտրում ենք GoogleGhrome-ի համար գրառումը, և ակտիվանում է հետրյալ հղումը՝ https://chrome.google.com/webstore/detail/ google-translate/aapbdbdomjkkjkaonfhkkikfgjllcleb

Ընտրելով *Տեղադրել* (Add to Chrome) կոճակը՝ բացվում է պատուհան, որտեղ հաստատում ենք գործողությունը, և հավելվածը տեղակայվում է GoogleGhrome-ի *Հավելվածներ* բաժնում:



Հավելվածի առավելությունն այն է, որ կարգավորումները օգտատերերի համար հնարավորինս պարզ ու հասկանալի են: Սա նույնպես լուրջ մարտահրավեր էր, որը ստացել է իր լուծումը: Ծրագիրը ներբեռնելուց հետո բացված պատուհանի կոճակը ընտրելով՝ հավելվածը հայտնվում է զննարկչի գործողությունների տողում: *Ամրացնել* կոճակի սեղմումով այն հայտնվում է զննարկչի *Գործողություններ* տողում:

Կարգավորումները հնարավորություն են տալիս.

- ընտրել լեզուն,
- ցուցադրել պիտակը,
- չցուցադրել պիտակը և պատուհանը:

Կարգավորումները կատարելուց հետո այն հաստատում ենք *Պահպանել* կոճակը սեղմելով:



Ծրագիրը շատ մատչելի է օգտատերերի համար. տեքստի որոշակի հատված նշելուց անմիջապես հետո հայտնվում է թարգմանված տարբերակը:



Հավելվածը կարելի է ջնջել գրանցման հղումը ակտիվացնելով և ընտրելով *Հեռացնել* (Remove from Chrome) գրառումը:

3. Ձայնի փոխակերպումը տեքստի

Ամպային տեխնոլոգիաներն օգտագործում են համացանցը և կենտրոնական հեռավոր սերվերները (remote servers)՝ տվյալները և կիրառական ծրագրերը պահպանելու համար: Ամպային տեխնոլոգիաները թույլ են տալիս սովորողներին կիրառական ծրագրերն օգտագործել առանց ներբեռնման և մուտք գործել իրենց անձնական ֆայլեր համացանցի հասանելիությամբ ցանկացած համակարգչից: Այս տեխնոլոգիան թույլ է տալիս շատ ավելի արդյունավետ կերպով կատարել համակարգչային գործողություններ՝ (computing) կենտրոնացնելով պահպանումը, հիշողությունը, վերամշակումը և թողունակությունը (bandwidth): Ամպային տեխնոլոգիաների պարզագույն օրինակներ են Google Drive-ը, Drpobox-ը, Onedrive-ը և այլն: Դրանք օգտագործելու համար ծրագրային ապահովման կամ սերվերի անհրաժեշտություն չկա: Օգտվողին անհրաժեշտ է միայն համացանցային հասանելիություն, և նա կարող է ուղարկել էլեկտրոնային նամակներ:

Google Drive-ը ցանկացած տեսակի ֆայլեր պահելու համար հուսալի տարածք է (ամպային տեխնոլոգիա), որը կկանխի ձեր փաստաթղթերի կորուստը: Ամպի մեջ եղած ինֆորմացիան հասանելի է ցանկացած վայրից տարբեր սարքավորումների միջոցով (հեռախոս, պլանշետ, համակարգիչ): Google Drive-ից օգտվելու համար անհրաժեշտ է համացանցային հասանելիություն:

Google Drive-ը ոչ միայն պահպանում է տեղեկատվությունը, այլ նաև հնարավորություն է տալիս ստեղծել նոր փաստաթղթեր և հասանելի դարձնել մարդկանց տարբեր խմբերի համար: Google Drive-ը յուրաքանչյուր օգտվողի տրամադրում է 15 ԳԲ անվճար տարածք, իսկ 100 ԳԲ կամ 1 ՏԲ լրացուցիչ տարածքի համար պետք է վճարել:

Օգտատերերը մեծածավալ ինֆորմացիա մուտքագրելու համար երբեմն ունենում են լուրջ դժվարություններ, այդ պատճառով էլ ամպային տարածքում ներդրվել է ձայնը տեքստի վերափոխող գործիքը:

Ակտիվացնենք Drive կոճակը Google-ի *Հավելվածներ* բաժնից և, *Ստեղծել (New)* կոճակը սեղմելով, ընտրենք Google Document–ը:



Բացված պատուհանի գլխավոր մենյուից ընտրում ենք Tools/ *Գործիքներ* գրառումը և Voice typing/ *Ձայնային մուտքագրում* ենթահրամանը:



Աշխատանքային տարածքի ձախ հատվածում հայտնվում է խոսափողի նշանով փոքրիկ պատուհան, որը հնարավորություն է տալիս ընտրել խոսելու լեզուն:



Խոսափողի նշանի վրա սեղմելիս այն գունավորվում է կարմիր գույնով, և այդ պահից սկսած ինչ արտասանենք, վերածվում է տպագիր տեքստի:

Կարմիր կոճակի սեղմումով կարելի է դադարեցնել ձայնային տեքստի վերածումը տպագիր տեքստի:



Գործիքը օգնում է ժամանակ խնայել և ապահովում է ձայնային բովանդակության որակյալ փոխակերպումը տպագիր տեքստի 100-ից ավելի լեզուներով:

4. Ձայնային ուղղորդումներ, մեկնաբանություններ

Ինչպե՞ս ներբեռնել հավելվածը

Զննարկչի տողում հավաքելով Mote գրառումը՝ առաջարկվող տարբերակներից ընտրում ենք GoogleGhrome-ի համար գրառումը, և ակտիվանում է հետևյալ հղումը՝ https://chromewebstore.google.com/detail/mote-voice-notes-feedback/ajphlblkfpppdpkgokiejbjfohfohhmk

Ընտրելով *Տեղադրել (Add to Chrome)* կոճակը՝ բացվում է պատուհան, որտեղ հաստատում ենք գործողությունը, և հավելվածը տեղակայվում է GoogleGhrome-ի



Հավելվածներ բաժնում:

Հավելվածը ներբեռնելուց հետո բացված պատուհանի *Ամրացնել* կոճակն ընտրելով՝ հավելվածը հայտնվում է զննարկչի գործողությունների տողում:

Հավելվածը հնարավորություն է տալիս ավելացնել ձայնային մեկնաբանություններ: Օրինակ՝ երբ անհրաժեշտ է մեկնաբանություն թողնել Google Doc-փաստաթղթի միջավայրում, տեքստի անհրաժեշտ հատվածը նշելիս



բացվում է մեկնաբանությունների պատուհանը, որտեղ, ընտրելով առաջին տողը, հայտնվում է *Ձայնագրել* (Record your mote) պատուհանը, և այն ակտիվացնելով աշխատանքային տարածքում, կարող ենք ստեղծել ձայնային հաղորդագրություն:



Google Forms ձևերում հարցաշար պատրաստելիս հարցի բացատրությունը կարելի է ձևակերպել՝ ակտիվացնելով mote կոճակը և առավելագույնը 5 րոպե տևողությամբ ձայնային հաղորդագրություն թողնել հարցի ներքևի հատվածում:



Հարցաշարը ստանալով՝ սովորողները կարող են տեսնել հարցը և լսել դասավանդողի կողմից տրամադրված ձայնային մեկնաբանությունը:

Հարցաշարերը ստուգելիս սովորողներին տրվող հետադարձ կապը ավելի արագ դարձնելու համար կարող ենք ակտիվացնել Mote կոճակը և ձայնային հաղորդագրություն ուղարկել:



Սովորողները նույնպես ունեն հնարավորություն իրենց տեսակետը փոխանցել դասավանդողին՝ կիրառելով հավելվածը:



Google Classroom ուսուցման կառավարման հարթակում, երբ սովորողի աշխատանքը գնահատվում է միավորային գնահատման սանդղակով, դասավանդողը կարող է, ակտիվացնելով *Մեկնաբանություններ* բաժնում հայտնված Mote նշանը, արագ թողնել ձայնային մեկնաբանություն՝ հիմնավորելով իր կողմից դրված միավորը և սովորողին առաջարկելով բարելավման ուղիներ: Ձայնային հաղորդագրությունը *Հրապարակել* կոճակով ակտիվացնելով՝ այն հասանելի կդառնա հարթակում:



Հավելվածը կարելի է հեռացնել գրանցման հղումն ակտիվացնելով և ընտրելով *Հեռացնել* (Remove from Chrome) կոճակը:



Օժանդակ գործիքներից և ուսուցման կառավարման համակարգերից զատ, որոնք դյուրին են դարձնում բոլոր սովորողների ուսումնառությունը, գոյություն ունեն մուլտիմեդիա այլընտրանքներ, էլեկտրոնային գրքեր, կայքեր, որոնք հնարավորություն են տալիս դասավանդումը դարձնել ավելի արդյունավետ, իսկ ուսումնառությունը՝ ավելի գրավիչ և մատչելի: Ուսումնասիրենք դրանցից մեկը՝ PhET Interactive Simulations-ը, որտեղ ներկայացված են անվճար ինտերակտիվ ԲՏՃՄ սիմուլյացիաներ: Մոդելավորումները նախատեսված են ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, աշխարհագրության և մաթեմատիկայի համար: Դրանք լայնորեն կիրառվում են կրթության մեջ՝ տարրական դպրոցից մինչև համալսարանական մակարդակ:

Սիմուլյացիան ընդգրկում է մի շարք թեմաներ և թույլ է տալիս օգտվողներին տեղադրել փոփոխականները, դիտարկել արդյունքները և ուսումնասիրել պատճառահետևանքային կապերը վիրտուալ միջավայրում: Դրանք մշակվել են PhET Interactive Simulations նախագծի կողմից Կոլորադոյի Բոլդերի համալսարանում:

PhET-ի նպատակն է բարելավել ուսուցումը՝ սովորողներին տրամադրելով դինամիկ և ինտերակտիվ հարթակ՝ փորձեր կատարելու և ԲՏՃՄ հասկացությունների մասին ավելի խորը պատկերացում ունենալու համար:



Ներառական նախագծման շնորհիվ կայքն ունի այնպիսի հնարավորություններ, որոնք թույլ են տալիս ապահովել հասանելիություն և մատչելիություն բոլոր սովորողների համար: Հնարավորությունները ցուցադրված են ստորև տեղադրված նկարում:

Այսպիսով, օգտագործելով թվային տեխնոլոգիաների լայն հնարավորությունները, օրեցօր ավելացող թվային հարմարեցումները կրթության մեջ ներդնելով՝ կարելի է հասնել լավ արդյունքների՝ հարմարավետ և մատչելի միջավայր ստեղծելով բոլոր սովորողների համար: Դրանց օգտագործումը

հնարավորություն կտա խթանել համագործակցությունն ու հաղորդակցությունը ծնողների, մանկավարժների և սովորողների միջև:

Կրթության ոլորտում թվային տեխնոլոգիաների ինտեգրումը դինամիկ ուժ է՝ ունակ վերափոխելու ավանդական պարադիգմները և խթանելու ներառականությունը բոլոր սովորողների համար: Տեխնոլոգիաների հնարավորությունների ու ներառական կրթության գաղափարախոսության միահյուսումը բնութագրվում է բազմակողմանի մոտեցմամբ՝ օգտագործելով թվային գործիքները՝ մատչելիությունը բարձրացնելու, անհատականացված ուսուցումը բարելավելու, համագործակցային միջավայրը խթանելու համար: Տեխնոլոգիայի և ներառականության այս համադրությունը ոչ միայն բավարարում է սովորողների բազմազան կարիքները, այլև ստեղծում հարմարավետ կրթական միջավայր:

Թեև թվային տեխնոլոգիաների ինտեգրումը ներառական կրթության մեջ խոստումնալից է, սակայն պետք է հաղթահարվեն այնպիսի մարտահրավերներ, ինչպիսիք են թվային անջրպետը, հավասար հասանելիության ապահովումը և մանկավարժների համար համապատասխան վերապատրաստումները: Վերոնշյալ թվային գործիքների մասին լրացուցիչ տեսանյութեր զետեղված են «Դասավանդիր Հայաստան» և «ՅՈՒՆԻՍԵՖ» կազմակերպությունների կողմից ստեղծված դասընթացում, ԿՏԱԿ-ի *Հեռավար ուսուցման կենտրոն* հարթակում՝ «ՏՀՏ գործիքների կիրառումը ներառող դասավանդման համատեքստում» վերնագրով:

Այս ամենի վեկտորը ուղղված է դեպի շարունակական նորարարություն: Ակնկալվող միտումներ են առկա տեխնոլոգիաների կատարելագործումը, նոր օժանդակ գործիքների մշակումը և արհեստական բանականության ինտեգրումը անհատականացված ուսուցման ճանապարհին: Քանի որ տեխնոլոգիաները զարգանում են, մանկավարժներն ու քաղաքականություն մշակողները պետք է համագործակցեն՝ օգտագործելով թվային տեխնոլոգիաների ողջ ներուժը:

6 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ (ԿԵՆՑԱՂԱՅԻՆ, ԻՆՔՆԱՍՊԱՍԱՐԿՄԱՆ, ՇՓՄԱՆ, ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ)

Ներառական կրթությունը ԿԱՊԿ ունեցող երեխաներին հնարավորություն է տալիս բացահայտելու իրենց ներուժը և զարգացնելու մտավոր կարողություններն ու սոցիալական հմտությունները: Սոցիալական հմտությունների զարգացումը լիարժեք սոցիալական կյանքի կարևորագույն նախապայմանն է. այն առանցքային նշանակություն ունի անհատի ինքնուրույնության, տարբեր իրավիճակներին հարմարվելու, ճկունություն դրսևորելու առումներով: Առավել տարածված մարտահրավերներից մեկը ծանր և խորը ԿԱՊԿ ունեցող այն սովորողների սոցիալական հմտությունների զարգացումն է, որոնք ունեն վերբալ և ոչ վերբալ հաղորդակցման դժվարություններ, ինչը լրջագույն խոչընդոտներ է հարուցում անձի սոցիալականացման առումով: Բազմաթիվ հետազոտությունները վկայում են այն մասին, որ սոցիալական հմտություններն օգնում են ծանր և խորը ԿԱՊԿ ունեցող երեխաներին սոցիալական իրավիճակներում ավելի լավ կողմնորոշվել: Այնուամենայնիվ, սոցիալական հմտությունների զարգացումն անհատական բնույթ ունի՝ հաշվի առնելով յուրաքանչյուր սովորողի կարիքը, և հանգեցնում է սոցիալական հարմարվողականության տարբեր մակարդակների: Սոցիալական հմտություններն օգտագործվում են մարդկանց կողմից այլ մարդկանց հետ շփվելու և հաղորդակցվելու համար: Դրանք կարող են սահմանվել որպես այլ մարդկանց հետ շփումներ հաստատելու հմտություններ, որոնք դրսևորվում են սոցիալապես ընդունելի վարքագծով և երկուստեք օգտակար են:

Անչափ կարևոր է սոցիալական հմտությունների զարգացումը ԿԱՊԿ ունեցող սովորողներով դասարաններում: Սոցիալական և մշակութային արժեքներն ու վերաբերմունքը հատուկ կարիքներ ունեցող բնակչության նկատմամբ արտացոլված են սոցիալական համակարգում այդ անձանց նկատմամբ վերաբերմունքի ձևերում: Մինչև 19-րդ դարը հատուկ կարիքներ ունեցող անձինք հաճախ նախապաշարմունքների զոհ էին դառնում և անտեսվում: 1800-ական թվականներին սկսված սոցիալական շարժումները թույլ տվեցին առանձնահատկություններ ունեցող մարդկանց (հատուկ կարիքների սպեկտրի թե՛ բարձր, թե՛ ցածր լինելու դեպքում) ունենալ կրթական միջավայրի

հետ առնչվելու իրավունք: Այս ժամանակաշրջանում է, որ տարածվեցին սոցիալական շարժումները:

Որոշ հետազոտողներ սոցիալական հմտությունները ներկայացնում են որպես անձի սոցիալական կոմպետենտության բաղադրիչ, որն ունի բազմաչափ կառուցվածք և բաղկացած է ինտեգրված (համընկնող) և լրացնող կառուցվածքային տարրերից.

1) փոխազդեցության հմտություններ,
2) հաղորդակցման հմտություններ,
3) մասնակցայնություն,
4) հուզականություն,
5) սոցիալ-ճանաչողական հմտություններ:

Սոցիալական հմտությունների այս հիմնարար բաղադրիչները սերտորեն փոխկապակցված են: Հատուկ կարիքներ և/կամ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական հմտությունների ուսուցումը «առաջ գնալու» միակ ճանապարհն է, քանի որ նրանք աստիճանաբար ավելի ու ավելի են գիտակցում, որ դրանք ուղղակիորեն աղերսվում են ինքնուրույնության և հնարավորինս անկախ ապրելակերպի հետ: Սոցիալական հմտություններին չտիրապետելը կարող է հանգեցնել լրջագույն խնդիրների, և հակառակը՝ դրանց առկայության դեպքում սովորողները կարող են հաջողությունների հասնել դպրոցում և հասարակության մեջ: Սոցիալական, զգացմունքային և վարքի կառավարման հմտությունների զարգացումը սերտորեն կապված է կյանքի որակի բարձրացման հետ և նպաստում է երեխայի կոգնիտիվ, ինչպես նաև խնդիրները լուծելու, այլոց հետ փոխհարաբերություններ ձևավորելու հմտությունների զարգացմանը: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այն նաև կրթական ոլորտում հաջողություններ գրանցելու նախապայման է: Նման պարագայում էականորեն բարձրանում է նաև սովորելու ցանկությունը՝ մոտիվացիան:

ԿԱՊԿ ունեցող երեխաների առանձնահատկությունները բազմազան են. որոշ երեխաներ աջակցության ծառայություններ են ստանում աուտիզմի, ինտելեկտուալ և այլ առանձնահատկություններով պայմանավորված խնդիրները հաղթահարելու համար: Խնդիրները բարդանում են հատկապես այն դեպքերում, երբ նրա մոտ առկա են վերը թվարկված առանձնահատկություններից մի քանիսը միաժամանակ: Մտավոր զարգացմամբ պայմանավորված՝ ԿԱՊԿ ունեցող

անձինք հաճախ դժվարություններ են ունենում ընկերություն անելու, հարաբերություններ ստեղծելու և պահպանելու առումներով: Նրանց ընկերությունը հասակակիցների հետ հաճախ բնութագրվում է ավելի քիչ ջերմությամբ և մտերմությամբ, սակավ դրական փոխադարձությամբ, քան այն երեխաների պարագայում, ովքեր զերծ են մտավոր զարգացման առանձնահատկություններից: Ընկերական հարաբերություններ հաստատելու ունակությունների այս տարբերությունը վերագրվում է սոցիալական հմտությունների թերզարգացած լինելուն: Ծանր և խորը հատուկ կարիքներով կամ բազմակի խնդիրներ ունեցող երեխաները հաճախ զգալի դժվարություններ և հապաղումներ են ունենում հաղորդակցության սովորական ձևերը յուրացնելու հարցում, ինչպես, օրինակ՝ խոսելը, կամ չեն կարողանում զարգացնել հաղորդակցման հմտությունները և շփվել առանց մասնագիտացված միջամտությունների և օժանդակության: Հաշմանդամություն ունեցող բազմաթիվ սովորողների համար հաղորդակցությունը առաջնահերթ խնդիր է, քանի որ նրանք պետք է արտահայտեն իրենց կարիքներն ու ցանկությունները, հաստատեն սոցիալական հարաբերություններ, տեղեկատվություն ստանան և հաղորդեն, զարգացնեն սոցիալական մերձավորությունը, ինչպես նաև սոցիալական պարտականություններ ստանձնեն:

7 ՈՒՍՈՒՑՉԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

21-րդ դարում կրթական համակարգերը մեծապես հիմնվում են մանկավարժների մասնագիտական զարգացման՝ որպես կրթության որակի բարելավման առաջնային մեխանիզմի վրա: Կրթության ոլորտում հաջողության հասնելու համար անհրաժեշտ է ձևավորել և զարգացնել բարձրակարգ մասնագիտական-մանկավարժական կարողություններ և հմտություններ ունեցող ուսուցչական համայնք: Կրթական համակարգի արդյունավետության չափման հիմնական ցուցիչներից մեկը սովորողների ցուցաբերած արդյունքներն են, որոնց ձևավորման վրա էական ազդեցություն են գործում ուսուցիչների բարձրակարգ մասնագիտական-մանկավարժական կարողություններն ու հմտությունները:[1]

Մանկավարժների մասնագիտական զարգացման գործընթացը միտված է նրանց կոմպետենցիաների (գիտելիքներ, կարողություններ, հմտություններ) ու փորձի համալրմանը, կրթական բարեփոխումների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, մասնագիտական գործունեության նոր շարժառիթների ձևավորմանը, ինքնավստահության մակարդակի և ինքնագնահատականի բարձրացմանը, մասնագիտական կապերի և համագործակցության հաստատմանը:

«Ուսուցչի մասնագիտական զարգացում» հասկացությունը տարբեր երկրներում տարբեր կերպ է մեկնաբանվում՝ պայմանավորված այն հանգամանքով, թե ուսուցիչներն ինչ կրթություն են ստանում մինչև մասնագիտական աշխատանքային պարտականություններին անցնելը: Որքան էլ բարձրագույն մասնագիտական կրթությունը որակյալ լինի, այն չի կարող պատրաստել ուսուցիչներին հետագա մասնագիտական ողջ գործունեության ընթացքում մարտահրավերներին դիմակայելու և կրթության հարափոփոխ պահանջները բավարարելու համար: Հետևապես կրթության համակարգում կարևոր հիմնախնդիր է ուսուցիչների մասնագիտական զարգացման տարատեսակ հնարավորությունների ստեղծումը, որը կնպաստի որակյալ

[1] Առուստամյան Ա. Ուսուցչի դերը կրթության որակի կառավարման գործընթացում, «Այլընտրանք» գիտական հանդես, Երևան, 2019 դեկտեմբեր, էջ 223-226:

մանկավարժական մասնագիտական ներուժի ձևավորմանը:[2]

Ուսուցման քաղաքականության ինստիտուտի հետազոտողների կողմից ուսուցչի մասնագիտական զարգացումը սահմանվում է որպես մասնագիտական ծրագրերի ու միջոցառումների ամբողջություն, որը նպատակ ունի համալրելու նրա գիտելիքները, կարողությունները, հմտությունները, փորձառությունը և մասնագիտական գործունեության համար անհրաժեշտ մասնագիտական ու անձնային այլ որակները:[3]

Ըստ որոշ տեսաբանների՝ ուսուցչի մասնագիտական զարգացումը ներառում է ուսուցման ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ եղանակների միասնությունը:

Մասնագիտական զարգացման ֆորմալ եղանակներից են միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական մանկավարժական կրթությունը:

Մասնագիտական զարգացման ոչ ֆորմալ եղանակներից են՝

- որակավորման բարձրացման կրթական ծրագրերն ու դասընթացները,
- վերապատրաստումները և աշխատաժողովները (օրինակ՝ առարկայի դասավանդման մեթոդիկայի և/կամ դասավանդման գործընթացին առնչվող թեմաների ուսումնասիրություն),
- գիտաժողովները և սեմինարները (ուսուցիչներն ու հետազոտողները ներկայացնում են իրենց հետազոտությունների արդյունքները և քննարկում կրթության ոլորտի հիմնախնդիրները),
- հետազոտական և ճանաչողական այցեր դպրոցներ, կրթական գործունեություն իրականացնող այլ հաստատություններ,
- մասնագիտական ցանցերին ու խմբակներին անդամակցությունը,
- մենթորությունը և/կամ գործընկերային գնահատումը:

Մասնագիտական զարգացման ինֆորմալ եղանակը ենթադրում է՝

- մասնագիտական գրականության ընթերցում (մասնագիտական ամսագրեր, գրքեր, հետազոտություններ),
- մասնագիտական հետաքրքրությունների շրջանակներում ուսուցիչների անհատական և խմբային հետազոտություններ,

---

[2] Հակոբյան Ֆ., Ուսուցիչների մասնագիտական զարգացման առանձնահատկություններն ու արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ կրթության համակարգում, «Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի. Մանկավարժություն և հասարակական գիտություններ», Երևան, «Լինգվա», 2020, 2(53), էջ 45-60:

[3] Darling-Hammond L., Hyler M. E., Gardner M. Effective Teacher Professional Development, Palo Alto, CA: Learning Policy Institute, 2017.

- գործընկերների հետ ուսուցման բարելավման գործընթացի վերաբերյալ ինֆորմալ քննարկումներ:[4]

Քեմբրիջի միջազգային գնահատման կենտրոնն ուսուցչի մասնագիտական զարգացումը բնութագրում է մակրո և միկրո մակարդակներում՝ որպես ինքնավերլուծության, ինքնակրթության, անդրադարձի շարունակական գործընթաց, որը էական ազդեցություն է գործում կրթության որակի բարելավման վրա: Ըստ Կենտրոնի մոտեցման՝ ուսուցիչները զգալի արդյունքներ գրանցելու համար պետք է մշտապես համագործակցեն ոլորտային կազմակերպությունների հետ ազգային և միջազգային մակարդակներում (Տե՛ս Գծապատկեր 2):[5]



Գծապատկեր 1.

Ուսուցիչների մասնագիտական զարգացման մեկ այլ արդյունավետ և կառուցողական եղանակ է առաջարկել Գրեհեմ Գիբսը: Այն նպաստում է մասնագիտական և անձնային զարգացմանը, և որը լայնորեն կիրառվում է մի շարք ոլորտներում, ինչպիսիք են առողջապահությունը, կրթությունը,

[4] Հակոբյան Ֆ., Ուսուցիչների մասնագիտական զարգացման հիմնախնդիրներն ու դրանց լուծման ուղիները ՀՀ-ում, Երևանի պետական համալսարան, 2022, էջ 49-56:
[5] Education Brief: Teacher Professional Development, Cambridge assessment International Education, June 2021.

կառավարումը: Նա կարևորում է մշտական անդրադարձը կատարվող կամ կատարված աշխատանքին, քանի որ անձը սովորում է որոշակի իրավիճակներում ձեռք բերված փորձի մասին դատողություններ անելիս:

Ըստ նրա՝ ուսուցիչը պարբերաբար պետք է անդրադարձ կատարի իր անցած ուղուն՝ պատասխանելով որոշակի հարցերի (Տե՛ս Գծապատկեր 2):[6]

Այդպիսով ուսուցիչը սկսում է արժևորել իր գիտելիքներն ու կարողությունները, գտնում բարելավման ենթակա կողմերը և սկսում աշխատել այդ ուղղությամբ:

Գծապատկեր 2.

Վերլուծական անդրադարձը նպաստում է ինքնավերլուծական հմտությունների զարգացմանը: Այն մասնագիտական պատրաստվածության և շարունակական զարգացման հիմքն է: Ինքնավերլուծությունը կարևոր նախապայման է նաև ուսուցչի մասնագիտական ինքնության ձևավորման համատեքստում: Գոյություն ունեն ինքնավերլուծության բազմաթիվ տեսակներ, որոնցից են՝

- վերլուծություն դասից առաջ և հետո (reflection on action),
- վերլուծություն դասի ընթացքում (reflection in action),

[6] Gibbs Graham, Learning by Doing, A Guide to Teaching and Learning Methods, Oxford Centre for Staff and Learning Development at Oxford Brookes University, 1988.

- վերլուծություն գործողությունների համար (reflection for action),
- գործողությունների հետազոտություն, ուսումնասիրություն (action research):[7]

Որպեսզի ինքնավերլուծությունը լինի նպատակային, կարող է կիրառվել դասավանդման լավագույն փորձի ստուգաթեստ (մոտեցումներ, համընդհանուր դասավանդման մեթոդներ, չափելի և իրատեսական նպատակ, աշակերտների ներգրավվածություն և այլն): Ստուգաթեստի առկայության շնորհիվ ուսուցիչը կարող է մանրամասնորեն անդրադարձ կատարել դասապրոցեսի յուրաքանչյուր փուլին և բաղադրիչներին, գտնել բացթողումները, թերացումները և վերջիններիս շտկման ուղղությունները:

Պարբերաբար կատարվող ինքնավերլուծությունը հնարավորություն է տալիս ուսուցչին բացահայտել իր ուժեղ և թույլ կողմերը, կենտրոնանալ մասնագիտական զարգացման անհրաժեշտ ոլորտների վրա: Ինքնավերլուծության առավել կիրառելի եղանակներից են՝

- համատեղ դասավանդումը,
- փոխադարձ դիտարկումը,
- վերլուծական օրագիրը,
- սովորողի հետադարձ կապը,
- ձայնագրված կամ տեսաձայնագրված դասերը,
- գործողությունների ուսումնասիրությունը դասարանում,
- ընթերցանությունը և հետազոտությունը,
- ինքնագնահատման ստուգացանկը,
- գործընկերների աջակցությունը,
- վերլուծական դասապլանը:

Ընդհանուր առմամբ, ուսուցիչների մասնագիտական զարգացման վերոնշյալ եղանակները նպաստում են նրանց գիտելիքների, կարողությունների, հմտությունների և փորձառության մակարդակի կատարելագործմանը: Մասնագիտական զարգացման այս եղանակները երաշխիք են խթանելու սահմանված անհատական, ինստիտուցիոնալ և պետական նպատակների արդյունավետ և համալիր իրականացումը, հետևաբար նաև կրթության որակի և աշակերտների ուսումնառության գործընթացի արդյունավետության

[7] Kepalaitė, A. (2005). Pedagogo reeksijos ypatumai akademinėje situacijoje. Ugdymo psichologija, 14, 51-56.

շարունակական բարձրացումը:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանվում է «ուսուցչի մասնագիտական չափանիշ» հասկացությունը, որը մանկավարժական գործունեության գրեթե բոլոր գործառույթների, պատասխանատվության, կրթության որակի ապահովման համար հստակ կառուցակարգերի և չափանիշների ամբողջություն է: Այն բաղկացած է հաջորդականորեն միմյանցից բխող չորս բաղադրիչներից.

- զարգացման ոլորտներ,
- մասնագիտական գործունեության ձևեր,
- կարողունակության մակարդակներ,
- մանկավարժի բնութագրեր:

Սահմանված մասնագիտական չափանիշների մեջ ուսուցիչներից ակնկալվող կարողունակություններն են.

- առարկայական գիտելիքների զարգացում,
- դասընթացների, դասերի պլանավորում և վարում,
- ռեսուրսների կառավարում, ՏՀՏ ինտեգրում,
- 21-րդ դարի հմտությունների խթանում,
- սովորողների կարիքների բացահայտում և ուսումնառության գնահատում,
- ուսումնական գործընթացի ներառականությունն ու մասնակցայնությունն ապահովող կարողությունների զարգացում,
- մասնագիտական զարգացման համար պատասխանատվության ստանձնում,
- կրթության ոլորտի օրենսդրության և պրակտիկայի իմացություն,
- մասնագիտական բարեվարքություն, ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակության ապահովում:[8]

Ուսուցիչների՝ սահմանված մասնագիտական չափանիշներին համապատասխանության դեպքում Հայաստանի Հանրապետությունում հանրակրթական հաստատությունների կողմից տրամադրվող կրթության որակը էականորեն կբարելավվի, եթե պետական քաղաքականություն իրականացնող

[8] Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի մասնագիտական չափանիշները սահմանելու մասին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի N 30-Ն Հրաման, 2022թ. Օգոստոս:

մարմինների կողմից կատարվեն համակարգի արդյունավետության գնահատման մշտադիտարկումներ, ապահովվեն ծրագրի շարունակականության, ուսուցչական անձնակազմի համար նախատեսված արդար և թափանցիկ խրախուսանքի և պատասխանատվության ընթացակարգեր (դպրոցի տնօրինության կողմից սահմանված դասալսումներ, աշակերտների կողմից տրվող հետադարձ կապ, դասի պլանավորումներ, ՏՀՏ կիրառումների մշտադիտարկում և այլն):

Մանկավարժական պրակտիկայում ռուբրիկն ուսուցանող գնահատման գործիք է, որն օգտագործվում է դասավանդողների կողմից՝ սովորողների կատարողականը չափելու համար՝ հիմնվելով նախապես մշակված չափանիշների վրա: Ռուբրիկները կարող են օգտագործվել տարատեսակ առաջադրանքների գնահատման համար՝ ներառյալ գրավոր առաջադրանքները, շնորհանդեսները, նախագծերը և ելույթները (բանավոր խոսքը):

Ռուբրիկը կարող է բաղկացած լինել մի քանի բաղադրիչներից.

Չափանիշներ: Սրանք գնահատման ենթակա առաջադրանքի հատուկ կողմերն են, որոնք ներառում են բովանդակության իմացությունը, կազմակերպումը, ստեղծագործականությունը կամ ներկայացման հմտությունները:

Կատարման մակարդակներ: Ռուբրիկի անբաժանելի մասն է սանդղակը, որը նկարագրում է կատարողականի տարբեր մակարդակներ յուրաքանչյուր չափանիշի համար: Այս մակարդակները կարող են տատանվել գերազանցից մինչև վատ: Դրանք կարող են կազմված լինել նկարագրական արտահայտություններից կամ թվային արժեքներից՝ ցույց տալու համար, թե որքանով է սովորողը համապատասխանում այս կամ այն չափանիշին:

Նկարագրություն, ակնկալիքներ: Կատարողականի յուրաքանչյուր մակարդակ ուղեկցվում է ակնկալիքների նկարագրությամբ, որոնք հստակեցնում կամ պարզաբանում են, թե ինչ է պահանջվում այդ մակարդակին հասնելու համար: Այն օգնում է ինչպես սովորողներին, այնպես էլ մանկավարժներին հասկանալ, թե ինչ է սպասվում կատարողականի յուրաքանչյուր մակարդակում:

Հստակություն և թափանցիկություն: Սրանք գնահատման հստակ չափանիշներ են, որոնց նպատակն է պարզ ձևով ներկայացնել սովորողներին, թե ինչ է ակնկալվում իրենցից: Սա կարող է օգնել ուսանողներին կենտրոնանալ կոնկրետ նպատակների վրա:

Արդարություն և հետևողականություն: Ռուբրիկի այս չափանիշի նպատակն է շարադրանքի միջոցով ապահովել, որպեսզի յուրաքանչյուր սովորող գնահատվի նույն չափանիշով: Այս չափանիշը կօգնի նաև նվազագույնի հասցնել սուբյեկտիվ դատողությունը՝ տրամադրելով գնահատման հստակ ուղեցույցներ:

Հետադարձ կապ և բարելավում: Այս դեպքում ուսուցիչները կարող են

կառուցողական հետադարձ կապ տրամադրել ուսանողներին՝ ընդգծելով նրանց ուժեղ և բարելավման կարիք ունեցող կողմերը: Այն կարող է օգնել ուսանողներին աշխատել իրենց հմտությունների վրա:

Ժամանակի խնայողություն: Ռուբրիկը կարող է օգնել ուսուցիչներին խնայել ժամանակը, քանի որ այն աշակերտի աշխատանքը գնահատելու կառուցվածքային և կազմակերպված միջոց է: Ուսուցիչները կարող են հղում կատարել ռուբրիկին՝ արագորեն գնահատելու առաջադրանքի յուրաքանչյուր կողմը՝ առանց յուրաքանչյուր աշակերտի համար առանձին չափանիշների նոր շարք ստեղծելու:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ կարող ենք փաստել, որ ռուբրիկների ճշգրիտ օգտագործումը ոչ միայն նպաստում է ուսուցիչների և աշակերտների աշխատանքի արդյունավետության բարձրացմանը, այլև ուղղակի ազդեցություն ունենում կրթության որակի վրա:

Ուսուցիչների համար ռուբրիկը կարևոր աշխատանքային գործիք է, սովորողների կատարողականը գնահատելու հստակ, չափելի և թափանցիկ միջոց: Ռուբրիկները հստակեցնում են գնահատման չափանիշները, ինչպես նաև ուսուցիչներին հնարավորություն տալիս աշակերտների՝ նույն բովանդակությամբ կատարած աշխատանքները գնահատել արդեն իսկ սահմանված չափորոշիչներին (բովանդակություն, գծագիր, աշխատանքի արագություն, քարտեզագրում և այլն) համապատասխան՝ ձևավորելով դասընթացի պլանավորման ընթացակարգեր, գնահատման հիմնավոր և հավասար միջավայր:

Միևնույն ժամանակ ռուբրիկը ուսուցիչների համար կառուցողական հետադարձ կապ տրամադրելու գործիք է: Այն գնահատման գործընթացը դարձնում է ավելի թափանցիկ և արդար: Ռուբրիկ կարող է մշակվել թե՛ անհատական աշխատանքների, թե՛ առանձին խմբերի կամ ողջ դասարանի համար:

Սովորողների համար այն յուրատեսակ հաղորդակցման միջոց է, որն օգնում է նրանց աշխատանքների մեկնարկից առաջ հասկանալ, թե ինչ է ակնկալվում իրենցից: Այն հնարավորություն է տալիս աշակերտներին որոշակի պատկերացում կազմել իրենց գիտելիքների վերաբերյալ, ինքնուրույն հասկանալ իրենց բացթողումները և փորձել աշխատել դրանց բարելավման ուղղությամբ: Ռուբրիկի կիրառումը դասապրոցեսի ընթացքում նպաստում է սովորողների

ինքնագնահատման և ինքնավերլուծության հմտությունների ձեռքբերմանը:

Ռուբրիկներ կարող են կիրառվել նաև դպրոցի տնօրինության, մենթորների և/կամ այլ ուսուցիչների կողմից դասալսումներ իրականացնելիս: Դասալսման ռուբրիկը կիրառվում է դասալսումների ընթացքում ուսուցչի դասավանդման և առաջնորդական հմտությունները գնահատելու համար: Նման ռուբրիկները մանրամասն անդրադառնում են դասապրոցեսի բոլոր փուլերին, արդյունքներին, դրա ընթացքում փոխանցվող արժեքներին ու հմտություններին:

Հայաստանի կրթական միջավայրում ռուբրիկների մշակումն ու ներդրումը մեծ չափերի հասավ հատկապես վերջին տարիներին: Տարբեր ռուբրիկներ են մշակվել և ներդրվել, մասնավորապես, Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի, Դասավանդի՛ր Հայաստան-ի, ԿԶՆԱԿ-ի կողմից:

9 ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐ

Դասալսումն ուսումնական գործընթացի որակի նպատակային կատարելագործման մեխանիզմ է, որը ներառված է դասավանդողի անհատական պլանում՝ ուսումնամեթոդական աշխատանքների բաժնում: Դասալսումները պետք է լինեն նպատակային, հակառակ դեպքում դրանք բացասաբար կանդրադառնան ուսուցման գործընթացի կազմակերպման վրա, կառաջացնեն ավելորդ լարվածություն ուսուցչի ուժեղ և բարելավման ենթակա կողմերը վեր հանելու փոխարեն:

Դասալսումների անցկացման հիմնական նպատակներն են.

- կատարելագործել ուսումնառության գործընթացը և բարելավել դասավանդման որակը,
- նպաստել ուսուցիչների մանկավարժական վարպետության աճին, ինչպես նաև պրոֆեսիոնալիզմին,
- պարբերաբար ուսուցիչներին տրամադրել անհրաժեշտ մասնագիտական և մեթոդական օգնություն,
- ապահովել դասավանդման մեթոդների համապատասխանությունը կրթական վերջնարդյունքներին,
- տարածել դասավանդման լավագույն փորձը,
- նպաստել աշակերտակենտրոն միջավայրի ստեղծմանը:

Դասալսողի խնդիրն է ուսումնասիրել, վերլուծել և գնահատել.

- ուսուցչի մասնագիտական և մանկավարժական որակները,
- դասավանդողների հմտությունները, որոնք կնպաստեն դասապրոցեսի արդյունավետ կազմակերպմանը,
- կիրառվող դասավանդման և ուսումնառության մեթոդները,
- տրամադրվող ուսումնաօժանդակ նյութերը,
- ուսուցիչ-աշակերտ համագործակցության մակարդակը,
- աշակերտների անմիջական վերաբերմունքը դասապրոցեսին:

Դասալսման արդյունքները հնարավորություն են տալիս՝

- վեր հանել ուսուցչի մասնագիտական և մեթոդական կարիքները,
- կազմել անհրաժեշտ վերապատրաստումների թեմաները,
- նպաստել ուսուցիչների միջև մասնագիտական և մեթոդական փորձի

փոխանակմանը,

- ուսումնասիրել և տարածել դասավանդման լավագույն փորձը:

Դասալսման ժամանակ դասալսողը պետք է հետևի ոչ միայն ուսուցչի փորձին, այլև աշակերտների պատասխան գործողություններին:

Դասալսման միջոցով հնարավոր է բացահայտել նաև ուսուցչի ընդհանուր կարողություններն ու պատրաստվածությունը: Գոյություն ունեն դասալսումների մի շարք այլընտրանքային մեթոդներ, որոնցից անդրադարձ կկատարենք.

- «Փոխադարձ դասալսում»,
- «Քոուչինգ դասալսում»,
- «Համագործակցային զույգ»,
- «Մանկավարժական ճամփորդություն»

մեթոդներին:

«Փոխադարձ դասալսում» մեթոդ

Փոխադարձ դասալսումները հնարավորություն են ստեղծում առաջավոր փորձի ընդհանրացման, տարածման համար, ձևավորում արդյունավետ համագործակցություն ուսուցիչների միջև:

Փոխադարձ դասալսումները նպաստում են ստեղծագործական կարողությունների զարգացմանը: Որքան էլ բանիմաց լինի ուսուցիչը, այդպիսի դասալսումների ժամանակ նրա մոտ առաջանում են նոր գաղափարներ, մտքեր, պատկերացումներ, և նա դրանք վերարտադրելով՝ կիրառում է մանկավարժական գործունեության ընթացքում: Յուրաքանչյուր դասաժամ ստեղծագործական գործունեություն է: Փոխադարձ դասալսման արդյունքում դասալսող ուսուցիչը, հետազոտելով, դասից վերցնում է այն, ինչն իր մոտ բացակայում է: Այն հետագայում կարող է էլ ավելի բարձրացնել իր դասավանդման որակը: Փոխադարձ դասալսման գնացող յուրաքանչյուր ուսուցիչ պետք է իրեն հարց տա՝ «Ինչու՞ եմ գնում», «Ի՞նչ եմ ցանկանում դիտարկել»:

Սկզբունքներ փոխադարձ դասալսումների և ուսուցիչների համագործակցության վերաբերյալ

1. Նախօրոք ուսուցչին տեղյակ պահել դասալսման մասին:
2. Դասը քննարկելով՝ այն պետք է ոչ թե քննադատել, այլ վերլուծել:

3. Թերությունները ոչ թե ի ցույց դնել, այլ նրբանկատորեն նշելով դրանք՝ շտկելու ուղիներ մատնանշել:
4. Թե՛ ուսուցիչը, թե՛ դասալսողը պետք է քաջատեղյակ լինեն ծրագրերին, թեմատիկ պլանավորմանը, դասապլանին:

«Քոուչինգ դասալսում» մեթոդ

Քոուչինգը ժամանակակից հոգեբանության նոր ուղղություն է: Այն ի հայտ է եկել դեռևս 1980-ական թվականներից: Քոուչինգն այսօր հաջողությամբ ներառում է կրթության, մենեջմենթի, սպորտի, հոգեբանության և փիլիսոփայության ձեռքբերումները:

Ո՞րն է քոուչինգի առանձնահատկությունը:

Քոուչը (քոուչինգ իրականացնող մասնագետը) չի տալիս կոնկրետ հանձնարարականներ և ցուցումներ: Նա անձի մեջ ակտիվացնում է ձգտումը դեպի հաջողություն՝ հենվելով այցելուի անհատական դրական փորձի վրա:

Քոուչ-մասնագետի խնդիրն է աջակցել այցելուին արդյունավետ վարք ձևավորելու իր գործունեության այս կամ այն ոլորտում (բիզնես, կարիերայի կառուցում, անձնական կյանք): Հենց այս սկզբունքի վրա են հիմնված քոուչինգ դասալսումները: Որպես քոուչ-դասալսող՝ հիմնականում հանդես են գալիս տվյալ ոլորտին գերազանց տիրապետող ուսուցիչները: Դասալսման էությունը կայանում է նրանում, որ դասալսողն ուղղակի լսում է դասն ու նկարագրում այն իր ձևաթղթում: Նա որևէ դրական կամ բացասական դիտարկում չի գրառում, սակայն դասի այն հատվածներում, որտեղ առկա է թերացում, նշում է որոշակի հարց: Այնուհետև քննարկման ժամանակ քոուչ-դասալսողը հարցադրման միջոցով փորձում է օգնել, որպեսզի նա, ում մոտ դասալսում է իրականացվել, ինքը դուրս բերի իր թերացումը: Եթե առաջին հարցով դրան հասնել չի հաջողվում, հարցերը մանրացվում են այնքան՝ մինչև գործընկերը դուրս բերի բարելավման կետը: Քննարկման ավարտին առանձնացվում են բարելավման ուղղություններ և մշակվում քայլեր՝ դրանց հասնելու համար: Իսկ դասալսումն իրականանում է քոուչինգի համար նախատեսված ձևաթղթով, որին կարող եք ծանոթանալ ստորև տեղադրված QR-ի միջոցով:

«Համագործակցային զույգ» մեթոդ

Այս մեթոդի էությունն այն է, որ ուսուցիչները, ովքեր պետք է իրականացնեն փոխադարձ դասալսումներ, նախապես զույգեր են կազմում: Զույգի անդամները տևական ժամանակ լսում են միմյանց դասերն ու քննարկման միջոցով դուրս բերված բացթողումների վրա մշակում լուծման տարբերակներ: Զույգի անդամները սովորում են միմյանցից և օգնում միմյանց հաղթահարել դժվարությունները: Նրանց կցվում է դասալսման քննարկումները կազմակերպող մանկավարժ: Զույգով աշխատանքի արդյունավետ ընթացքի դեպքում համագործակցային խմբի անդամների թիվը կարելի է մեծացնել:

Ինչո՞վ է տարբերվում այս մեթոդը ավանդական դասալսումից

Այս պարագայում նույն մարդիկ տևական ժամանակ աշխատում են միմյանց հետ, և այդ ընթացքում ձևավորվում է վստահության մթնոլորտ, ինչն էլ թույլ է տալիս ավելի օբյեկտիվ ու կառուցողական իրականացնել դասալսումներն ու քննարկումները:

Ի՞նչ սկզբունքով կազմել համագործակցող զույգ

Զույգ կազմելու հիմնական սկզբունքներն են.

- Զույգում ներգրավված երկու ուսուցիչները նույն տարիքի են:
- Զույգում ներգրավված երկու ուսուցիչներն էլ ունեն նույն աշխատանքային փորձը:
- Զույգում ներգրավված ուսուցիչները դասավանդում են տարբեր առարկաներ:

Այս սկզբունքներն ապահովում են համագործակցողների՝ հավասար հարթություններում գտնվելը, բացառում տարիքային տարբերությամբ պայմանավորված մտածողության բախումները, մյուս կողմից էլ տարբեր առարկաներ դասավանդելու դեպքում ուսուցիչները դասալսման ընթացքում չեն կենտրոնանում առարկայական մասնագիտական որակների, նյութի բովանդակության վրա, ինչը հնարավորություն է տալիս դիտարկել դասի մյուս ասպեկտները:

Դասալսմանը հաջորդող քննարկման սկզբունքները

- Յուրաքանչյուր զույգ ունի կազմակերպող ուսուցիչ, ով համակարգում է դասալսման քննարկումը:
- Քննարկումը կատարվում է 48 ժամվա ընթացքում:
- Քննարկման ժամանակ կենտրոնանում են դասի, այլ ոչ ուսուցչի վրա:
- Զերծ են մնում պիտակավորումներից:

«Մանկավարժական ճամփորդություն» մեթոդը

Այս մեթոդը հարմար է կիրառել այն պարագայում, երբ ցանկանում ես բացահայտել դասի որևէ կոնկրետ բաղադրիչ՝ օրինակ կարգապահությունը, ներգրավվածությունը, նոր մեթոդի կիրառությունը և այլն: Մեթոդը հարմար է կիրառել տարվա ընթացքում առավելագույնը չորս անգամ՝ նախապես պլանավորելով, թե ինչը պետք է լսել և քննարկել: Երկու դասալսում կատարվում է առաջին կիսամյակում, երկուսը՝ երկրորդում: Այս եղանակով դասալսման համար կազմվում է ուսուցիչների փոքր խումբ, ովքեր պետք է կարճ ժամանակահատվածում մեծ թվով դասալսումներ իրականացնեն: Խմբերը մտնում են դասարաններ, ամեն դասարանում կարող են մնալ 15 րոպե, կատարել նշումներ, այնուհետև անցնել հաջորդ դասարան: Ստացվում է, որ մեկ դասաժամի ընթացքում նրանք կարող են երեք ուսուցչի մոտ դասալսում կատարել և ուսումնասիրել հետաքրքրող ոլորտը: Դասալսման և քննարկման կարևոր նախապայմաններն են.

- Բոլորը հստակ գիտեն, թե որ ասպեկտն են ուսումնասիրում:
- Յուրաքանչյուր ուսուցչի մոտ մնում են առավելագույնը 15 րոպե:
- Քննարկման ժամանակ ուսուցչի անունը չի նշվում, նշում են միայն փաստեր և թվեր (օրինակ այսօրվա ճամփորդության ընթացքում մեզ հանդիպած 30 աշակերտներից 22-ը կենտրոնացած էին դասի վրա, մյուս 8-ը զբաղված էին այլ բաներով):
- Վեր են հանում առկա վիճակն ու մշակում այն բարելավելու եղանակներ:

Յուրաքանչյուր ասպեկտի ուսումնասիրությունից հետո կատարվելու է արդյունքների վերլուծություն, ըստ այդմ բխեցվելու են այն քայլերը, որոնք նպաստելու են բացահայտված թերացումների շտկմանը:

Օրինակ՝ բոլոր դասարաններում ուսումնասիրությունը ցույց տվեց, որ 50

աշակերտներից 20-ը պատասխանում է տեղից, ընդհատում ընկերոջը: **Եզրակացություն՝** դասարանային մշակույթի ձևավորումը լիարժեք չէ:

Այս այլընտրանքային դասալսումները միտված են փոխելու դասալսումների վարչական, երբեմն վարչարարական բնույթը՝ այն դարձնելով առավել հետաքրքիր, ինտերակտիվ, զարգացնող, համագործակցային գործընթաց: Այն փոխելու է նաև դասալսումների մասին առկա թյուր պատկերացումները՝ դրանք վերածելով ստեղծարար, գրավիչ, համագործակցային գործընթացի: Ապահովելու է ուսուցիչների առավել սերտ շփումը՝ միևնույն ժամանակ զինելով նրանց ժամանակակից մանկավարժական մեթոդներով՝ նպաստելու աշակերտների ակադեմիական և վարքային առաջընթացին:

Օժանդակ հավելվածներ. *Դասալսման թերթիկին և վերլուծության արձանագրության ձևանմուշին կարող եք ծանոթանալ սկանավորելով հետևալ QR կոդը:*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Առուստամյան Ա., Ուսուցչի դերը կրթության որակի կառավարման գործընթացում, «Այլընտրանք» գիտական հանդես, Երևան, 2019 դեկտեմբեր, էջ 223-226:
2. Գրիգորյան Լ., «Մեդիագրագիտության հինգ հարցերը. ինչպե՞ս վերլուծել տեղեկություններ», Մեդիա նախաձեռնությունների կենտրոն, 2019:
3. «ԿԶՆԱԿ» հիմնադրամի պաշտոնական էջ: Քանի՞ դասալսում պետք է անել, https://kznakhimnadram.blogspot.com/2023/10/blog-post_24.html (11.11.2023):
4. Հակոբյան Ֆ., Ուսուցիչների մասնագիտական զարգացման առանձնահատկություններն ու արդյունավետության բարձրացման ուղիները ՀՀ կրթության համակարգում, «Բանբեր Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի. Մանկավարժություն և հասարակական գիտություններ», Երևան, «Լինգվա», 2020, 2(53), էջ 45-60:
5. Հակոբյան Ֆ., Ուսուցիչների մասնագիտական զարգացման հիմնախնդիրներն ու դրանց լուծման ուղիները ՀՀ-ում, Երևանի պետական համալսարան, 2022, էջ 49-56:
6. Հարությունյան Մ., «Լրագրողական էթիկան գործնականում. մեդիայի ինքնակարգավորման մեխանիզմները», Մեդիա նախաձեռնությունների կենտրոն, 2022.- 200 էջ:
7. Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի մասնագիտական չափանիշները սահմանելու մասին ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի N 30-Ն Հրաման, 2022թ. օգոստոս:
8. Մորիկյան Ա., «Ժուռնալիստիկա. ի՞նչ, ինչպե՞ս, ինչո՞ւ», Երևանի մամուլի ակումբ, 2006 - 299 էջ:
9. Օրենք, Հ. ի. (25 10, 2023). Հանրակրթության մասին օրենք. Առբերված է Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ: https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908-hg:
10. Օրենք. (25 10, 2023). Հանրակրթության մասին օրենք. Առբերված է

Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ https://www.arlis.am/documentview.aspx?docid=71908-ից:

11. Օրենք, Հ. մ. (15 08, 2009). Հանրակրթության մասին օրենք. Առբերված է Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ https://www.arlis.am/documentview.aspx?docid=173821-ից
12. ww.arlis.am. (23 11, 2023). *Հանրակրթության մասին օրենք*. Առբերված է ww.arlis.am:
13. https://www.arlis.am/documentview.aspx?docid=173821-ից:
14. Адель Фабер, Э. М. (2016). *Как говорить с детьми, чтобы они учились*. Эксмо.
15. Гераскина Л.Ю., Обобщение опыта работы с родителями учителя начальных классов - 2020 г.
16. Куксо Е.Н., Серия «Библиотека журнала «Директор школы» Десять эффективных способов улучшения качества преподавания в школе, Москва 2016.
17. Марьяна Безруких, Родитель и Учитель. Как понять друг друга и помочь ребенку / Рама Паблишинг, 2010 г.
18. Родительские собрания в начальной школе. Советова Е. В. / Издательство «Феникс» 2014 г.
19. Современная работа с родителями в начальной школе. Перекатьева О.В. - 2004 г.
20. Фрэнсис Э. Дженсен, Э. Э. (2021). Мозг подростка. Спасительные рекомендации нейробиолога для родителей тинейджеров. , Глава 1. Начало подросткового периода (էջ 380). Бомбора.
21. E-book Parent Involvement / From informing to collaboration Peter de Vries - August 2013
22. Working with Parents: A Guide for Education Professional. By Carmel Digman & Sue Soan -2008
23. Working With Parents

24. Building Relationships for Student Success Paperback – November 23, 2005

25. Pete Dudley. Lesson Study, Cambridge, 2011.

26. The Inclusive Design Research Centre (https://idrc.ocadu.ca/)

27. The National Center on Accessible Educational Materials (https://aem.cast.org/)

28. The Universal Design for Learning (UDL) Center (https://udlcenter.org/)

29. The UNESCO Institute for Information Technologies in Education (https://iite.unesco.org/)

30. The Inclusive Education Canada website (https://inclusiveeducation.ca/)

31. The interactive simulation for Science and Math https://phet.colorado.edu/en/inclusive-design

32. https://dlc.armedu.am/login/index.php

33. https://yourdolphin.com https://yourdolphin.com/Technical-Information#Category98

34. https://www.arlis.am/documentview.aspx?docid=167157

35. Education Brief: Teacher Professional Development, Cambridge Assessment International Education, June 2021.

36. Darling-Hammond L., Hyler M. E., Gardner M. Effective Teacher Professional Development, Palo Alto, CA: Learning Policy Institute, 2017.

37. Gibbs Graham, Learning by Doing, A Guide to Teaching and Learning Methods, Oxford Centre for Staff and Learning Development at Oxford Brookes University, 1988.

38. Kepalaitė, A. (2005). Pedagogo reeksijos ypatumai akademinėje situacijoje. Ugdymo psichologija, 14, 51-56.

39. City E.A., Elmore R.F., Fiarman S.E., Teitel L. Instructional Rounds in Education: A Network Approach to Improving Teaching and Learning. Cambridge, Harvard Education Press, 2009.

40. Coaching teachers, https://www.coursera.org/learn/coaching-teachers (11.11.2023).

41. Efron, S. E., Ravid, R. Action research in education: A practical guide. Guilford Press, 2013.

42. https://urok.1sept.ru/articles/672177

43. https://nsportal.ru/nachalnaya-shkola/vospitatelnaya-rabota/2017/11/29/formy-raboty-s-roditelyami-v-sovremennoy-shkole

44. https://znanio.ru/media/novye-formy-raboty-s-roditelyami-2614673

45. https://appkk.ru/info/blog/konflikt_uchitel_roditel/

46. /https://www.arlis.am/documentview.aspx?docid=74345 /

47. http://factradar.tilda.ws/fact_checking#rec76557140

48. https://media.am/hy/lab/2020/03/13/17887/

49. https://media.am/hy/medialiteracy/2020/01/22/21332/

50. https://media.am/hy/critique/2019/11/21/18152/

51. https://media.am/hy/lab/2022/08/29/33843/

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՆԵՐԱՌՈՂ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ 2

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՀԱՄԱՐ